



ԺԲ. ՏԱՐԻ

ԹԻԻ 12

ԴԵԿՏԵՄԲԵՐ 1973

ed by A.R.A.R.®



# Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ժ.Ք. ՅԱՐԻ, ԽԻՒՒ ԺԶ

Գ Ե Կ Ո Ս Մ Ա Ր Ի 1978

ՊԵՐՈՒԹ


## ԲԱՆԱՍՏԵՂԾ

## Ս Ո Ւ Ր Բ Ը



Այս տարի, հայրենի աշխարհէն մինչև Սփիւռքի հեռաւոր ծաղերը՝ վերհրատարակութիւններով, մենագրութիւններով, դրոշմաթուղթերով, յատուկ կոնդակներով, բացառիկ թիւերով ու հանդիսութիւններով տօնուեցաւ մահուան 800ամեակը երկարաշունչ, բաղբրաշունչ, լուսապաշտ ու լուսավառ Ներսէս Շնորհալիի, որ անցնող ութ հարիւր տարիներուն ընկերացաւ բոլոր սերունդներուն, սեղ ունեցաւ անոնց առօրեային մէջ եւ հասաւ մեզի՝ մեծերուն վայել փառքով մը:

Հովիւ քաջ, հաշտարար գործիչ, մատենագիր, մեկնիչ, իր անձին հմայքով ու գործին ծաւալով ամբողջ կէս դար մը լեցուցած Շնորհալին այս էջերուն մէջ առաւելագոյն չափով մը մեզ կը շահագրգռէ իր ստեղծագործական երակով, իր վաստակին այն մասով, որ դուրս եկաւ իր ժամանակէն ու խառնուեցաւ սերունդներու երթին: «Ոտանաւոր տաղիւ չափոյ» գրած իր 15 հազարէ աւելի տող հաշուող ժառանգութեան մէջ տասնըհինգէն աւելի չեն հաւանարար այն կտորները, որոնք կը սնանին հայրենական սուրբերու եւ սրբութիւններու վսեմ խորհուրդով, մարդկայնական ծովածաւալ ապրումներով, լոյսին մատուցուած աննախընթաց պատարագներով, ու կը ցոյցնեն նոյն ատեն բազմաշնորհ իր անձին արարչագործ իսկութիւնը: «Ոտանաւոր տաղիւ չափոյ» գրուած իր միւս ու ընդարձակ գործը արժէք ունի



digitised by A.R.A.R.®

Հաւանաբար ուրիշ գետիներու վրայ, բայց ոչ գրականութեան մէջ, որ տարբեր չափերով կը շափուի:

Այսօրուան մարդը, որ դուրս եկած է յանգի եւ չափի բռնութիւններէն եւ դժուար կը կաշառուի այդ մարդերուն մէջ յայտնաբերուած նոյնիսկ մեծ ճարտարութիւններէն, երբ կը հեռանայ եկեղեցիէն, կը թօթափէ միջնորդութիւնն ու եղանակներուն նպաստը ու կը փնտռէ իրեն անծանօթը, նորը, անկրկնելին ու անկործանելին, չի կրնար խաղաղութեամբ ընկալել ո՛չ միայն Շնորհալիի պատմական, դաւանաբանական կամ այլ հարցեր ընդգրկող չափաբանութիւնները, այլեւ, օրինակ անոր ամէնէն սիրուած կտորներէն «Նարատնդծեալ»ի սա հատուածը.

Սէրրդ սիրով խնարհեցար,  
Ի փրկութիւն մեր մարմնացար.  
Նովին մարմնովրն խաչեցար,  
Ի գերեզման մահու եղար.  
Այսօր յարեար աստուածաբար՝  
Ի հրեշտակաց քարոզեցար.  
Եկայք, փրկեալք ընդ զուարթնոյն,  
Տո՛ւք օրհնութիւն յարուցելոյն:

Առաջին տողէն զատ («Սէրրդ սիրով խնարհեցար»), որ պատկերաւոր կառույց մը ունի եւ լեզուական պերճութիւն մը, միւս բոլորը ոչինչ կը բերեն իբրեւ խորքի նորութիւն եւ իբրեւ արուեստ դժուար է կրել անոնց յոգնեցուցիչ բեռը: Շնորհալիի շնորհներէն զուրկ մնացած տողերու պարզունակ յաջորդականութիւն մը պարզապէս: Այդքան բան իր շրջանին եւ իրմէ առաջ Աւետարան կարդացած ու միտք պահածը ա՛յդ մերկութեամբ քով քովի կրնար դնել սպահովաբար ռեւէ տիրացու: Բայց իրմէ առաջ ո՛չ ոք կրցած էր եւ իրմէ ետք ո՛չ ոք յաջողեցաւ իր խորութեամբ ու մայրիչութեամբ ընթացել, շնորհագարդել, նորահրաշ պսակել Վարդանի սերունդին ընտելացոյն այրերը, որոնց դիմաց ամբողջ ապրում է ինք, պաշտամունք, քաղցրագին ձայն, իմաստի աղբերացում, երկնայինին հետ՝ երկրային աստուածութեան մը առջեւ յափշտակեալ քուրմ, որ կը մատուցանէ մէկը իր գերագոյն պարագաներէն, արիւնի ու ծաղիկի բոյրերուն, բարութեան ու լոյսի ճառագայթումներուն, գրհարբութեան ու հազար առաքինութիւններու մոզական հանդէսի մը մէջ խոհական իմաստութեամբ մը սրբացնելով արի իր պապերը, արիարար «քնդ անմարմնոցն» դասակից հոչակելով զանոնք:

Ըսել կ'ուզենք՝ Աստուծոյ պարզ պաշտօնեաներէն մէկը չէ Շնորհալին հոս, կամաւոր ողջակիզման, բարութեան ծովուն, հոգիին միջնորդութիւն մէջ ինքզինք նետած կրօնականը սեփական հողի մը եւ ժողովուրդի մը կապուած բուռն անհատականութիւնն է նոյն ատեն, որ Հայրենիքը սուրբերով լի տեսնելու եւ սուրբերը պսակելու հրավառ իղձով կը պրպակ պատմութիւնը, կը նայի աշխարհին, կ'ազօթէ, կ'երգէ ու կը գրէ:

36 լեզուներու թարգմանուած ու գրական միջազգային հրահանգներու կողմէ հռչակուած անգամ իր «Հաւատով խոստովանի-

Վ»ը ան չէ զրկած ցեղային երանդէն: Հոն է հայ մարդը իր ժառանգական գիծերուն ողջ մարդկայնութեամբը, աշխարհահայեացքով ու բարութիւնը ապրելու իր անհերքելի իրականութեամբ: Ի վերջոյ, միւսներէն աւելի մե'ր ժողովուրդին հոգին կայ սա բխումին մէջ:

Շնորհեա՛ եւ քշնամեաց իմոց եւ ատելեաց զթողութիւն՝  
 Որ առ իս յանցանաց.  
 Եւ դարձո՛ գնոսա ի չարեաց, զոր ունին վասն իմ.  
 Զի ողորմութեամ քում արժամի եղիցին:

Աւելի շօշափելի դարձնելու համար հայ հոգիին հասարակաց այս գիծը, յիշե՛ք Կորնէլիոսի դրսևորած նոյն ապրումը, որուն թարգմանութիւնը հետաքրքրական է կարդալ «Հաւատով խոստովանիմ»էն քաղուած վերի պատկերին հետ.

Արդ, Տէ՛ր, նայելով անարգիս՝ յիշի՛ր քո մեծութիւնը, եւ երբ քեզանից բարիքներ խնդրեմ ինձ ատողներին, Կրակն համար էլ, որ քոնն են նոյնպէս, Ըստ մեծութեանդ, աննաեղիներ հրաշագործիր: Ինձ յայքողներին մի՛ բնաջնջիր, այլ ուղղի՛ր միայն:

Հայ մարդուն հոգեկան կառոյցին հաշտոյն Շնորհալիի հաւատով խոստովանած ծայրագոյն անյիշաբութեան, ծայրագոյն բարութեան ու մարդկայնական յուսութեան միայն հանճարեղ իր նախորդին մօտ չենք հանդիպիր, այլ կը հանդիպինք նաև հանճարեղ իր յաջորդին, Սայաթ-Նովայի վաստակին մէջ՝

Օվ քեզի լեզի պարբեվի, դում տու շաբար, Սայաթ-Նովա:

Չարերուն «պարզեամ» լեզին ցմրուր ըմպելու եւ դառնալ ու չարերուն բարիք կամենալու հայկական այս գիծը ամբողջական հարազատութեամբ մը առարկայացուած է «Հաւատով խոստովանիմ»ի մէջ: Հոն է հայ մարդը իր խոնարհութեամբ, ներքին մաքրութեամբ, արդար ըլլալու եւ աշխարհը արդար տեսնելու իղձերով, կեանքէն վեր իրականութիւններու հետ հաղորդակցութեան մէջ մտնելու իր ժառանգական պատկանքներուն խոր, խուլ, մակընթաց այրքներով:

Ներքին այս արժանիքներով ձեռք բերած ցեղային նկարագրին առնթեր՝ արձակ բանաստեղծութեան այս գլուխ-գործոցը ունի նաև խիստ յականչական արտաքին նշան մը, որ չի կրնար ուշադրութենէ վրիպիլ.

Փառաւորեալ Տէր, ընկալ գաղափարն ծառայիս քո՝  
 Եւ կատարեա՛ ի բարի խնդրուածս իմ.  
 Բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնի,  
 Եւ Յովհաննու Մկրտչի, իմ,  
 Եւ սրբոյն Ատեփաննոսի մախավկայի, իմ,  
 Եւ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչի, իմ,

Այսպէս, ուրիմն, Շնորհալիի օրերուն համարեա՛ աշխար-

Հի ժողովուրդներուն կէսէն աւելին կողմէ ճանչցուած սուրբե-  
րուն կարգին՝

Սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին,  
Մերոյ լուսաւորչին:  
ՄԵՐՈՅ . . .

Բանաստեղծութեան մէջ ինքը բանաստեղծութիւն մը այս  
«Մերոյ» դերանունը, որ սուկական իր ներկայութեամբ տարբեր  
համ մը կը հաղորդէ ազօթքին եւ կը լուսաւորէ միւս բառերուն  
ակունքը, տարողութիւնը, իրաւութեան շաղախը: Բայց իրա-  
պէ՛ս բացայայտիչ է ու գեղեցիկ այս մասնաւորումը: Ով գիտէ գի-  
տակից կամ անգիտակից ի՞նչ ճամբաներէ ինկաւ անիկա բանաս-  
տեղծին գրչին տակ, ի՞նչ քաղցրութեամբ, տենդով, հուրքով ա-  
զաղակուեցաւ այնուհետեւ եւ բանաստեղծութիւնը երեսունըվեց  
լեզուներով կարգացող հազարներուն մէջ ի՞նչ պատկառանք  
ստեղծեց գունաւոր անոր ներկայութիւնը:

Հայաստանեայց աշխարհին բերած լուսաւորչեան լոյսին  
հանդէպ իր բուխ ապրումները հոս միայն խտացուցած չէ Շնոր-  
հալի, այլ առանձին պոթկումներու մէջ եւս քնարերգած է Լու-  
սաւորչիը, «Որով հերքեցաւ խաւարն քանճարամած Հայաստանի-  
եայց ազգի» եւ եղաւ, միշտ իր ընտրուումով՝ «Մաքրական աղ-  
համիսի Հայաստանեայց»: Նոյն հիասքանչ զգացումը նաեւ միւ-  
սին՝ «Յարմարատոյն Լուսաւորչին րողբոջ բուսեալ սուրբն Ներ-  
սէս»ի հանդէպ, ինչպէս եւ Իսահակայ Պարթեւին,

Որ զխաւարն անգլխաւ քնամ  
Հայաստանեայցս լուծի:

Որքան ծանօթ է մեզի Շնորհալիի գրականութենէն, քիչ է  
Մերոպին յատկացուած ուղղակի բաժինը, բայց ճշմարտութե-  
նէ հետո չըլլար ենթադրութիւնը եթէ ըսենք, որ շատ է անոր  
անձին, առաւել եւս յօրինած «գաստուածագիծ» տառերուն դի-  
մաց անոր լուսնայն պաշտամունքը: Իւրաքանչիւր տունին  
առաջին բառը սկսող գիրով անուն ու հասցէ կազմող հնարքնե-  
րուն, «Նորագոյ» բանաստեղծութեան «Ներսէսի Է բանս այս»ին  
օրինակով առաջացած հարիւրաւոր խաղերէն զարմանալի գեղեց-  
կութեամբ մը կ'անջատուին մեր այրութենով սկսող եւ անոր թի-  
ւին համահասար տուն հաշուող բանաստեղծութիւնները, հան-  
րածանօթ՝ «Աստու լուսայ», «Աշխարհ ամենայն», «Այսօր ան-  
ճառ», «Արարչական» եւ «Աստուած անեղ» անուններով, այսինքն  
անո՛նք, որոնք կը համարուին Շնորհալիի գեղեցկագոյն բխում-  
ները: Այս բանաստեղծութիւններուն մէջ կիրարկուած այբենա-  
կան հնարքը միտք մը հաղորդելու կամ հասցէ մը ճշդելու նպա-  
տակներ չի հետապնդեր, այլ կը լիանայ ինքն իրմով, հայոց  
տառերը ուղղորութեան ընծայելու ով գիտէ ի՞նչ երազով: Մե-  
րոպեան տառերով կախարդուած ըլլալու իր այս իրականութիւ-  
նը դեր մը ունեցա՞ծ է արդեօք մերոպեան տառերով զարդար-

ւած վերոյիշեալ բանաստեղծութեանց խորքին խորութեան, ձեւին պարզութեան, պայծառութեան, երաժշտականութեան ու ջերմութեան վրայ, թէ անոնց նուաճած գեղեցկութիւններուն պատճառով է, որ այրենական այդ դարդը սովորական զարդ մը ըլլալու հանգամանքէն տարբեր տպաւորութիւն մը կը ձգէ:

Լուսեղէն արմատ, արմատէն բխած բողբոջ, խաւարին լուծման հստակ ճգնաժամ սուրբ, «բարեաց արմատ հայոց եղեար» գրին գիւտարար սատուածարեալ վարդապետ եւ ասոնց վաստակին մէջ արիացեալ քաջերու հոյ՛, հայաստանով անհատականացած ու Հայաստանը անհատականացած առաքելական ղէմքեր, որոնց շնորհներով լեցուց նախ իր հոգին եւ ապա շնորհաշատ իր միջնոցներով հաղորդեց անոնց հմայքը «Ընդհանուր հաւատացելոց հայկականացող սեռիդ, որք յարեւելից՝ ի սեփական աշխարհիդ հայաստանեայց բնակեալք, եւ որք յարեւմտեանսդ՝ սահմանեալք Եփեսոսեանք»:

Մարդոց հոգեկան սահմանները պեղելու, պատմելու եւ ժողովուրդներուն հայրենական սահմանները արդարօրէն ճշգրտուայտ առողջ բնազդը բաժին ունեցաւ անպայման Ենտրհայի վաստակին տեսակարար բնոյթին մէջ եւ «սեփական» աշխարհին կարօտն ու «նժգեհութեան» տառապանքը իրենք եղան անտարակոյս որոշիչ աւելը այդ նկարագիրը ունեցող իր երգերուն:

Ասոնց զուգահեռ՝ փայտաշուած միւս թեմաներէն ամէնէն տիրականը լոյսն է Ենտրհայի գրականութեան մէջ, երկրէն բխած լոյսը թէ երկինքէն եկածը, շօշափելին թէ իմանալին, իր հոգիէն ժայթքածը թէ ի հօրէ բխածը, լոյսը: Ենտրհայի գործին յաջողագոյն մասին մէջ չկայ թերեւս կտոր մը, որ զուրկ ըլլար «յուսոյն ծագումը» ազերտող խուլ աղաղակէն ու լոյսին հետ պարզուած ըլլար լուսաւոր բարիքներուն շարքը, արարչութեան մարդկային կողմերը եւ մարդոց աստուածային երեսները, բարութիւնը, սրբութիւնը, գեղեցկութիւնը, արդար ու մաքուր ամէն բան, երազը, զոհաբերումը, երգը:

Իր անկրկնելի նախորդին ճիշդ հակապատկերն է հոս Ենտրհայի: Նարեկացի տարակոյսներու տարտարոսի մը մէջ հոգին արիւնտղ ահաւոր անհանգիստ մըն է, մինչ ինք քիչ անգամ նման կացութեան մը («Աշխարհ ամենայն») մասնուած կը զգայ ինքզինք եւ ապրումները թուղթին կը յանձնէ բնդհանրապէս ասոնց վէճի ու կռիւի, խաղաղութեան հասած մարդու մը հաշտութեամբ, խաղաղ ու խաղաղարար շունչով մը, համազրայ հոգեկանութեամբ, ինչպէս կ'ըլլան հաւաքական զգայնութիւններ սեւեռող անբռնազբօս, ու տաք, ու սրբաստա աղօթքները, երգերը, մեծախորհուրդ պատգամները:

Իր «Համապատկեր»ին մէջ, Օշական տեղ մը կ'ըսէ.— «Ենտրհային սուրբ մը ըլլալէ առաջ՝ բանաստեղծ մըն է, այսինքն մեր գրականութեան ընդհանուր ոգիին մէկ կայծը»:

Անշուշտ: Եւ ի՞նչ սուրբ եւ ի՞նչ սրբութիւն, եթէ զուրկ ծրնած ըլլար այդ «կայծ»էն եւ կայծը բառերուն մէջ վառ պահող արարչազոր շունչէն: Բանաստեղծական շնորհներով պատկուած սուրբ մը՝ Ենտրհային, բանաստեղծ սուրբ մը:

### ՅԻՇԵՍՅԱԿՆԻՑ Ի ԳԻՇԵՐՆԻ

Յիշեսցուք ի գիշերի զանունն քո, Տէր:  
Բխեցեն սիրտք մեր զքան բարի  
Եւ լեզուք մեր պատմեսցեն  
Զգործս երկնաւոր քազաւորիդ:

Ի մէջ գիշերի յարուցեալ  
Խոստովանեսցուք զքեզ, Տէր:  
Զաղօթս մեր տացուք ինք, Տէր,  
Ի գաւիթս քո ի մէջ նոր նշուազէմի:

Ի գիշերի համբարձցուք զձեռս մեր  
Սրբութեամբ առ ինք, Տէր,  
Ի ձայն գոհութեան  
Ամենայն հոգիք օրհնեցէք զՏէր:

### ԶԱՐԹԻՒՔ, ՓԼՈՒՔ ԻՄ

Զարթի՛ք, փառք իմ, զարթի՛ք,  
Եւ ես զարթեայց առաւօտուց, ալէլուիա:

Զարթի՛ք, ընդ զուարթունս,  
Մանկունք վերինն Սիննի, ալէլուիա:

Զարթի՛ք, որդիք լուսոյ  
Ի յօրհնութիւն Հօրն լուսոյ, ալէլուիա:

Զարթի՛ք, փրկեալք արեամբ,  
Եւ տուք զփառս փրկողին, ալէլուիա:

Զարթի՛ք, նոր ժողովուրդք,  
Նոր երգս առեալ նորագոյին, ալէլուիա:

Զարթի՛ք, հարսունք հոգւով,  
Սպասեալք գալոյ սուրբ փեսային, ալէլուիա:

Զարթի՛ք, վառեալք լուսով՝  
Ըստ իմաստուն սուրբ կուսանացն, ալէլուիա:


Զարթի՛ք, պատրաստեցէք իւր լապտերաց,  
ԶԶերմ արտասուս, ալէլուիա:

Զարթի՛ք եւ մի ննջէ՛ք՝  
Նման յիմար կուսից նրբեւէք, ալէլուիա:

Զարթի՛ք, երկիր պագցուք,  
Եւ արտասուօք զայս ասացուք, ալէլուիա:

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ





ԺԱՄԱՆԱԳԱԿԻՑ ՆՊԱՐ, ԳՈՐԾ՝ ԼԵՒՈՆ ՄՆԱՅԱԳԱՆԵԱՆ

\*\*

Նարեկացի, Շնորհալի, Նազաշ Յովնաթան,  
ինչքան համար, խելք ես տեսել — էլի՛ կը տեսնես:

Քո Չարենցին լեզու սուտոյ երկիր Հայաստան,  
հազար ու մէ ե՛րգ ես տեսել — էլի՛ կը տեսնես:

ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑ

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

### ԷԶՄԻԱԾԻՆ



... Մօտ երեք դար շարունակ, 1080ից մինչև 1375 թուականը, Կիլիկիան դարձաւ բուն Հայաստան աշխարհի անբաժանելի մասը, նոր փառքով պսակելով հայ ժողովրդի պատմութեան գիրքը եւ անկորնչելի արժէքներ ընծայելով հայ մշակոյթի գանձատանը:

Հոգեւոր դպրութեան, գրականութեան, արուեստների եւ գիտութեան զարգացման մի նոր դարաշրջան է բացուում, որ իրաւամբ արժանի է դառնում հայոց պատմութեան «Արծաթէ դար»ը կոչուելու:

Մանաւանդ ժ.Ֆ. դարը հանդիսանում է կատարը Կիլիկեան շրջանի հայ մշակոյթի զարգացման, որի կենտրոնում փայլում է պայծառ անձնաւորութիւնը Սուրբ Ներսէս Շնորհալու, շառաւիղը Պահլաւունեաց հայրենասէր իշխանական տան, թուր հրուշականուն Գրիգոր Մագիստրոսի:

Ապիրատ իշխանի որդին, Ներսէսը ծնուել է Տլուֆ գաւառի Ծովի հայրենական դղեակում, եւ փոքր հասակից մեծացել ու դաստիարակուել է Կարմիր վանքում, իր մեծ հօր Գրիգոր Վկայասէր Կաթողիկոսի ձեռքի տակ, իբրեւ ուսուցիչ ունենալով նոյն վանքի գիտնական վանահայր Ստեփանոս Մանուկ եպիսկոպոսը:

Հայրապետական Աթոռը, քաղաքական անայտնով պայմանների հետեւանալով, 1150 թուականին, Ծովից փոխադրուելով, նա եւս հետեւում է իր կաթողիկոս եղբոր՝ Գրիգոր Պահլաւունեան, եւ վերջնականապէս հաստատուում է Հոռմկլա, ուր եւ ինք բարձրանում է Սուրբ Լուսաւորչի գահը՝ 1166 թուականին, կոչուելով Ներսէս Դ. Կլայեցի Կաթողիկոս:

Այստեղ, Հոռմկլայում մանաւանդ, Ներսէս Շնորհալին, ողբկան եւ իմացական աստուածատուր ուժերի լիութեամբ, բոլորում է իր ստեղծագործական կեանքի ամենափայլուն շրջանը:

Պահլաւունի Ներսէսը իրապէս յի եղաւ շնորհներով, իբրեւ հոգեգարդ Հայրապետ հայոց, իբրեւ ուղղափառահաստ խորիմաց աստուածաբան Մայր եկեղեցւոյ, իբրեւ ներշնչեալ աղօթող բանաստեղծ, իբրեւ նուիրեալ կրթական մշակ եւ իբրեւ քաջակորով պաշտպան հայ պետութեան:

Առանց Ներսէս Շնորհալու լուսաշող ներկայութեան, պիտի մերկանար Կիլիկեան ժ.Ֆ. դարը իր փառքից եւ պիտի անէանար մի անկրկնելի շողարձակ բարձունք մեր մշակոյթի պատմութեան հորիզոնից: Նրանաշնորհ Սուրբ Շնորհալին փառաւորուել է անցեալում եւ փառաւորուելու է միշտ, իբրեւ բոլոր ժամանակների պարծանք ամենայն հայոց:

Վ Ա Ջ Գ Է Ն Ա .

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ ԱՆԹԻԼԻԱՍ



Հայրապետական այսու մեր կոնդակաւ կը յայտնենք, թէ այս տարի նշանակալից տարի մըն է հայ եկեղեցական ու մշակութային կեանքին մէջ, որովհետեւ Հայ եկեղեցւոյ ամենէն ազնուական եւ առաջնատիպ դէմքերէն եւ հայ գրականութեան ու հոգեւոր երաժշտութեան ամենէն լուսաշող սպասարկուներէն Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետին մահուան ութհարիւրամեակն է: 1973 թուականը կը հռչակենք լուսապակ Մեծ Սուրբին ամմահական յիշատակին եւ անթառամ ժառանգին ոգեկոչման տարի:

Կիլիկիոյ հայկական քաղաւորութեան շրջանի պայծառփայլ աստղերէն մէկը հանդիսացաւ շնորհներու մարմնացում Ներսէս Կալեցի Հայրապետ, որ իր ազնուական հոգւոյն եւ սրբաբանուէր կենցաղին համար հայ ժողովուրդին կողմէ իրաւամբ արժանացաւ ՇՆՈՐՀԱԼԻ տիտղոսին:

Կիլիկեան շրջանը հայոց պատմութեան եւ հայ կեանքի եկեղեցական, քաղաքական, գրական եւ մշակութային մարզերուն մէջ ամենէն բեղուն եւ ամենէն շքեղ շրջանը եղած է: Արդարեւ, եղած է ստեղծագործական այնպիսի՝ փառաւոր եւ բարգաւառ շրջան մը, որ արդարօրէն եւ արժանաւորապէս կոչուած է Արծաթէ դար, ուր վերստին ծագկեցաւ Հայկեան հանճարը հայ մըշակոյթի անդաստանին մէջ: Եւ ինչպէս Ոսկեդարու պատմութեան վրայ կը շողայ Ս. Մեսրոպի անունը, նոյնպէս Կիլիկեան Արծաթէ դարու պատմութեան վրայ կը փայլի քաղցրամտագ անունը Ս. Ներսէս Շնորհալիի:

Պահլաւունեաց ազնուագարմ գերդաստանի վերընձիւղած ծառէն ծնած եւ կրօնաբոյր սրբաբանուէր կեանքի մթնոլորտին մէջ սնած ու մեծցած, վանական ուսման ու կրթութեան կարգով ու ոգիով կազմաւորուած, հռչակաւոր Կարմիր Վանքի կամարնէրուն ներքեւ, Շնորհալի Սուրբ Հայրապետ իր սպասը մատոյց Աստուծոյ, Ազգին ու Եկեղեցիին՝ միշտ բազմաբեղուն արդիւնքներով:

Հոգեւորականի իր վաւերական տիպարով եւ օրինակելի վարժով ան հանդիսացաւ իր ժողովուրդին հոգեւոր կրթութեան ներշնչող ուժը եւ դէմքը: Ս. Գիրքի, Եկեղեցւոյ Ս. Հայրերու, իմաստասիրական ուսմանց եւ հայկական դպրութեանց հմուտ այս հոգեւոր հոգեւորականը երկար տարիներ եղաւ իր երէց եղբոր՝ Գրիգոր Գ. Պահլաւունի Կաթողիկոսին աջ բազուկն ու աւագ օգնականը: Թէ՛ Մովսիս Դրեւանի մէջ, թէ՛ Հռոմկլայի Հայրապետանոցին մէջ ան թեւ ու թիկունք հանդիսացաւ իր արիւնակից եւ հոգեւոր եղբոր հայրապետական երկարամեայ պաշտօնավարութեան ընթացքին:

Ան եղաւ հայ դպրութեան անյսոնջ սպասուորը, որ իր գրչի

Եւ միտքի փառաւոր արդիւնքներով եւ ստեղծագործութիւններով նոյնացուց հայ հոգեւոր գրականութեան գանձարանը: Իր մաքուր սրտէն բխած ազօրֆներով, իր սուրբ հոգիէն աղբերացած հոգեւոր երգերով, իր հովուական թուղթերով, իր պայծառ միտքէն եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ հաւատքի ուղղափառութեան նախաձեռնութենէն մարմին զգեցած դաւանաբանական յստակ պարգաբանութիւններով, Յիսուսի անձին ու կեանքին եւ առեսարակ սուրբգրական գրուագներուն նուիրուած ու գրաւիչ պատումներով ան հայ ժողովուրդի սրբազան գրականութեան մէջ ամէնէն բարձր դիրքերէն մէկը կը գրաւէ եւ անգուցական դէմքերէն մէկը կը հանդիսանայ: Ամէն անգամ, որ «Առաւօտ Լուստ»ն, «Լո՛յս, Արարիչ Լուսոյ»ն, «Նորահրաշ պսակաւոր»ը, «Նայեաց սիրով»ը, «Նորաստեղծեալ»ը, «Հաւատով յոստովանիմ»ը հնչեն հայ եկեղեցիներու կամարներուն տակ եւ արձագանգեն հայ ժողովուրդի զուակներու հոգիներուն մէջ, Ս. Ներսէս Շնորհալիի տաղանդն է, որ թախչ կ'առնէ, կեանք կու տայ մեզի, կը մերշնչէ մեզ եւ կ'ոգեւորէ մեզ: Քանի՛-քանի՛ դարեր, հայ մարդեր հաւատքի եւ ազօրֆի լոյսը ըմպեցին, սիրով լեցուեցան, նորահրաշ գարգարուեցան, յոսով գօտեպնդուեցան՝ երգելով իր շարականներն ու հոգեւոր երգերը:

Ո՛չ միայն բանաստեղծութեանց սրբազան բառերը բխեցան իր հոգիին խորունկ ակունքներէն, այլեւ ձայները, մեղեդիները, երկնահամ եղանակները բխեցան ու դուրս թռան իր հոգիի քաղցրաձայն նուագարանէն՝ ա՛յնքան հարազատ եւ ա՛յնքան զզլիւիչ, որ մինչեւ այսօր, ութ դարեր ետք, պահած են անոնք իրենց քարմութիւնը եւ իրենց թովչութիւնը:

Շնորհալի Հայրապետ, իրրեւ սուրբ եւ անբիծ Հովուապետ, խիստ դժուարին պայմաններու մէջ, առաջնորդեց Հայոց Եկեղեցին եւ բնակեցուց «ի վայրի դաւարուք» եւ սնոյց Հայոց ժողովուրդը «առ ջուրս հանգստեան»:

Ահա, նման բարձր արժէքներով եւ արժանիքներով օժտուած Հայոց մեծագործ եւ մեծաւաճ Հայրապետին, Ս. Ներսէս Շնորհալիի անմահ և փառապանծ յիշատակը ոգեկոչելը պա՛րտքն է ամէն հայու, հոգեւորական եւ աշխարհական, հաւասարապէս: Կրիկեան դարաւոր մեր Ս. Աթոռին համար ի հնուց անտի մասնաւոր գրաչութիւն եւ առինձնող ազդեցութիւն ունեցած է Ս. Ներսէս Շնորհալին, քանի որ Կրիկիոյ մէջ ծաղկած է իր հանձնարը եւ Կրիկիոյ մէջ պտղաբերած է իր գործը՝ ի սպաս եւ ի վայելումն համայն հայ ժողովրդեան:

Շնորհալիի քաղցրախօս քնարը, իր հնչեղ նուագումով թող հնչէ անդադար եւ արձագանգէ հայ ժողովուրդի սրտերուն մէջ եւ անոր երգած իմանալի լոյսը թող հաւատքի, յոյսի եւ սիրոյ բարի սերմեր ցանէ ձեր բոլորի հոգիներուն մէջ: Ամէն:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ: Ամէն:

Խ Ո Ր Է Ն Ա .



**Ի ՔԼՆ ՀԱՅՑԵՄՔ**

Ի Է՛ն հայցեմք Հայր գթութեանց եւ Աստուած մխիթարութեանց-  
 Ի տխրական գիշերային մերձեալ ժամուս՝  
 Մխիթարեա՛ գմեզ ի տրտմութեանց մեզաց,  
 Եւ շնորհեա՛ զուրախութիւն գործովք արդարութեան.  
 Ազաչանօք սուրբ Աստուածածնին եւ ամենայն արդարոց:

Ըստ քաղցրագոյն աստուածային քո հրամանի կոչման, Որդի  
 Աստուծոյ.  
 Եկեալ եմք առաջի քո յերեկոյիս աշխատեալք եւ ծանրաքեռնեալք-  
 Թեքեացո՛ ի ծանրութեանց մեզաց զանձինս  
 եւ զօրագո՛ բառնալ կամաւ զքաղցր լուծ քոց պատուիրանաց-  
 Ազաչանօք սուրբ Աստուածածնին եւ ամենայն արդարոց:

Պազատիմք առ քեզ հոգւով ի հանգստեան հասեալ ժամուս,  
 Մարդասէր, Հոգի Աստուծոյ,  
 Յորժամ նորոգես զերեսս երկրի եւ վերստին ստանաս զոգիս  
 մարդկան,

Նորալիետուր զարդարեա՛ զննչեցեալսն մեր  
 Զծնեալսն ի Է՛ն սուրբ առաքանան.  
 Ազաչանօք սուրբ Աստուածածնին եւ ամենայն արդարոց:

### ՆՈՐԱՀՐԱՇ ՊՍԱԿԵՑԻՈՐ

Նորահրաշ պըսակաւոր եւ գորագլուխ առաքինեաց,  
վառեցար զինու հոգւոյն արիարար ընդդէմ մահու,  
վարդան, քաջ նահատակ, որ վանեցեր գթշնամին,  
վարդագոյն արեամբդ քո՝ պսակեցեր զեկեղեցի:

Երկնաւոր քագաւորին զինու յաղթեալ պատերազմին,  
խռեական իմաստութեամբ, խռեմնացեալ աննառապէս.  
Խորէն խորհրդական եւ ծանուցեալ անուն բարի,  
Խաչելոյն վկայ եղեալ հեղմամբ արեան պսակեցաւ:

Բեմական լուսով լցեալ արիացեալն քաջն Արտակ,  
Թաթաւեալ ի կարմրութիւն բոտրային բղխեալ աղբերն.  
Գժրկականն ըմպեալ գրածակ եւ մկրտեալ արեամբն իւրով,  
Դասակցեալ ընդ անմարմնոցն երրորդութեանն երգել զփառս:

Սրբափայլ զգեստուք պննեալ ի յերկնաւոր հանդիսադրէն.  
Երրորդութեամբն գորացեալ վանեալ զամուրս քանսարկուիւն.  
Հմայեակ հոր ընծայեալ որդւոյ գլուխ չարչարակից.  
Հոգովն յաղթեալ պատերազմին եւ չարասէր քագաւորին:

Էական բարւոյն դիտմամբ ընդդէմ մեղացն վառեցաւ,  
Տարագնաց ելիւք յերկինս պարակցեալ ընդ անմարմնոցն.  
Տանատ գարմանալի տաճար եղեալ երրորդութեանն.  
Տէրունեան սուրբ խորհրդոյն տուն եւ տեղի արժանացեալ:

Ստացեալ զհաւատոյ վահան յուսոյն գրահիւք ծածկեալ,  
Գժրկականն սաղաւարտ ի գլուխ եղեալ նշան խաչին.  
Վահան վեհ երեւեալ, որ մանկութեամբ նահատակեալ,  
Խաչելոյն վկայ եղեալ պսակեցաւ արեամբն իւրով:

Ի հոտ անուշ ողջակիզեալ մատուցանէր զինքն նուէր.  
 Քանաւոր պատարագաւ, ընծայելով հօր ի յերկինս.  
 Արսէնն ցանկալի արդարութեամբն հոխացեալ,  
 Իմաստութեամբ պայծառացեալ եօթմարփեան շնորհաց հոգւոյն:

Երկոխունք հարագասօք ընտրելագոյն մահատակօք,  
 Առաջեալ յամենեցունց գլուխ եւ աւարտ մարտիրոսաց.  
 Նախաշաւիղ գոյով բարեաց, յառաջադէմն Գարեգին,  
 Ընկալեալ զԲրաբրիոնն յաղթանակ մահատակացն:

Բամկական խումբ հագարաց եւ երեսնից թիւ ընդ վեցից,  
 Որք ընդ նոսին մահատակեալք արիաբար պատերազմաւ.  
 Եւ հեղին գարիւնս իւրեանց ի նորոգումն եկեղեցւոյ.  
 Ընդ նոսին պսակելով ի յերկնաւոր հանդիսադրէն:

Գոհութեամբ փառատրութիւն Երրորդութեանը նրագեմք,  
 Քազմութեամբ պսակելոցս զմեօք մածեալ առաքինեացս,  
 Եկեղեցիք Հայաստանեայց պայծառապէս գարդարեցան.  
 Ունելով միշտ բարեխօս զնրգնութիւն մարտի սոցա:

**ՂԵՒՈՆԳԵԱՆՑ**

Արիացեալք առ հակառակսն,  
 Քաջութեամբ առնուլ զվրէժ խարէութեան,  
 Հանճարեզք ի հատուցումն դաւանացն,  
 զԱմբարշտացն արդարադատ չափմամբ,  
 Զօրականք՝ յաղթողք, պսակեալք ի Քրիստոսէ:

Փոխանակեալ գունայնութիւնս  
 Ընդ ճշմարիտ յուսոյ անմահութեանն.  
 Փափաքանաց ձերոց առիք զկատարումն՝  
 Մաքրիլ արեամբ յազտոյ՝ մեզաց տղւոյ՝  
 Զօրականք յաղթող՝ պսակեալք ի Քրիստոսէ:

Հայցեցէք զխաղաղութիւն՝  
 Ճշմարիտ վկայք սրբոյ Երրորդութեանն.  
 Նեղելոցս յանօրինաց բռնութենէ,  
 Զի ցնծացուք յաղթանակաւ մարտի ձերոյ,  
 Նահատակք արգոյք, պսակեալք ի Քրիստոսէ:

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

### 3. ՕՇԱԿԱՆ

## ՆԵՐՍԷՍ ԶՆՈՐՀԱԼԻ

( < Ա Տ ՈՒ Ա Ն Ն Ե Ր )



... Յատուկ խնամքով, Ներսէս Հնորհայի աշակերտած է հայոց կաթողիկոսութեան մայր դպրանոցին: Եւ ինչպէս ինքը կը վկայէ, իր մեծ եղբայրը բացառիկ խնամք է տարած իր վրայ: Իր մէկ գործը, պոր կ'որակէ «Վիպասանութիւն», արդիւնք «համբակ տիոց» (իրն են բառերը), աշակերտական ոտանաւոր մը չէ մինակ, այլ նաեւ փաստ մը, թէ ի՞նչ ոգիով եւ ի՞նչ իտէպիներով այդ պատանին կը մեծնայ իր ժողովուրդին սպասին համար: «Հնորհայի» մականունն ալ դպրոցական վերադիր մըն է, հաւանաբար — քանի որ պայն կը գտնենք մէկէ աւելի մարդոց բով, որոնք իրեն ընկերակիցը եղած են ուսմանց մէջ — պոր յետոյ իր գործունէութիւնը լուսատրոյ պատմութիւն մը Նուիրագործած է միայն, իր անձին եւ հանձարին ներդաշնակ շաղապատու մովը կնքատրելով այդ գեղեցիկ բառը:

Ի՞նչ կրնար ըլլալ այս տղուն սորվածը, եթէ ոչ ժամանակին ընթացիկ կրթութիւնը, պակաս՝ հելլեներէնէ: Ինք կ'ըսէ տեղ մը, թէ Աթէնք չէ գացած եւ թէ հոմերական վարժութիւններ չունի՝ ակնարկելով անշուշտ յունարէնի իր անգիտութեան: Այս շքեղ մտքին սա հզոր պակասը եթէ չէ վնասած անոր բանաստեղծական հանձարին, աղէտալի եղած է անոր մտքին կարգացմանը: Այս պակասին կը պարտինք իր գեղեցիկ լեզուն եւ իր մտքին միջակութիւնը:

Պատմութենէն գիտենք, թէ ան մատաղ հասակէն օգնականն է իր եղբօրը, որ պիտի ձեռնադրած է եպիսկոպոս, գործածելու համար անոր շնորհները, մանաւանդ ջաղջրութիւնը, կեդրոնական աթոռին բազմապահանջ կարիքներուն հայթայթումին համար: Յորովայնէ ընտրեալ եկեղեցականն է ան, եթէ կը ներուի այդ բացատրութիւնը. եկեղեցական մը որոշադրող բոլոր բարձրագոյն առաջինութեանց շտեմարանը: Քաղցրութիւն, բարութիւն, ժուժկալութիւն, պարզութիւն, սիրելու կարողութիւն, եայնս, եայնս: Կը յիշեմ իր կենսագրին մէկ բառը, որով անոր նկարագրին այս կողմը անխորտակելի կերպով կը մընայ մեր մտքին մէջ. պիտի բարկացնողի մը ան կ'ըսէ. — «Ա՛՛թ, պիտի բարկանայի թեզի, եթէ ինձի չխնայէիք»: Անելի քան քառասուն տարիներ, մինչեւ իր եղբօրը մահը, ան հոգին էր այդ կաթողիկոսարանին, որ թափառական բերդէ բերդ, Հոռմկլայի անշրդի ժայռին վրայէն պա-



տասխանատուները ունի անելի քան տարտղնուած հօտի մը յանձանձումին: Արիւկիա, Կապադովկիա, Մեծ Հայք, Միջագետք, Եգիպտոս, Պաղեստին, հոն՝ ուր այս ժողովուրդը ունի իր գաղթականները, կաթողիկոսին կողմէ ներսէսն է, որ պիտի երթայ, պիտի սփոփէ, յուսադրէ, պիտի փրկէ յոյներէն, արաբներէն, թուրքերէն, ներքին ցեցերէն ամէն օր հալածական իր դժբախտ ժողովուրդը: Եկեղեցականի անոր ճկունութիւնը, համոզներ հեղինակութիւնը այնքան է, որ անոր կը յանձնուի դժուար առաքելութիւնը պատակտուած կիլիկեան իշխանութիւնը հաշտութեան մը մօտեցնելու — Թորոսն ու Օշինը միջնադարեան այդ կատաղի ասպետները հաճեցնելով իրարու, մէջտեղէն վերցնելու համար աղէտալի պատակտումը: Ուշագրաւ է Պոլսոյ հետ իր յարաբերութիւններուն մէջ իր ազգած հմայքովը: Ծանօթ է Ալեքսիսի հետ իր խօսակցութիւնը, եւ ասոր հետեանք ընդարձակ էր «Ֆնդոց պատճառաբանութիւնը» անունով, որ երկու քոյր եկեղեցիներուն ցանկալի միութիւնը ունէր իբրեւ հետադարձ նպատակ: Իր եղբօրը մահէն ետքը, Լուսաւորչի գահին վրայ գահակալ. պաշտօն՝ պոր կը վարէ եօթ տարի, մինչեւ իր մահը:

Թէ՛ իբրեւ իր եղբօրը օգնական եւ թէ իբրեւ գահակալ՝ ան ունի անառարկելի զեղեցկութեամբ գործունէութիւն մը, որուն պատկերը չէ աղօտած դարերու ճնշումովը: Հաւատք, բարութիւն, խոհեմութիւն, զգաստ կեանք, քաղցր արժանապատուութիւն, բեմերու վրայ Աստուծոյ խօսքը մեկնելու սրտաշարժ խորութիւն, թեմէ թեմ, երկրէ երկիր կրօնական առաքելութիւնը կրելու հեթաթունակ զեղեցկութիւն: Զուր տեղը չէ, որ մեր եկեղեցին սրբացուցած ըլլայ պինքը: Արիւնի նահատակութեան հետ մտքի սա նահատակութիւնը ես կը բերեմ դէմ դէմի: Ինչ վաստ, որ մինակն է մեր մատենագիրներէն, որուն գործը բացառաբար կատուցուած, շրջանակուած ըլլայ միայն ու միայն կրօնական նկատումներէն: Քերթուած, մեկնութիւն, թուղթ դաւանաբանութեան, բոլորին մէջ ալ առաջին գծին կ'երեւայ կրօնատրոյ: Եւ եթէ վինք զետեղենք իր շրջանին մէջ այնքան դժուարութեանց ու կարիքներուն դիմաց, կը հասկցուի, թէ ի՞նչ սրբազան խորութիւններ, ի՞նչ աստուածային շնորհներ նպաստած են շինելու այս կաղապարը: Շնորհալի, մեր հայրապետներուն շարքին մէջ, ամէնէն իրաւ կրօնատրոյն է, բառին տալով ժ. դարու երանգ, այսինքն՝ մարդը, որ փրկութիւնն է զանգուածին, սփոփանքը տառապածներուն, խելքի եւ կեանքի ուղեցոյցը տգիտութեան մէջ թաւալող ամբոխներուն:

Հովուապետ, սրբազգեաց վանական, ամենախա գործիչ եւ բարձր ներշնչումներով թրթուուն այս դէմքը ինձի կը յիշեցնէ Գ. եւ Դ. դարու յոյն եւ լատին եկեղեցոյ մեծ հայրերը: Ինչպէս նաեւ իր ժամանակուան մեծ կարգերու հիմնադիրներու — տոմիսիքեան, եւայլն — նկարագիրը: Ազնուական իր արիւնը, դժուար պայմաններու մէջ իր ստացած ընդարձակ եւ զեղեցիկ փորձառութիւնը, զանգուածին վրայ ազդելու իր սքանչելի եղանակները, հոգիները ուղղելու, խանդավառելու երկնանուէր իր եռանդը, խօսքի, արարքի, մանաւանդ մտածման

իր պերճ սուրբերը, եկեղեցական նուիրապետութեան մէջ արդիւնալից իր կէս դարը, մանաւանդ իր շրջապատին վրայ իր անձին սրբական հեղումը, ճառագայթումը, մտքիս մէջ կը դիպուին, որպէսզի ինքզինքս պզամ ճշմարիտ սուրբի մը ոլորտին մէջը՝ իր պատկերին դէմ: Ան մարդկային է՝ ինչպէս երկնային: Կը գոհացնէ երկինքի հուրքովը տարուած աղանդատը, ինչպէս իմաստի ու ձեւի հետամուտները — արուեստի հետամուտները:

Մեր ժամագրքին անկորնչելի գոհարներն են իր «Երգեր»ը: Կը խորհիմ, թէ բառին չափ եղանակը խանդավառած է այս պատուական հայրապետը: Աւանդութիւնը կը պատմէ, թէ Հոռմկլայի բերդապահները հեթանոսական անվայել երգերով կը լուսցնէին իրենց հսկումի ժամերը: Հնորհալի այդ տղեղ սուրբութեան դիմակայ՝ յօրինած է իր հանելուկները, բայց մանաւանդ գիշերային ժամու իր երգերը՝ «Յիշեցուք», «Առաւօտ լուսոյ», եւայլն: Սաղմուններէն բխող, բայց վաննք որոշ խտութեամբ եւ պզայնութեամբ գերապանցող տաղեր են այդ երգերը: Անոնց վրայ գրական դատում մը անտեղի է, տրուած ըլլալով 7-8 հարիւր տարիները, որ կը պաշտպանեն վաննք մեր անգիտակցութեանը խորը:

«Առաւօտ լուսոյ», «Աշխարհ ամենայն»ը բանաստեղծութենէ աւելի բաներ են, անոնք մեր հոգիին տարրերն են: Այդ երգերէն անոնք, որ մասնաւոր օրերու եւ տօներու եւ ժամապաշտութեանց կը պատշաճին կամ պահուն կը գործածուին՝ կը կրեն մասնակի, որքան ընդհանուր կ'իջնեն: Ինծի անծանօթ է յոյն եւ յատին *Liturgie*, որպէսզի արտօնեմ ինծի ազդեցութիւններ, նախատիպեր ենթադրել Հնորհալիի այս կարգի քերթուածներուն համար: «Այսօր անձառ»ը, «Արաքշական»ներու շարքը «Աստուած անեղ»ը, «Նորոգող»ը, պատմական որոշ տարրութեամբ, աստուածաբանական որոշ բարեխառնութեամբ, Հին և Նոր Կտակարաններու լոյսովը լուսատր, Յիսուսի աստուածութեանը եւ Ս. Հոգիի շնորհին կարելի քաղցրութիւնովը թրթոագին այդ քերթուածները, — ընդհանրական մասը անոնց — նոյն ատեն տարօրէն մասնաւոր միջնադարեան հայ հոգիի որոշ կնիքով եւ Պահլաւունի հայրապետներու որոշ հոգեբանութեամբ՝ գոհարներ են, որոնք ժամանակին մէջ փոխանակ հիննալու, այսօր մեզի կը թուին բիւրեղակերպ անվերածելի գեղեցկութիւններ: Պարտաւոր եմ խօսիլ Արեւազայի, Խաղաղականի, Ճաշու ժամերուն այն մէկ-երկու շատ խորունկ, մարդկային իրականութեամբ յօրինումներուն մասին, որոնք ամբողջ հայ բանաստեղծութեան մէջ իբր ներշնչում, թռիչք, ձայնական հեշտանք, մտածման փայլակ ու նոյն ատեն մեր սրտին խօսող անմոռանալի ձիւղերն են այս ժողովուրդին: Անոնց մէջ կայ մեր միջին դարը, մեր գերութիւնը, մեր անմահ երազանքը, մեր հայութիւնը, արեւելեան քաղցրութիւնը ու ինչ որ ժողովուրդը ապատեր է՝ իր հոգեղէն անհուն պայծառութիւնը: Թող չթուին չափազանց սա վերագրումները արդիւնքի մը առջեւ, որ քանի մը եկեղեցական երգերունն է այս անունին առիթով: Ժողովուրդի մը հոգին կ'աղբերանայ ետ'ն՝ ուր ամէնէն աւելի անկաշկանդ է ան: Ոմանցը պիտի կերպագրէ ինքզինքը կոիւի երգերուն վրայ,


ոմանցը՝ մոլեռանդութեան վրայ, ուրիշներունը՝ դրամի և փառքի վրայ: Հայ հոգիին համեստութիւնը, երկնայնութիւնը, հայ անուշիկ միսքիքը, մեր երգերուն շարագաթը, ու մեր լեռներուն, մեր դաշտերուն մեկամտ, մեկմէ բխող հրագոյրը, մեր տրամութիւնը, մեր խորունկ շէնութիւնը մեր մէջ, մեր պգայնութեան ամբողջ սարուածը, մեր երկինքը, ու ինչ որ իբր կեանք դրուած է մեր ուտերուն օրուան չարիքին ընդմէջէն, ու ինչ որ իբրեւ երազի դրօշակ, իբրեւ Լուսաւորչի Կանթեղ, մեր լեռներէն արձագանգեր է, ծածաներ է մեր վրայ: Ընտրիալի երգերը կու տան այդ ամէնը: Չեմ դատեր «Հաստով խոստովանիմ»ը, այն աստիճան յստակ է հոն ամէն բան: Կը յիշեցնեմ ձեզի հիացումը, կոր այդ աղօթքին թարգմանութիւնը ստեղծած է միջապային հոգեւոր գրականութեան մէջ: Հայ ժողովուրդը քիչ անգամ այսքան յստակ, այսքան իրաւ ու ամուր կերպով իր հոգիին երկինքը աշխարհայնացուցած է:

Չեմ կրնար վճռական ըլլալ Հարականներու տարողութեանը մասին: Ինչպէս երգերու պարագային, ասանդութիւնը ունի ցուցմունքներ՝ անոնցմէ ոմանց հայրութիւնը Ընտրիալիին ապահովող:

Հարցերուն համար ըստածները չեմ կարծեր, որ պատկանին Ընտրիալիին: Կ'ըսեմ այսպէս, քի անոնց լարին մէջ իր սիրմը բացակայ է: Թերեա եղանակը ինքը կրնայ ըլլալ շնորհած անոնց, ուրկէ մեզի հասած ըլլայ ասանդութիւնը: Ըստ տիրացուներու վկայութեան այդ Հարցերը իբր եղանակներ, ճշմարիտ գեղեցկութիւններ են եւ կերպով մը կը բացատրեն վերագրումը: Անոնցեանց, Վարդանանց, Հոգեգալստեան, Վարդավաթի եւայն Կանոններու — «Յաղթող եւ Մուրք Հայրապետ» — իբր բանաստեղծութիւն, հոգեւոր թռիչք, մարդկային պգայութիւն կու գան բարձրագոյն արուեստի ամենամաքուր ակունքէն: Այսօրուան գրական ճաշակը շատ քիչ բան կը գտնէ անոնց մէջ վիւքը վիրաւորող: — Ատոր փորձը կատարեցինք Նորահրաշին վրայ եւ հրաշալի արդիւնքի մը հասանք: — Հարակնոցին ամէնէն կատարեալ եւ մեր արուեստին ամէնէն վճիտ էջերը կան անոր անունին կապուած, որոնք մեզի հասած են վաւերական ձեռով մը, այդ կտորներուն մէջէն:

Իբրեւ ծաւալ՝ գրեթէ կը մնայ ելակի, եթէ նկատի չունենանք Տաթեւացիի «Գիրք հարցմանց»ը եւ ԺԵ. դարու շատաբանները, մէջը ըլլալով Վենետիկեան դպրոցի առաջին երկու դարերը: Իր ուսանաւորներուն թիւը 15.000էն աւելի է, որոնց վրայ, երբ բարդէք շարականներն ու երգերը, կ'ունենաք մրցանիշը չափուած խօսքերուն:

Իբրեւ որակ՝ ան վար չէ առաջին գծի մեզի հասած մեր մատենագիրներէն ոչ մէկուն գործէն: Անշուշտ իր «Աստուածածին»ը տըզոյն է՝ բաղդատուած Նարեկացիի «Աստուածածին»ին: Իր «Աստուան» նուազ ահաւոր է, քան «Աղօթամատեն»ին տխրահոյակ հերոսը, բայց իր երկինքը, իր մարդկայինը, իր պզգայինը, իր տառապագին անձնատրութեան ցոյքը, նոյնիսկ առանց սրբութեան շղարջին, կը բաւեն իր գործը պատազրելու, պաշտպանելու, իր լաւագոյն մասերուն մէջ: Պիտի չկրնայինք ըմբռնել ժամագիրք մը՝ առանց անոր երգերուն: Մեր Հարակնոցին ամէնէն նուիրական ածուներէն մին ... Իր մնար ամայի, ազդելու չափ ամբողջին, եթէ չար ձեռք մը յանդգ



պեղչել անկէ Հնորհայի կտակածը մեզի: Հակառակ մեծ մեղքերու, ձգձգումներու, աստուածաբանական կնճիռներու, դաւանաբանական կեցեաներու, էջեր կան իր մօտ, ուր աստուածաբանութիւնը ամբողջութեամբ կը մարդկայնանայ, կը տաղաարուի: Անշուշտ պատմած է այս մարդը կտակարանները, փոխանակ ստեղծելու, բայց — այդ պատմութիւնն իսկ հոս ու հոն, կը բուսցնէ մեզի հրաշալի ծաղիկները անոր անմահ պայնութեան: Մարդն է ան, որուն հետ միշտ վստահ էք գտնելու պզգցման անտիպ գեղեցկութիւն, հայեցի գողտր քաղցրութիւն, ցեղային այն տրտում, թեաքեկ յոյսը, որ մեր գրականութեան նկարագիրները կապմեց, երբ կոտրեցաւ մականը մեր թագաւորներուն ձեռքին մէջ եւ մեր ժողովուրդին սպասը անցաւ իր եկեղեցականներուն: Կ'ըսուի, թէ կորովի չէ իր մտածումը, չեմ գիտեր, թէ ինչ կ'ուզեն ըսել, եթէ խոյանքն է, աստուածաբանական սաւառնումներն են, խոշոր գրագետներու անձնական փորձառութիւնները խտացնող հոգեբանական խոր եւ նուրբ դիտողութիւններն են, որոնց կ'ուզեն ակնարկել, մեր մէջ Հնորհային ոչ մէկէն ետ չի մնար:

Չեմ կարծեր, որ ոեւէ հայ անտարբեր մնայ գեղեցկութեան փարթամ այն պակին առջեւ, Կոր իր գործէն դիւրութեամբ կը ճարենք իր անունին համար: Իր «Հնդհանրական»ը այսօր իսկ չէ կորսնցուցած իր բարձր իմաստը: Հայոց եպիսկոպոսները եւ քահանաները օգուտով պիտի կարդային զայն: Կը խորհիմ, թէ Հայ եկեղեցոյ դաւանաբանութիւնը այսօր իսկ կը գործածէ անոր յաջող տարապնները: Անոր երգերը մաս կը կապմեն մեր հոգիին ամէնօրեայ յուզումներուն: Անոր շարականներէն մէկ քանին հայ գրականութեան մէջ անմահ գեղեցկութիւններ են: Չեմ կրկնեմ ինչ որ վերը ըսած եմ անոնց տարողութեանը մասին: Դիտել կու տամ, որ եթէ պէտք ըլլայ հայ հոգիին ծաղկաբաղը կապմել՝

Հնորհային պիտի ունենար հոն ամէնէն քաղցր ու սրտառուջ մասը, հայութեան իսկ խորհուրդը, տրտում շնորհի, ազնուական երապի, գողտր պզայութեան, համեստ, ինքնաբաւ, հոգեղէնի լարուած ուժերու համադրում մը իբրեւ: Այս տպատրութիւնը ամէնէն շատ կը հաստատենք Հնորհային մօտ, համապօր ըսուելու չափ եղիչէին: Սխալ է Հնորհային թարգմանել, ինչպէս փորձեց Դուրեան Սրբապան, եւ ուրիշ աւելի անտրակ մարդեր, վասնպի բանաստեղծութիւնը չի թարգմանուիր, այս տեսութիւնը արդարօրէն թելադրող քիչ հեղինակ ունինք մեր մէջ: Հնորհային գերազանց քերթողն է, հայերէն չգիտցողներն իսկ կը հասկնան զինքը:

Պարտաւոր եմ ստեղծագործ տարրը փնտռել եւ գտնել միմիայն իր սրբապան գրականութեան մէջ — աղօթքներ, երգեր, շարականներ, որոնց մասին լայնօրէն խօսուած է արդէն — երբ հարց կու տանք, թէ ինչ են նկարագիրները այդ ստեղծագործութեան, ինչ են եղած այն կողմերը հայ հոգիին, որոնց առաջին անգամ իր մօտը կը հանդիպինք, դժուար է միակտուր եւ վճռական տարապներ գործածել: Հնորհայինն է պատմութիւնը կարելի եղածին չափ քիչ մեղքով բանաստեղծութեան բարձրացնելու հանճարային յաջողութեամբ: Կը կար-

դանք «Այսօր անճառ»ը ու չենք տառապիր, քանի որ երկարաձիգ այդ տողերուն մէջ Նոր Կտակարանին սեղմ, վսեմ, ժուժկալ պատմումը — տնօրինական պահերէն — չի բռնաղատեր ինքզինքը մեզի: Ամէն նըման պարագայի, մենք միշտ գործ ունինք սկզբնատիպ մեծ արուեստագէտի մը հետ: Իր աղօթքները վստահ եմ, թէ յղացուցան գրական ռեժէ յետին մտքէ վերծ ոգիով: Բայց գուր տեղը չէ, որ մարդ մը մեծ է: Ատոնց յղացման կերպին մէջ իսկ հայ ժողովուրդը ինքզինքը բիրեղացուց: Կրնան անոնք բարձրաթոյչ, վսեմաճաճանչ, շատ նրբամաղ արժանիքներ չունենալ, բայց ունին գերականց արժանիքը հայ հոգիին ամէնէն անարատ բխումները կազմելու: Սաղմոս մը իր բերնին մէջ կայարդական փոփոխութեամբ մը կ'այլափոխուի, կ'անձնանայ եւ Տարոսեան լեռներուն վրայ գիշերային հսկում մը — որ ներշնչուած է սաղմոսէ մը — կը վերածուի համադրական սեմֆոնիք քերթուածի մը: Հնորհային ո՛չ միայն կը զգայ իր Աստուածը, այլ մանաւանդ իր ժողովուրդը առ Աստուած տանելու իր ճամբուն մէջ — աղօթք, երգ, շարական — կը բարձրանայ ամբողջ մարդկութեան իսկ խորհրդանշանին: Այն ընդունելութիւնը, զորս սրբական քերթողութիւնը ըրած է իր աղօթքներուն վրայ, վար չէ այն հիացումէն, զոր իր ժողովուրդը տըւած է անոնց — «Հաւատով խոստովանիմ»ը երեսունէ անելի լեզուներու քարգմանուած է — մտքէս կ'անցնի «Նմանութիւն Յիսուսի» զըրրոյկը, ոչ իբր համեմատական եզր այդ աղօթքներուն, այլ իբր նման հոգեվիճակի մը բխում: Կը խորհիմ, թէ հրաշալի մատենանին անձանօթ հեղինակը հաւանաբար մարդ մըն էր, որուն սիրտը կարելի էր դուրսէն տեսնել, եթէ կը ներուի այս բացատրութիւնը: Նոյնն է պարագան Հնորհայիի, որուն մեզի ձգած յաջող էջերուն մէջ ամէնէն անձնական մեր գրագէտը կը գտնուի:

Խորունկ իրականութիւն է, որ Հնորհային կը նուաճէ նոյնիսկ այսօրուան ամէնէն դժուարահաճ քննադատը: Երբ կը հարցնէք ինչ ո՞վ, պատասխան կու տայ այն հոգեվիճակը, որուն մէջ կը մտնէ ամէն հայ ամէն դաւանանքէ — սկեպտիկ բողոքականէն մինչեւ անհաւատը — երբ շփումի կու գայ Խաղաղականի երգերուն կամ գիշերային պաշտամունքի անորակելի անուշութեամբ մեղեդիներուն:

Արդարեւ, ո՛ր այս ժողովուրդը ինքզինքը ամէնէն լայն կերպով արտայայտուած գիտէ, եթէ ոչ «Առատութիւն»ի մէջ, «Ի քէն հայցեմք»ի մէջ, «Նորասիրաշ»ի մէջ, «Այսօր անճառ»ի մէջ, Հանգստեան Կարգի անհունապէս գեղեցիկ յորինումներուն մէջ, որոնք քրիստոնեայ խորքի եւ հայ քաղցրութեան, պարկեշտ երապի եւ ինքնաբաւ աշխատանքի, մարդկօրէն ամէնէն աղուոր մատչելի մարդկային բարոյականի անմահ սկզբունքները կը բիրեղացնեն: Մեր պապերը՝ ատոնց ո՛չ միայն երգեր, այլեւ ապրեր են: Պէտք չկայ կասկածի տակ դնել այս բոլորին տարողութիւնը, քանի որ գինն ենք այդ ամէնուն, որ կ'ապրինք: Հանճարի մը համազգայնացումը չեմ կարծեր անելի լայն արդարացում մը հարկադրէ փնտռել այս ամէնէն զուրս:

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ

Սրբոց Յակոբեանց զանգի պաշտոնաթերթ ՎՍԻՈՅԻ 1945ի թիւերէն շաղկաւ Թ. Օշականի գրութեան մէջ կայ նաև այս էջին վրայ արտադրուած հասուածք, որ կը խօսի Շնորհալիի առաջնութեան մասին ու վերջին իր առաջնութեան կը զեանաւոր առբը Հոփոսի միջին նուիրուած աղջը.— Վնոնց մէջ է իսկական գոնար մը, սարք Հոփոսի միջին նուիրուած, որ Յշարհիս գոնար մըն է:

Շնորհալիի առաջնութեան մէջ կան Հոփոսի միջին եւ Հոփոսի միջին նուիրուած երկու անշատ կտորներ, որոնցմէ երկուքը կը ներկայացնենք հաս, սակի՞ տայով ընթերցողին, որ ինքը ճշգէ Օշականի զեանաւորներն ճշգրիտ հասցեն:

Շնորհալիի առաջնութեան զեանաւորներն, որն էր Կամ թիւ Կ-ի կողմէն ընդունած է զանոնք իր ծիսակատարութեան մէջ: Փոքր կամ միջակ ծառայով կատարողներն են անոնք՝ զանազան սուրբերու, իմաստուններու, ժողովուրդներու նուիրուած: Շնորհալիի զեանաւորներն, յազումի որոշ մասով մը, միշտ զազգրանուող ներդաշնակութեամբ զերթուածներն են անոնք, որոնց մէջ անհուազն հայ լեզուին փափկութիւնը, թախտալին շնորհը կը յանձնեմ ձեր աշակերտեան ու զուրազուրեմ: Անոնց մէջ է իսկական գոնար մը, որոքը Հոփոսի միջին նուիրուած, որ ճշգրիտ գերթուած մըն է:

Թ. Օ.

... Փնայի Քրիստոսի մարմնացեալ Անապակ կուսութեամբ հարմանցեալ, յԱռաջատար անմատոյց քաղմնցեալ Հրեշտակ, հրաշագեղ Հոփոսիմէ:

Սիրասնունդ, սիրամարգ սիրալի, նրափայլ, սկնթիւ, տարփայլի, նուապակ, իրազուլի ցանկալի Հրեշտակ, հրաշագեղ Հոփոսիմէ:

Իսկանի, ազանի օդապար, նոր նայեան պատանն է ճոյզ դարար. Օնասպան արագիլ դու արդար, Հրեշտակ, հրաշագեղ Հոփոսիմէ:

Մտաւոր մարտիրոս մրցական, էական բանին հոր գորութեան. Արազիս քաղութեամբ գինձան, Հրեշտակ, հրաշագեղ Հոփոսիմէ:

Է գունեղ քաթաւեալ ի բոսոր, Սաղարթուն, կարմրաբան իբր խնձոր. Հարսն ազնիւ, դու արեանք բողաւոր Հրեշտակ, հրաշագեղ Հոփոսիմէ:

ՆՆՐԱՅՍ ՇՆՈՐՀԱԼԻ

**Ի ՍՈՒՐԲ ՀՌԻՓՈՒՄԵԱՆՄՆ**

Ասուտ լուսոյ արեւելեան ազանց  
 Օրիորդքն սուրբ յարեւմտից ծագեալ,  
 Ռահլս լուսափայլ հայաստանեայց ուղղեաց  
 Ելանել յերկինս ի հրեշտակաց կայեանս:

Հովիտիմէ գեղազարդեալ կուսից պարծանք,  
 Երկնից արքային հարսն ընծայեալ յերկրէ:  
 Ռեսին քաղցրութեան մեզ ի շրթսանց բխեալ  
 Ձեզ քափեալ սնունն անուշահոտ բանի:

Ի փեսայերացն առաջնոց դասուց,  
 Հաւատոյ վիմէն ւ յեկեղեցոյ Փողոյն,  
 Փեսային իւրոյ առաջնացաւ հրաւեր  
 Ի Հայաստանի առագաստի մանկունս:

Սիրով արքային, յորում զեռեալ վառէր,  
 Յաղթեաց բռնութեանց քաղաւորաց երկրի:  
 Ի ասյն քաղցրութեան քարեկամին գոչէր  
 Արի որ ննջեսրդ ի գրի ներքնումն եղեալ:

Մահուր մեր արեամբ գվիճակըս քս հերկեալ  
 Ել, մըշակ հագուց, եւ սերմանեա՛ր բանի.  
 Էրբամբ պատրաստել օքեանս յերկինս,  
 Ընդ քեզ եւ ծնելոցն քեւ աւագնաւն:

Կենդանի վրկայք կայսք իմաստունք եւ սուրբ,  
 Մարք մեր հոգեւորք ծրնողք յորդիս լուսոյ.  
 Ողբախոսութեանցը մայր Գայեանէ,  
 Եւ սրնունդ բարի կայսրդ Հըռիփսիմէ:

Յերեսնից եօթանցը մեծ վկայուեաց  
 Հայցմամբ պապասիմք բարեխօսել ընդ մեր.  
 Սուրբ երրորդութեանն ընծայեցէք մաղթանս,  
 Շնորհել զբողութիւն մեր յանցանաց բազմաց:

Նայն վերակաշիլ ի հանդերձեալն ընդ ձեզ  
 Ի ժառանգութիւն արքայութեանն երկնից,  
 Էին միայնոյ մատուցանել ըզփառս  
 Յարազուարն ձայնիւ ի յաւիտեանս, ամէն:

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Կ. Ս Ա Ս ՈՒ Ն Ի

ՀՈՐԻԶՈՆԵ ՀՈՐԻԶՈՆ

\*\*

Քաղաքական կեանքի վերիվայրումները, պայքարներն ու ճառերը միևնույն լեզուն կը պահեն:

Փրական եւ մտաւորական վերելքը սակայն հետզհետէ զրացուց իր դեմքը:

Որքան զգալի էր քաղաքական տուայտանքը, նոյնքան եւ աւելի տիրական դարձաւ գրական եւ մտաւորական թռիչքին ներքին մզումը:

«Ազատամարտ»ը իր շրջապատով: Մէնքին ամէնէն վերի յարկը՝ Հ. Յ. Դ. Բիւրոն: Երկրորդ յարկը՝ Կ. Կոմիտէն եւ խմբագիրներու սենեակներ: Վարի սրահն ու քովնախ սենեակները ուսանողական բանակը գրաւած էր: Սրահը կուսակցական ակումբի անունով ծանօթ էր: Հոն տեղի կ'ունենային ընկերական ժողովները: Բայց ամէն օր ու ամէն ժամ սրահը կը յորդէր ուսանողներով, երկսեռ աշակերտներով, զարգացման ձգտող պատանիներով, որոնց համար սրահը դարձած էր դպրոց մը: Ոմանց աչքին՝ համայնարան:

Այս միջոցառումն ծնունդն էր «Երկուսի» ամսագիրը, իբրև օրգան Դաշնակցական ուսանողական միութեան: Ու թերթը դարձաւ տարածուն ամսադիր մը, երկու հազար հինգ հարիւր օրինակներու սպառումով:

«Երկուսի»ը երկուսեք բնուած ուսանողներու հոգեկան զանգահարումն էր, ազգային եւ համամարզկային վերելքի մտահոգութիւններով թըրթրում մը: Մեր թերթը տարածած էինք մինչեւ Պէյրութ, Այնթապ, Էրզրում, Վան, Մուշ եւ բոլոր այն վայրերը, ուր միջնակարգ վարժարան կար:

Այս շարժումը շրջապատի վարիչ մարզոց եւ մարմիններէն ոմանց սկսաւ մտահոգութիւն պատճառել: Ուսանողական շարժումը կ'ընթանար շատ անկախ: Մարմինները միջամուխ չէին ըլլար, բայց չէին ծածկեր իրենց մտահոգութիւնները:

Ուսանողական հաւաքոյթներու ընթացքին՝ գանգուածը կարգապահ էր: Գծէն դուրս ելլողը խիստ ազդարարութիւն կը ստանար: Կարգապահ բանակ մը:

Իսկ ազատ ժամերուն, անզուսպ վիճարանութիւն՝ գրական եւ հասարակագիտական խնդիրներու շուրջ: Մեր աղմուկները մինչեւ Բիւրոյի յարկարածինը կը հասնէին:



— Շատ է աղմուկը, շա՛տ, աղա՛ք :  
Վերջն մեզմ ձայն մը կը լսուէր : Գիշ մը հանդարտ խօսակցութիւն :  
Բայց երիտասարդական բռնկումը նորէն կ'արձագանդէր ամէն կողմ :

Երկու պաշտպաններ ունէինք : Վերի յարկէն մինչև վարը, ու մեր  
պաշտօնական կայանէն դուրս, ամբողջ հայութեան պաշտամունքին արժա-  
նացած երկու հսկաներ՝ Սիմոն Զաւարեան եւ Ռոստոմ . . . Ու անոնց կեց-  
ւածքն էր, որ կը զսպէր Հրաչ Թրեմարեանն ու Վառմեանը, որոնք միշտ կը  
զայրանային մեր անխիանական ընթացքէն :

Ակնունդին կը պահէր իր հպարտութիւնը, իբր թէ բան մը չի նշմարեր :  
Զարդարեան կամքի ուժով կը պահէր իր պազարբնութիւնը : Դժգոհ  
էին մեր ծայրայեղութիւնէն, բայց կը լռէին, մտած, որ երիտասարդական  
չարժումը որ մը հարստութիւն մը պիտի դառնայ հայ կեանքին :

Մեր ընդգրկած նիւթերն ալ խռովքի դուռ կը բանային : Ես խօսած էի  
Կարլ Մարքսի եւ էնկելսի մասին : Անոնցմէ անցած էի ու պարզած անխիա-  
նական Բազումիի աշխարհահայեացքները : Այս առումին դասախօսու-  
թիւնները ուղարկութիւնը զրաւած էին Վառմեանին, որ սանդուխներէն վեր  
կրած ատեն քիչ մը ունկնդրած էր, թէ ինչ կը խօսիմ : Վառմեան Բիւրոյին  
յայտնած էր իր մտահոգութիւնները : Զաւարեան զիս կանչեց վեր եւ հար-  
ցուց, թէ ինչու ընտրած էի այդպիսի նիւթեր : Ներկայ էին Վառմեանն ու  
Ակնունդին :

— Մենք ընկերարանական նիւթեր կը վերլուծենք եւ Տիգ ու Զանք կը  
թափենք, որ ճանշանք միջազգային գիտուններն ու գիտութիւնները : Դաշ-  
նակցութեան ծրագիրը կը խօսի այս բոլորին մասին ու բնական է, որ մենք  
ալ խօսինք եւ որքան կարելի է աւելի խորացնենք մեր ծանօթութիւնները :

— Վաստ չու՛նի : Սօսեցէք, բայց Դաշնակցութեան ընդգրկած լայն հո-  
րիդոնէն չհեռանանք, — ըսաւ Զաւարեան :

— Այսքան արիւն թափած ենք, արիւնը կը մոռցուի՞, — կմկմալով  
վերջացուցի խօսքս :

Բիւրոյի սենեակէն ելայ մտահոգ : Ուրեմն մեր ուսանողական թռիչք-  
ները մեր անցեալը մոռացութեան տուած են :

Բայց մենք շարունակեցինք մեր ինքնադարգացման ընթացքը, ուր հայ  
գրականութիւնն ալ յաճախ քննութեան կ'առնուէր :

Բացի մեր նախաձեռնած դասախօսութիւններէն, յաճախ դասախօսելու  
կը հրաւիրէինք Դանիէլ Վարուժանը, Ռ. Զորպարեանը, Զօհրապը, Ակնու-  
նին, Ռ. Դարբինեանն ու Լ. Նազարեանը : Բարեկեցտն, Համբարձումեան եւ  
Սիբուսին արդէն մեզի հետ էին : Բայց այս երեքն ալ «Ազատամարտ» օրա-  
թերթի խմբագրութեան անդամ էին : Ու մենք անոնց գրուածքները կը «հիւ-  
րընկայէինք» «Երկուցի» մէջ, կարծես զիջողութիւն մը ընելով :

Դանիէլ Վարուժան իր գրուածքներէն բաժին մը լոյս ընծայեց «Եր-  
կուցի» մէջ : Վարուժան ջերմօրէն կուպուած էր երիտասարդութեան : Ատի-  
կա չի նշանակեր հարկաւ, թէ ինքը տարեց էր : Այդ օրերուն (1912) մեծ բա-  
նաստեղծը հասած էր 28 տարիքին ու մենք կը գտնուէինք 22ի սահմաններուն :  
Վարուժանը, Ահարոնը եւ Վահրամ Թաթուրը կը հետապնդէինք, որ  
արագ վաղը ունենան, որպէսզի մեր երամբ իրենց ճամբան չհորէ :

Պէտք է հաստատել, որ Վարուժան, Սիամանթօ, Զարդարեան եւ Ա-  
հարոն լոյս ընծայեցին իրենց ստեղծագործութիւնները, մթնոլորտը ջերմա-  
քընելով իրենց երկունքով :

Միամանթոն եւ Դանիէլ Վարուժանը անվիճելի հեղինակութիւններ դարձած էին ո՛չ միայն հասարակութեան աչքին, այլեւ ըմբոստ ուսանողութեան հոգիին մէջ: Ու մենք «Նրկուեմք» մէջ հրապարակ եկանք՝ հանճար որակելով զանոնք:

Դ. Վարուժան, որ յաճախ մեզի հետ կ'ըլլար, ուրախ էր, որ իր գրականութիւնը բմբուսած էինք: Բայց իր հրճուանքը կը պահէր հոգիին մէջ: Իսկ Միամանթո, որ պաղ նայուածքով մը կ'անցնէր մեր հաւաքոյթներու սրահին առիւէն, կը նայէր շատ վերէն...

«Նրկուեմք» գրական դնահատանքը տեսնելով Ջորգարեանի սեղանին վրայ, մանկական հրճուանքով կը բացագանչէ.

— Ուրեմն, այս խառնակ կեանքը վարող տղաքը նաեւ գրական հասցողութիւն եւ ճաշակ ունին:

Ջորգարեան Միամանթոյին կ'ըսէ.

— Այս տղաքը անզուպ են, բայց մտաւորականի խմոր ունեցողներ կան անոնց մէջ:

Յաջորդ շարքերուն, Միամանթո մեր խառնակ բանակին հիւրը եղաւ եւ շատ խանդավառուեցաւ: Մեր գնահատանքը հրճուանք պատճառած էր բանաստեղծին: Իր հրճուանքը չէր կրնար ծածկել՝ Դ. Վարուժանի նման: Կա՛մ կը խոսվէր ու ա՛լ այդ մարդոց երեսը չէր նայեր, կամ կը բարեկամանար՝ մանկական մտերմութեամբ:

Գրական ապրումներու այս շրջանին ընկերարանական եւ քաղաքական տեսութիւնները իրենց ընթացքով շարունակուեցան: Սակայն պատանի օրերու գրական ապրումները վերադարձ մը կատարեցին իմ ներաշխարհիս մէջ: Գրականութիւնը վերլուծելու եւ իմ կարծիքը հրապարակաւ ձեռնկիրովու ձգտումն ունեցայ: Մեր սերունդի հոգեկան աշխարհը Հայ կեանքին եւ իրականութեան շարք էր: Քաղաքական կեանքը լայնօրէն պիտի ըմբռնէինք: Միջազգային ընկերային վերիվայրումներն ու ընկերարանական լուծումները կ'ուզէինք առնել մեր մասնադրութեան հորիզոնին մէջ: Հայ ժողովուրդի ապագան էր ենթաւորը այս մտածումներուն: Գրականութիւնը կը սիրէինք ու Հայ գրականութեան լուսադոյն դանձրը համամարդկային գրականութեան հորիզոնին հասցնելու քաղճանքը տիրական էր:

Այս մասնադրութիւններուն կ'անդրադառնայինք «Նրկուեմք» մէջ:

Այս հոգեխոսով օրերուն, «Նրկուեմք» մէջ գրական-քննադատական երեք յօդուածներ գրեցի եւ փորձանքի մասնուեցայ...

Դ. Վարուժանի «Յեզիմ սիրարք» եւ «Հնքանոս երգեր»ը Հայ բանաստեղծութեան մէկ նոր ճառագայթումը կը նկատէի: Բանաստեղծին կառուցումները մտքով հարուստ, արտայայտութեամբ ճոխ, լեզուով եւ բանաստեղծական գիւտերով առնչմանը կ'որակէի:

Իսկ Միամանթոյի «Կարմիր լուրեր բարեկամէս», «Հայրողներ», «Դիւցազնորէն» գործերը ամբողջ Հայ ժողովուրդը ցնցող երկեր նկատեցի: Նախ՝ իրենց ազգային ոգիի հոգեխոսով ապրումներով, ապա, աւելի մեծ շափով՝ իրենց ինքնայատուկ ոճով:

Վարուժան ուրախ էր, որ մենք բարձրարժէք բանաստեղծութիւնը կ'ըմբռնէինք եւ կը գնահատէինք:

Միամանթո հոգեկան խնճոյք մը կ'ապրէր եւ իր ուրախութիւնը կը զանգահարէր:

Այս բոլորը լաւ, բայց այս ճամբուն վրայ անկարելի է միայն գուրգուրանք ստանալ:

Ու ես եղայ առաջին գոհը, որմէ դժգոհ չմնացի այն օրերուն: Ու հի-  
մա այ դժգոհ չեմ այն օրերու յանդձնութենէս:

Սիրունին, ընկերական ու հասկիչ, նաեւ բուական գրականութիւն  
կարդացած, լուրեր եւ ազդային երևույթներ «Ազատամարտ»ին փոխանցող  
երիտասարդ խմբադիր մըն էր: Ու այդ օրերու հայ գրականութիւնը, ազատ  
պայմաններու մէջ, ծաղկումի ճամբան բռնած էր: Գրքեր կը հրատարակ-  
ւէին, գրախօսականներ կը դրուէին:

Ու Սիրունին իր բանաստեղծութեան դիրքը լոյս ընծայեց: Ձգտած մը  
ուէր հասնելու Վարուժանին եւ Սիւսանիային:

Կարգացի իր հրատարակած այդ փոքր հատորը: Բանաստեղծութիւնը  
կը բացակայէր անկէ: Լեզուի տեսակէտէն՝ Վարուժանը կը կրկնէր, առանց  
ոճի եւ արուեստի: Անհնայ եղայ Սիրունիի այդ գրքին հանդէպ եւ վերլու-  
ծումներով ու բաղդատութեամբ՝ դայն ոչնչութիւն մը համարեցի «Երկուսն-  
Յոն» մէջ:

Սիրունին խոսիցցաւ ինձմէ եւ երկու տարի հետս չխօսեցաւ:

Բայց այլեւս բանաստեղծութիւն չգրեց:

Ան դարձած մտաւորական գրող մը, հանրային, պատմական եւ հայ  
գրականութեան ընթացքը դրի առնող: Իր գրքերը այդ ճիւղերուն մէջ ու-  
թաղբաւ պիտի մնան: Այս վճիռը այսօրուան դատողութիւնն է:

Մենք եա դառնանք այն օրերուն:

Ընթերցողը վերը պատկերացում կ'եննքին մասին թերեւս շատ ըն-  
դարձակ գրուածքներ կարդացած է: Թո՛ղ տւելին դիտնայ, Կարեւորը, այս  
պարտաւային, միջնորոտի ըմբռնումն է: Պատմական լրջան մը, ուր 4-5 տա-  
րիներուն, հայ ժողովուրդը ճիգ թափեց դարձանելու անցեալ երեսուն տա-  
րիներու Ֆրիդլանդի, հողեկան, կրթական ու զրական անթիւ կորուստները:  
Վերելքի այս ճամբուն մէջ յոգնութեան զաղափարը չունէիք: Վազգ  
մըն էր դէպի անհասանելի բարձունքներ:

Ուսանողներու, միջնակարգ վարժարաններու աշակերտութեան եւ ա-  
նոնց ծամբան բռնող երիտասարդութեան խանդավառ շարժումները կրցած  
էին ձեւափոխել Պոլսոյ հայութեան կենցաղը եւ գայն քերթօրէն կապել հայ-  
կական նահանգներու հայութեան ապրումներուն եւ ձեռնարկներուն:

Ուժերը պատրաստ էին՝ արամազրուելու հայ կեանքի վերելքին:

Ոմանք աւարտած էին համալսարանական կրթութիւնը: Ոմանք աւար-  
տելու վրայ էին:

Ես աւարտական քննութիւններս վերջացուցած էի Յուլիսին եւ յաջո-  
ղութեամբ: Բայց, ըստ իմ կեանքի պատկերին, միշտ ձախորդութիւն մը ա-  
ռաջ կը կտրէր: Իսլամական կրօնքի օրէնքներու դասին քննութիւնը մէկ յի-  
շով պակաս էր եւ ստիպուած էի աշնան վերաքննութեան ենթարկուիլ՝ իրա-  
ւարանական վկայականը ստանալու համար:

Փորձանքը ընդունեցի համբերութեամբ:

Վստահ էի, որ 1912ի աշնան իրաւարան պիտի դառնամ:

Սպասէ եւ յուսայ:

Իսկ ընթերցողը յամառօրէն թող շարունակէ պահանջել.

— Յուշերդ գրէ...

Պահանջ մըն ալ ես ունիմ: Կը խնդրեմ մտաւորական եւ գիտակից ըն-  
թերցողէն, որ մէկ վայրկեան պատկերացնէ այս պայմաններուն մէջ ապրած  
ուսանողի մը հինգ տարիներու կեանքը:

— Գրէ՛, եթէ այդքան շունչ ունիս. գրէ՛, եթէ ժամանակ ունիս...

## Զ.

Յանկարծուստ, ուսանողական խանդավառութեան թիւը կորեցաւ...

Պալքանեան պատերազմը պայթած էր:

Թուրքիոյ զէմ պատերազմի էլած էին Յունաստան, Սերպիա, Պուլ-  
կարիա եւ Ռումանիա:

Միջազգային կեանքի յանկարծական յեղաշրջում մըն էր եղածը: Այս  
չորս փոքրիկ պետութիւնները Թուրքիոյ տիրապետութենէն ազատման ճամ-  
բան բռնած էին 1828էն սկսած: Ազատագրումը շարունակուած էր 1850էն  
մինչեւ 1878ի Պերլինի ժողովին ծանօթ վճիռը:

Այն ատեն Թուրքիա տակաւին կը տիրապետէր Սելանիկին, Մակեդո-  
նիոյ եւ կ'երկարէր մինչեւ Եգէական ծով: Իր տիրապետութեան տակ զսնը-  
ւող փոքրիկ Յունաստանէն, Սերպիայէն, Պուլկարիայէն եւ Ռումանիայէն  
պարտուած՝ ինքզինք կը դռնէր Պուսոյ պատերուն տակը:

Այս պարտութիւնը Թուրքիոյ ներքին կեանքին մէջ նոր փոփոխութիւն-  
ներ կ'ուսուցնէր: Հայկական նահանգներու ինքնավարութեան խնդիրն ալ  
սեղանի վրայ կու գար:

Նոր կեանքի այս փուլին, նոր փոթորիկովի ճանապարհը կը բռնէինք  
նաեւ մենք՝ արդէն համալսարանը աւարտած:

Պալքանեան լայնածաւալ ազատագրումը եւ միջազգային քաղաքական  
թելադրանքները ստեղծեցին նաեւ հայ ժողովուրդը՝ պահանջելու Ա-  
րեւմտեան Հայաստանի ինքնավարութիւնը:

Այս ալեկոծ օրերուն, օր մը, երբ կ'անցնէի Բերայի փողոցէն, յան-  
կարծ մէկը թեւա բռնեց: Աչքս պտըտացուցի ու դէմս դտայ Միմոն Չաւարեանը:

— Գարձ, Տարօն կ'երթա՞ս այս օրերուն, զործ կայ:

Առանց տատանումի եւ առանց մտածելու մէկ դասիս վերաքննութեան,  
որ երկու ամիս յետոյ տեղի պիտի ունենար, ըսի.

— Պատրաստ եմ անմիջապէս մեկնելու:

— Ուրեմն վաղը ժամը 11ին Բիւրոյի սենեակը բարձրացիր, հոն կը  
խօսինք:

Չաւարեան իր ճամբուն շարունակեց: Ես ուրախութեան փոթորիկու-  
մով՝ Բերայի լայնքն ու երկայնքը չափեցի:

Յաջորդ օր, երեկոյեան, բարձրացայ Բիւրոյի գրասենեակը: Հոն էին  
Ակնունին, Արմէն Գարոն, Հրաչ Թիրեաքեանը, Ռ. Չարդարեանն ու Ռ. Գար-  
բինեան: Հանդիսուսը ժողովի մը տպաւորութիւնը ստացայ եւ մտածեցի,  
թէ իմ ներկայութիւնը կը խանգարէ այս ժողովը: Չաւարեան տատանումս  
տեսաւ, երբ դրան մէջ կանգնած իրենց կը նայէի:

— Ներս մտիր, հաւաքուած ենք քեզ ճամբու դնելու:

Տեղաւորուեցայ ազատ սեղանի մը առջեւ, աւելի ժօռիկ Չաւարեա-  
նին, որ ժողովը կը վարէր:

— Դուն Դուրան-Բարձրաւանդակ պիտի երթաս: Հոն պիտի դառնար  
Ռուբէնը, բայց այս տարի պիտի մնայ Փընեւ, որպէսզի համալսարանը ա-  
ւարտէ: Այս օրերուն, դուրսէն սեւէ խորհրդական չկայ այս պատասխանա-  
տու շրջանը:

— Սիրով կ'երթամ:

Արդէն հին ու զործօն օրերը վերակենդանացած էին հողիս ծալքե-  
րուն մէջ:

Ժամանակին քահի մը էջ տրամադրած եմ այդ կարգադրութեան և մեր  
գործին: Աւելի չեմ մանրամասներ: Բայց վաթսուներմէկ տարի առաջ տեղի  
ունեցած այս Հանգիստումը այն օրերու յուշումով կ'աշկեմէ Հոգիս: Հոն  
խօսք առին Ակնունին եւ Գարրինեան: Հայ նոր կեանքի հոր գործիչը քա-  
ղաքիցու եւ անոր զսոցութիւնը զնահատելու խօսքեր ըրին: Այդ օրերու  
քաղաքական կեանքը պարզեցին: Հայաստանը ինքնավարութիւն մը պիտի  
ստանար: Ու մենք Հայ Ժողովուրդը պատրաստ պէտք է պահէինք քաղաքա-  
կան վերելքայրումները գիմազրաւելու:

Հրաչ Թիրեաքեանն ու Ռ. Զարդարեանը անհուն հրճուանքով նստած  
էին այս ժողովին: Կորած զաւակ մը գտնելու հայրական հրճուանքը կար  
անոնց գէմքին:

Հրաչը դարձաւ Զաւարեանին.

— Այս հրաչքին ի՞նչ կ'ըսես: Մենք ասոնց արարքներէն կը պայրա-  
նայինք եւ բնաւ յոյս չունէինք, որ օր մը մեր ճամբան պիտի բռնեն: Ահա՛  
հրաչը: Հիմա կը հաւատամ, որ Գաղնատեանութեան կամքը ամէն հրաչք կըր-  
նայ գործել:

Բոլորը խօսեցան ու ես, ապրումներու ճնշումով, կծկուած մնացի  
իմ սեղանին տնկիւնը:

Միայն կըցայ միմունջով ըսել.

— Մեր որբազան պարտքն է, որ կը կատարենք:

Ներաշխարհիս մէջ, մանկութեան օրերէն ծանօթ ճանապարհին վրայ  
էի, ապրումներով ու անցեալ տարիներու գործի շղթաներով:

Վերադարձ դէպի հայրենի երկիր: Հոգեկան ապրումներու ծովացում  
մը, մանաւանդ այս օրերուն, երբ ես կը դառնամ վաթսուն տարի առաջուան  
հորիդոններուն եւ կորած ճանապարհներու:

Վաթսուն տարի առաջ Տարօն վերադարձիս եւ գործիս մասին քահի  
մը սրտանց դրուած էջեր տպուած են «Յրկուձէ» ամսագրին մէջ: Աւելի չեմ  
ծաւալիր, նկատի առնելով անչափելի երկարութիւնը ճանապարհներուն:  
Մանաւանդ անհուն փափաք՝ վերջին կայանը հասնելու, ուր Հանգիստ նըս-  
տած՝ ինծի հետ ճամբորդող ընթերցողին Հոգեկան պահացում պիտի տամ:

Փոթորկալի տարի մըն էր 1912-1913ը:

Թուրքիան պարտուած՝ մեծ պետութիւններու կարգադրութիւններուն  
ստիպուած էր ենթարկուել: Հայկական նահանգներու ներքին ինքնավարու-  
թիւնը վճռուած էր գրեթէ: Ու մենք մեր աչքը սեւեռած էինք այդ նոր հո-  
րիդոնին:

Գուրան-Բարձրաւանդակի շրջանները այցելեցի: Հետո էր ժշտապէս  
անուանի Փետայի Փեթարայ Մանուկը: Մեր խումբը երբեմն կը ստուարա-  
նար, նայած շրջանին եւ մեզ մտահոգող խնդիրներուն: Երբեմն մեզի հետ  
կ'ըլլային Բոլէի Մըճոն (հին Փետայի, խմբապետ եւ գործակից Հրայրին,  
Սերոբ Աղբիւրին, Գեղամին), Տիգրան Գաւառեան (Գ. Բարձրաւանդակի Կ.  
Կ.ի անդամ եւ Փետայի):

Ս. Կարապետի շրջանը պարտած տան Մանուկին եւ ինծի կ'ընկերա-  
նար նշանաւոր Կորիւնը, գործակից Հրայրին, Անդրանիկին, Քեռիին եւ Մու-  
րատին: Ու վանահայր Վարդան վարդապետի հովանին միշտ մեր վրայ էր:

Իմ քեռին էր Վարդան վարդապետը ու Հպարտ էր, որ ես տեղ ունէի արեւելի փառքը վայելող Տարօնի աշխարհին մէջ:

Չարմանալի գուրգուրանք մը կտր ինծի Հանդէպ: Իմ մանկութեան օրերու վերջիւսմը կ'ապրէին բոլոր ծանօթ ու անծանօթները, որոնք այդ օրերուն, չըջանի երիտասարդ գործիչին Հետ շփումներ ունէին: Միիթարեան վարժարանն ու անոր ուսուցիչները Հպարտ էին իրենց անատակ աշակերտով, որ Հրապարակի վրայ ո՛չ միայն կուսակցական լուրջ ձեռնարկներու ղեկավարն էր, այլ բռնած էր Չաւարեանի, Հրայրի, Գեղամի, տօջթ. Չաւարեանի եւ այլ մեծարժէք գործիչներու ճամբան ու Հիմա գրիչ կը շարժէր «Երկուճէ»ի մէջ, զբաղանութեան բեմին վրայ ալ, Սասնոյ բարձունքները Հայ մտաւորական Հորիզոնին խառնելու եւ միանալու Մասիսի պազաթին շողչողուն ծիածանին:

Համահայկական ապրումներու շրջանը կը բոլորէինք:

Մեր ժողովուրդը գինելու եւ մարտական Հին կեանքին վերադարձնելու ճիգին մէջ էինք: Ընչուած ժողովուրդի մը ազատագրումը մեզ կախարհող Հորիզոնն էր:

Ահա իմ մարքսիզմը Տարօնի աշխարհին մէջ: Ընչուած Հայ ժողովուրդի, քրտնաթոր աշխատաւորներու, մտահոգ Հայ գիւղացիներու ազատագրումը ընկերավարութեան կարմիր դրոշմ վարդարուած էր: Աւ Դաշնակցութեան դրօշը արդէն Հերոսներու արեւմով կարմիր էր...

Տարօնի այդ օրերու կեանքը խանդավառ ապրումներով լեցուն էր: Յոյսեր կային, որ Հայութիւնը իր ազատութեան ճամբան պիտի գտնէ: Աւ ազատութեան ճամբաներուն վրայ արձաններ պիտի բարձրանան յանուն Հրայրի, Սերոբ Աղբիւրի, Սարբու Ասլանին (Գէորգ Չաւուշ) եւ իրենց նահատակ ընկերներուն:

Տարին բոլորեցաւ այս խանդավառութեամբ:

Ես գացի մեր գիւղը՝ մօրս ձեռքը համբուրելու ու վերադարձիս՝ մնաք բարով ըսելու Մովսարին, Անտոջին եւ Տարկուշին, որոնք Հողեկան անբաժան մտերիմներ եղան ինծի եւ այդպէս ալ կը մնան մինչեւ այսօր:

Աւ այդ բարձունքներէն իջնելով Մուշ, անմիջապէս կը բռնէի Մուրբ Կարապետի վանքին ճամբան:

Վանքի տօնին օրերն էին:

Վանքի Հաւաքոյթին պիտի տօնուէր Հայ դրերու գիւտին 1500ամեակը:

Այդ օրերուն տեղի պիտի ունենար Հ. Յ. Դ. Հայաստանի Ռայոնական ժողովը:

Հոն պիտի Հաւաքուէին Վանի, Էրզրումի, Տրապիզոնի, Խարբերդի եւ Տիղրանակերտի ներկայացուցիչները: Իսկ Դուրան-Բարձրաւանդակի Կ. Կոմիտէն արդէն տանուաէրն էր եւ գրկաբաց կ'ընդունէր Հիւրերը:

Ս. Կարապետի վանքը Վերածնունդի տօնը կը կատարէր: Հոն Համախումբուած էին տասնութիւն Հազարէ աւելի ուխտաւորներ եւ ընկերներ: Հայաստանի վեց նահանգները Հոն էին: Հոն ներկայ էին Դաշնակցութեան, այսպիսին՝ Երկրի մարտական եւ մտաւորական ուժերը, Հոն էին կրօնականները, խանդավառ երիտասարդներու եւ երիտասարդուհիներու քաղաքացիները: Կովկասէն Հոն կը ժամանէին Ն. Աղբալեան եւ Ա. Չամբաբան: Ռուստոմը Հասած էր Սանասարեանի աշակերտներով: Վրաստան՝ իր թիկնապաշտ մարտական ուժերով՝ Վանի ներկայութիւնը կը շեշտէր: Անդին, Ռ. Բոնսա-

բարդեանը Խարբերդը կը զիսյեցնէր ճառերով: Տիգրանակերտէն Հասած երիտասարդները՝ իրենց շարժումներով՝ մեծ ջողաբի հմայքն ունէին:

Հայաստանը հոն էր:

Ս. Կարապետի բարձունքին, Գրիգոր Լուսաւորիչէն մինչեւ մեր օրերը ապրող հայութեան ուրիշ կը սաւառնէր:

Մամիկոնեան տան շիրմները կը խօսէին ժողովուրդին:

Բակերը՝ պարերու շարան: Իւրաքանչիւր շրջան իր տարազով:

Սրահներուն մէջ՝ ժողովներ եւ խորհրդակցութիւններ:

Հոն տեղի կ'ունենար Հայաստանի Ռայոնական Առաջին Ժողովը, որուն կը մասնակցէին Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամները, շրջաններու Կ. Կ. Ի ներկայացուցիչներն ու պատգամաւորները: Պատկառելի ժողով մը՝ Ռոստոմի եւ Վասմեանի նախադաշնութեամբ եւ օրհնութեամբ վանահայր Վարդան վարդապետի, որուն ներկայութիւնը կարծես Հրայրի, Ազրիւր Սերոբի, Ռուբէնի ներկայութեան զգայութիւնը կու տար:

Ապրէ այս բարձունքին եւ, չէ տարեկան հասակիդ՝ Ռայոնական Ժողովին Դուրան-Բարձրաւանդակի ներկայացուցիչը եղիւր, բարձր պահէ այս տնտեսի եւ մարտական Կ. Կ. Ի հմայքը:

Ներաշխարհիս թելադրանքը այս է:

Հոգեկան ներքին խօսակցութիւնս ինձի հետ տեսական է:

Ուտեմացած է շրջանը: Ուտեմական երիտասարդները շատ են եւ նրախրուած զործին: Մեծ վերելքի յայտերը կը սուսառնին մթնոլորտին մէջ:

Բայց կայ նաեւ մտահոգութիւնը... Թուրքերը իրենց կրած պարտութիւններուն հետեւեցով կ'ոտնան թունաւոր սրտով, իրենց արեւնոտ աչքը հայերուն ուղղած...

Այդ բարձունքին, այդ Կիրակի՝ կը տօնենք զիրերու զիւտին 1600ամեակը:

Սուրբ Մեսրոպ եւ Ս. Սահակ ներկայ էին: Այդպէս կը զգան կրօնականները, ժողովուրդը, կուսակցական զանգուածը: Այդպէս կը դառնին նաեւ բեմին խօսողները:

Իրենց խօսքը կը պատգամեն Ռոստոմ, Վասմեան (Վան), Արմէն Գարօ (Հրզրում), Ռ. Բոնարարեան (Խարբերդ), ու Տարօնի աշխարհը կը հրամայէ, որ ես խօսիմ Դուրան-Բարձրաւանդակի անունով: Կուսակցական հրահանգները կատարելու վարժութիւնը ունիմ: Պատանեկան օրերէն կաղմաւորած ներքին ուժ մըն է, որ ներսէս կու գայ ու կը ծաւալի համաձայն ապրումներուս:

Հիմա, բեմին վրայ, Սուրբ Մեսրոպի եւ Սուրբ Սահակի նայուածքները ուղղուած են ինձի: Այսպէս կը զգամ: Ու խօսքս կը ծաւալի մինչեւ Վարդան Մամիկոնեան: Եւ ահա, Սուրբ Մեսրոպին եւ Սուրբ Սահակին կը յայտնեմ պաշտամունքս եւ երախտագիտութիւնս:

Ինչ խօսեցայ, չեմ յիշեր: Տարիներ ետք եւս չկրցայ պատկերը վերականգնել մտքիս մէջ:

Հոգեկան փոթորիկներ կան, զորս անկարելի է պատկերացնել: Ու ես հակառակ պահանջողներուն, զբաւոր բան մը ներկայացնելու համար չէի ելլեր բեմ:

Այդպիսին հաշուեցէք այդ օրուան իմ հոգեկան արեւոմը: Զգրածս կարդացէք հոգեւին...

Ռոստոմ, Արմէն Գարօ եւ Վասմեան շոյիչ խօսքեր ըսին ինծի: Վարդան վարդապետ Համբարծեց զիս եւ ձեռքը դրաւ գլխուս՝ իբրեւ օրհնութիւն իր եւ սուրբերուն կողմէ...

Արկիւան ծուար, այդ օր, օրհնութիւնը կը սասանոր մեր զեկամօսրանքն եւ... սուրբերն...

Ն. Ագրաւան եւ Ա. Ջամալեան Մուշի մէջ տեսակցութիւններ ունեցած էին ժողովուրդին եւ ներկայացուցիչներուն հետ: Օրուան մը Հանդիստ, եւ ապա՝ զէպի Ս. Կարապետ, երբ Ռայոնական Ժողովը եւ Գրեթու Գիւտին 15(16)ամսակի հանդիսութիւնները վերջացած էին, իրենց կը մտար Ս. Կարապետը տեսնել, խորհուրտմ ժողովուրդը վայելել եւ պատասխանատու Մարմիններուն հետ խորհրդակցել:

Այդ օր, Ռոստոմ ճամբայ պիտի ելլէր զէպի Իրզրում: Գիտէր, որ ես տարի մը կորսնցուցած էի՝ Տարօնի գործիչ դառնալով: Պէտք էր դառնայի Պոլիս: Իրեն հետ ուսաւ զիս ու ճամբայ կտանք զէպի Իրզրում: Մենք բռնած էինք Թիւրանիան յոններու ճամբան: Բնութեան պիտատեսիլ բարձունքներն ու Հաղար աղբիւրներու տիտներն ինքնապէս փափաք ունէր Ռոստոմ: Ու ես երջանիկ ճամբորդութիւն մը ըսի, վայելելով Հայրենի այդ անմասն պեղեցիութիւնները եւ Ռոստոմի Հայրական գուրգուրանքները:



Արդէն Իրզրում ենք: Բաղմաթիւ բնակիչներ մեզ շրջապատած, պատգամներ կ'ուզին յսել Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետի բարձունքներէն:

Ռոստոմի ստիպումով կուսակցական բնակիչական ժողովին ես զեկուցում տուի մեր ժողովներու սրտումներուն մասին: Ռոստոմ, վարպետ Համնադիրը Դաշնակցութեան, այդ քայլով կ'ուզէր Իրզրումի շրջանին ղեկակցել, թէ ինչ զեկամարներ ունիք, կրնոք անոնցմէ օգտուել: Ռոստոմ եւ միւս Հիմնադիրները մարդիկ գործի մղելով, զեկամարներ կը ստեղծէին: Իրենք իրենց փառքը կը քողարկէին եւ մեզի պէս երիտասարդներուն փառապաշակ կու տային...

Մեր կուսակցութեան Հիմնադիրներու մեծ նկարագիրը եւ խորունկ ու պին լուսավորչութիւն է: Գայիք նոր սերունդները միշտ պիտի անդրադառնան այս երեւոյթին եւ այդ վերադրումը մեծապէս պիտի նպաստէ իրենց վերելքին:

Երեք օրերու ապրումներս ձերմօրէն կը զգուէին Հոպիս: Դրսեւորէ այդ ամէնը, հիշէ կրնաս: Դիւրին է այդ խօսքը ուղղել աչքին, բայց ոչ հոգին ծովածաւալ:

Ճամբորդ կմ: Ճամբորդը պէտք է շարունակէ ճամբան:

Կ. ՍԱՍՈՒՆԻ



Յ. Մ Ա Ն Ո Ի Կ Ե Ա Ն

## Երգ՝ Մտորումներու Գողագերժման

Խորհուրդներուդ կայելան՝  
 Երփներանգ լոյսերու գիրկընդխառնում,  
 Ուր կը գործենք, Մաքա Հարի,  
 Յակատագրի մը անորոշ  
 Գործակալներն իբրև կոյր՝  
 Դիւանագէտ քմայֆներու ի հաշիւ...:

Անայգարաց գիշեր:  
 Պարաբմէդ կ'երեսա կրկին,  
 Կը հետելիմ մեծապարիդ  
 Նայուածքս բուռած՝  
 Մատներուդ խորհրդայուշ շարժումներուն...:

Կը հայիս հայեացքով պազշոտ,  
 Կը պարես մազանքով կայսարդ,  
     Ի տես մատներուդ՝  
     Ծիսարա՛ն ծիծղում՝

Կը ծաւալի  
     Անձկութիւն մը տակաւ  
     Երակներէն իղձերուս...:

Կը բռնկին բնագդներ իմ շուրջ,  
 Կը պարպուին քաժակներ ցմբուր,  
     Գրգանքով լիացած  
     Նայուածքներ արբշիտ՝

Կը յառին  
 Զիստերուդ մեղկունակ մտերմութեան,  
 Նայուածքներ՝

    Որ չեն քափանցեր  
 Խաղերուդ էութեան...:

Մերք կը թեւս  
 Թիթեռի պէս,  
 Կը գալարուիս օձանման,  
 Կ'ըլլաս նախորդ թագէ վայրի,  
 Մերք ծարաւի՝  
 Կ'ըլլաս պախրա:  
 Խաղերուդ կշռոյթով վայրագ,  
     Ձեւերով յայրաս,  
 Մ'աթա Հարի,  
 Դուն կը բանաս արար-արար  
 Ներաշխարհիդ խորհուրդներուն  
 Քողն անբափանց...:

Ձեռքերդ ահա  
 Կը մեկնես յառաջ,  
 Որ թարգմանի՝ «Ուշադիր»:  
 Կ'անցնիմ իսկոյն նոթագրութեան,  
 Կ'ուրուագծեն ցուցամատներդ  
 Շարժումներ երբեակ,  
 Կը մեկնին աջ ու ահեակ:  
     Բթամատներդ կը հակին վար  
     Մ'ատչելով՝  
     Մ'ասնեմատներուդ համբոյրին:  
 Կ'ընդվզին մատներդ յանկարծ,  
 Կը պլլուին կուրծքիդ,  
 Կը վիհին  
 Ջղագրգիռ ձեւերով հագար,  
 Հուսկ՝  
     Կը սահին,  
     Կը սաղոսկին գիտերդ ի վար...:

❖

Շարժումները մատներուդ  
 Կ'ըլլան բռներ,  
 Կը գոյակցին  
 Գաղափար մը յայտնագործելու ճիգով.  
 Կը բեղմնաւարուին  
 Մասնիկներով նախադաս,  
 Կը տառապին դալկախոտէ

Յետադաս մասնիկներու ներգործութեամբ .  
 Կ'ածանցուիմ,  
 Կը խոյովուիմ  
 Դառնալով՝  
 «Սեռի խնդիր,  
 Սիրոյ ցայգահրաւէր . . .» :

\*\*

Մաքա Հարի,  
 Ի՞նչ ես արդեօք,  
 Գաղափարի հաւատաւոր ուխտակի՞ց,  
 Թէ՛ նենգ տիպար մաքիավէլեան . . . :

Օճահմա՛յ պերնազիմ,  
 Քանի՞ զիշեր պիտի կանչես զիս այսպէս  
 Հնարամիտ գրգանքներուդ կոչումիմ,  
 Խեղդես իմ մէջ  
 Ցանկութեամբ բոցուն  
 Հետախոյզ մտքիս սազմը կենսաւիշ :

Դուն, ո՛վ հեզնանք,  
 Ճակատագրիս գուցէ կերպարն ես տարբեր,  
 Կը զննես կեանքս,  
 Սէրս,  
 Բազկերա՛կը մտածումիս՝  
 Ճարտարութեամբ երկփեղկեան . . . :

Ասորեայիս շուրթերուն,  
 Դուն՝ համբոյր մատնութեան  
 Եւ խոհերուս քանցքներուն՝  
 Ցածոզ բերփահաւաք :

Կ'արիւնին իզձերս ծարաւ  
 Մատներուդ չվերծանուող խորհուրդով,  
 Մինչ գայրոյթէս դողահար՝  
 Կը փշրի՛ ահա  
 Պատրանքներուդ  
 Վերջին բաժակն ափիս մէջ . . . :

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ժ Ա Ն Ժ Ը Ն Է

«Ա Ղ Ա Խ Ի Ն Ն Ե Ր Ը»

Հայացուց

Է Լ Ծ Ս Ա Ր Ա Ճ Ե Ա Ն

ՍՈՒԱՆԺ.— Պէտք չկայ տակնուվրայ ըլլալու: Ես տեսած եմ ասկէ աւելի գէշ պարագաներու մէջ դոնտուզնեքուն արձակուժր: Դատաւարութիւն մը կար Պորտոյի մէջ...

ՏԻԿԻՆԸ.— Դատաւարութիւններո՞ւ ալ ներկայ կ'ըլլաս: Դո՞ւն:

ՍՈՒԱՆԺ.— Կր կարողամ ոճրային լուրերը: Անոնցմէ մէկը մարդու մը մասին էր, որ...

ՏԻԿԻՆԸ.— Ձեռ կ'ընար Պարոնին պարագային հետ բաղդատել: Ան ամբաստանուած է ամենաստոր գողութիւններու համար: Գիտեմ, որ յաղթական դուրս պիտի գայ այս վերջինէն: Ամբողջ բեկ ուզածս այն է, որ իբրեւ արդիւնք այս արտասոցութեան, իրազեկ կ'ըլլամ այն իրողութեան, որ որքա՞ն խորացկա կուպած եմ իրեն: Անշուշտ, ամբաստանութիւններէն ոչ մէկը լուրջ է, բայց նոյնիսկ Էթէ ըլլար, Սուլանժ, ուրախ պիտի ըլլայի, միասին կրելու իր խաչը: Պիտի հետեւէի իրեն տեղէ տեղ, եւ բանտէ բանտ, քալելով եթէ հարկ ըլլար, մինչեւ կեդրոնացման ճամբար:

ՍՈՒԱՆԺ.— Պիտի շարտանէին զեզի: Աւագակնեքուն կրնեքը, ըստերը կամ մայրերը միայն արտօնուած են հետեւելու անոնց:

ՏԻԿԻՆԸ.— Վճիռ ստացած մարդ մը ավագակ չէ այլեւս: Եւ արդէն այն ատեն ես կամքս պարտադրելով ներս պիտի մտնէի, անցնելով պահակներու ցանցէն: (Յանկարծ պըրասիրական ոմ մը առնելով): Եւ կոտորելու պէտք անվախ պիտի ըլլայի, Սուլանժ: Ի դարձ պիտի զնէի իմ զէնքերս: Ի՞նչ կը կարծես դիս:

ՍՈՒԱՆԺ.— Նման մտածումներ պէտք չէ ունենայ Տիկինը: Պէտք է հանդիւրք:

ՏԻԿԻՆԸ.— Յողնած չեմ: Անկար մը կը կարծես դիս եւ այդպէս կը վարուիս հետս: Շարունակ պատրաստ ես շուշելու եւ փայփայելու դիս, կարծես մահամերձ ըլլայի: Փա՞ռք Աստուծոյ, արամաբանելու կարողութիւնս կը պահեմ դեռ, պատրաստ եմ պայքարելու: (Կը նայի Սուլանժին եւ, զգարով որ վիրաւորած է զինք, կ'անլցնէ ժպտելով): Լա՛ւ, լա՛ւ, մի խոժոռեր գէ՞ժքդ: (Յանկարծական կատաղութեամբ): Շատ աղէկ, ճիշդ

է: Երբեմն այնքան քաղցր կ'ըլլաւ, որ չեմ կրնար տանել ներկայութեանդ: Կը փշրուիմ, կը խեղդուիմ: Եւ այդ ծաղիկները, որոնք հաս կը կը գտնուին, հակադրութիւն մը կը կազմեն տեսական մթնոլորտին:

ՍՈՒՍՆԺ.— Եթէ Տիկինը ըսել կ'ուզէ, որ մեզի կը սպակոխ այն գիտակցութիւնը...

ՏԻԿԻՆԸ.— Իսոյք բնաւ այդ ըսել չէի ուզեր, սիրելի աղջիկս: Պարզապէս, շատ տակնուվրայ եմ: Կը տեսնես, թէ ի՞նչ կ'արթնան մէջ եմ:

ՍՈՒՍՆԺ.— Տիկինը պիտի ուզէ՞ր տեսնել օրուան ծախսերուն հաշուեցուցակը:

ՏԻԿԻՆԸ.— Ճի՛շդ ժամանակը ընտրեցիր: Յիմա՛ր: Կը կարծե՞ս, թէ հե՛մա կրնամ թուանշաններ հանդուրժել: Վա՛զր ցոյց տուր ինձի:

ՍՈՒՍՆԺ (վերցնելով մուշտակէ վերարկում).— Ատտառը պատուած է: Վաղը մուշտակադործին պիտի տանի:

ՏԻԿԻՆԸ.— Եթէ ուզես: Թէեւ հաղիւ թէ արժէ: Այլեւս հազուադէպով պիտի շահագրգիռուիմ, մնաց որ, արդէն պատաւ մըն եմ:

ՍՈՒՍՆԺ.— Դարձեա՛լ այդ մեղամաղձոտ մտածումները:

ՏԻԿԻՆԸ.— Կը մասնեմ սուզի մէջ մտնել: Մի՛ գարմանար, եթէ այդպէս ընեմ: Ինչպե՞ս կրնամ աշխարհիկ կեանք մը ապրիլ, երբ Պարոնը բանա կը գտնուի: Եթէ տունը շատ տխուր կը գտնէք...

ՍՈՒՍՆԺ.— Մենք բնաւ պիտի չլքենք Տիկինը:

ՏԻԿԻՆԸ.— Գիտեմ թէ պիտի չլքէք, Սուսան՝: Այդքան ալ ապերջանիկ չէք եղած իմ հետս, այդպէս չէ՞:

ՍՈՒՍՆԺ.— Օ՛հ:

ՏԻԿԻՆԸ.— Երբ որեւէ բանի պէտք ունեցած էք, շնորհած եմ ձեզի: Իմ հին սենեկազգեստներովս միայն կրնայիք իշխանութիւններու նման երեւիլ: Մընաց որ... (Կը քալէ պահարանին

ուղղութեամբ եւ կը դիտէ հազուադէպով) Ի՞նչ արժէք ունին ասոնք այլեւս ինձի համար: Այսուհետեւ ո՛չ պատուանշաններ կը հետաքրքրեն զիս, ոչ ալ որեւէ այլ բան, որ կազմեն ունի անոնց հետ: (Քլէր կը մտնէ քէյը բերելով):

ՔԼԷՐ.— Թէ՛յը պատրաստ է:

ՏԻԿԻՆԸ.— Մենք բարով հաւաքովքներուն, պարահանդէսներուն, և թատրոնին: Այդ բոլորը դուք պիտի ժառանգէք:

ՔԼԷՐ.— Տիկինը կը կորսնցնէ ինչպէ՞ք: Պէտք է ուշօր գայ:

ՍՈՒՍՆԺ.— Թէ՛յը պատրաստ է:

ՏԻԿԻՆԸ.— Դի՛ր հոն: Իս անկողին կ'երթամ: Վերջացաւ: (Կը ստեղծէ իր ձեռքը քաշեայ կարմիր հագուստի մը վրայ): Միբուն «Փեւերնախոն»-ս, ամէնէն աղուորը, որ Շանէլի կողմէ մասնաւոր ինձի համար ձեւուած էր: Ահա, ասիկ, կրնաս ունենալ: Քուկդ է: (Քլէրիմ կու տայ եւ կը պրպտէ պահարանը):

ՔԼԷՐ.— Ինձի՞:

ՏԻԿԻՆԸ (տխուր ծեւտով մը).— Անշուշտ, այդպէս ըսի, չէ՞:

ՍՈՒՍՆԺ.— Տիկինը շատ աղնիւ է: (Քլէրին): Կրնաս շնորհակալութիւն յայտնել Տիկինին: Երկար ատենէ ի վեր կը գմայլէիր այդ հազուատին:

ՔԼԷՐ.— Որքա՛ն գեղեցիկ է: Երբեք պիտի չհամարձակիմ դաշն հագնիլ:

ՏԻԿԻՆԸ.— Կրնաս շտկրտել: Թեւերուն համար բաւարար թաւիչ ունի ծալքին մէջ: Իսկ քեզի, Սոյա՛նձ, քեզի պիտի տամ... Ի՞նչ տամ քեզի: Ա՛ս, այս վերարկուն: (Մուշտակէ հայակապ վերարկում կ'երկարէ Սոյանձին):

ՔԼԷՐ.— Օ՛հ: Մուշտակէ վերարկուն:

ՍՈՒՍՆԺ (խանդավառուած).— Օ՛հ: Տիկին... երբե՛ք... Տիկինը շտկազանց աղնիւ է:

ՏԻԿԻՆԸ.— Ո՛չ, ո՛չ, շնորհակալութիւն մի՛ յայտնէք ինձի: Որքա՛ն հաճելի

է մարդիկ էրջանկացնելը: Հիմա՝ պիտի հանուիմ: (Կը ճայի հեռա-  
 ձայնի): Ո՛վ վերցուցած է ընկա-  
 րուշը:  
**Քլէօ**.— Պարոնն էր... (Յանկարծ կանգ  
 կ'առնէ):  
**Տիգրնը** (շշմած).— Է՞հ: Պարոնը:  
 (Քլէօ լուռ է): Ի՞նչ ըսել կ'ուզես:  
 Յօսէ՛:  
**Սոկրատէս** (դանդաղօրէն եւ կարծես ա-  
 կամայ).— Երբ Պարոնը հեռաձայ-  
 նեց...  
**Տիգրնը**.— Ի՞նչ բանի մասին կը խօսիս:  
 Պարոնը հեռաձայնե՞ց:  
**Սոկրատէս**.— Ուզեցինք անականկալ մը բ-  
 րեւ Տիգրնին: Պարոնը էրաշխատ-  
 րութեամբ աղաւ արձակուած է:  
 Տիգրնին կը սպասէ Հոնկ-Քոնկ Պա-  
 րնի մէջ:  
**Տիգրնը** (տաքի ելլելով).— Եւ գուք  
 բա՛ն մը չըտիք: Թաքսի՛ մը բերէք:  
 Սոյա՛նժ, արագ, արագ: Թաքսի՛ մը  
 գտիր ինծի: Եւ արա՛գ ըրէ: Շո՛ւտ,  
 ածապարէ՛: (Սինեակէն դուրս կը  
 հրէ Սոկրատէսը): Մուշտականի՛րս, ա-  
 րագ, արագ: Երկուքդ ալ յիմար  
 էք: Եւ կամ ե՛ս սկսած եմ խնջթա-  
 նալ: (Կը հագուի մուշտակէ վերար-  
 կում: Քլէօն ին): Ե՛րբ հեռաձայնեց,  
**Քլէօ** (վիպար ձայնով մը).— Տիգրնին  
 դալէն հինգ վայրկեան տուջ:  
**Տիգրնը**.— Բայց պէտք է ըսէիք ինծի:  
 Եւ այս պաղ թէ՛ յը: Պիտի չկարե-  
 նամ սպասել Մուշտին վերադար-  
 ձին: Օ՛հ: Ի՞նչ ըսաւ Պարոնը:  
**Քլէօ**.— Ինչ որ նախապէս ըսի: Շատ  
 հանդարտ էր:  
**Տիգրնը**.— Ա՛հ, միշտ այդպէս է: Բո-  
 յրովին անտարբեր պիտի ըլլար Ե-  
 թէ մահուան ալ դատապարտուէր:  
 Եղակի մարդ մըն է: Ուրիշ Ի՞նչ ը-  
 սաւ:  
**Քլէօ**.— Ոչինչ: Ըսաւ, թէ գտաւօրը  
 դինք ազատ կ'արձակէր:  
**Տիգրնը**.— Ինչպէ՞ս կրնայ մէկը ար-  
 ձակուիլ կէս զիշերին: Դատաւորնե-  
 րը մինչեւ ուշ ատե՛ն կ'աշխատին:

**Քլէօ**.— Երբեմն նոյնիսկ աւելի ուշ:  
**Տիգրնը**.— Աւելի մ'ուշ: Դունս ուրկէ՞ դի-  
 տես ատիկա:  
**Քլէօ**.— Ես «Թրու Տիքէֆիւ» կը կար-  
 դամ: Այս բաները դիտեմ:  
**Տիգրնը** (գարնացած).— Օ՛հ, դիտե՛ս:  
 Իսկապէս եղակի աղջիկ մըն ես,  
 Քլէօ: Քոյրդ պէտք է ածապարէ:  
 (Կը ճայի ձեռքի ժամացոյցին): Պի-  
 տի չմտնաս վերաբովեիս աստաղը  
 կարել տալ:  
**Քլէօ**.— Մուշտակագործին պիտի տա-  
 նիմ դայն վաղը: (Երկար լռութիւն):  
**Տիգրնը**.— Իսկ օրուան հաշիւնե՞րը: Օր-  
 ւան հաշիւնե՞րը: Տո՛ւր տեսնեմ:  
 Ժամանակ ունիմ:  
**Քլէօ**.— Մուշտի կը գրադի անոնցմով:  
**Տիգրնը**.— Ճիշդ է: Կը դուզդամ: Վաղը  
 պիտի նայիմ անոնց: (Նայուածքը  
 սեւեռելով Քլէօն): Մտեցի՛ր քիչ  
 մը: Հո՛ս եկուր: Ի՞նչ... դէ՛մք չը-  
 պարէր ես: (Խնդալով): Ի՞նչ, Քլէօ,  
 սկսած ես դէ՛մք չպարել:  
**Քլէօ** (չափազանց շփոթած).— Տի-  
 կի՛ն...  
**Տիգրնը**.— Ա՛հ, մի՛ ստեր: Մնաց որ, Ի-  
 բուռնք ունիս: Ապրէ՛, դաւակոս,  
 սպրէ: Ի պատիւ որո՞ւ է ատիկա:  
 Է՞հ: Խորտակելու համար մէ՞կը:  
 Խոտոտվանէ՛:  
**Քլէօ**.— Քիչ մը բրնձափոշի դրի...  
**Տիգրնը**.— Ատիկա բրնձափոշի չէ, կո-  
 տարեալ արդուզարդ է: Ատոր մէջ  
 տարօրինակ բան չկայ, տակափն ե-  
 րիտասարդ ես: Գրաւիչ դարձուր  
 ինքզինքդ: Թարմացիր: (Մազիկ մը  
 կը դնէ Քլէօնի մազին: Կը ճայի ձեռ-  
 քի ժամացոյցին): Մուշտը Ի՞նչ  
 կ'ընէ արդեօք հիմա: Կէս զիշեր է եւ  
 չէ վերադարձած:  
**Քլէօ**.— Այս ժամուն դիւրին չէ քաքսի  
 գտնել: Հաւանաբար ստիպուեցաւ  
 ինքնաշարժներու կայարանը երթալ:  
**Տիգրնը**.— Այդպէ՞ս կը խորհիս: Ժամա-  
 նակի հասկացողութիւնը կորսնցու-  
 ցած եմ: Երբզած եմ ուրախութե-

նէս: Այսպիսի ժամո՛ւ մը հեռաձայնէ Պարոնը: Եւ ազա՛տ արձակուած ըլլայ:

**ՔԼԷՐ.**— Տիկինը պէտք է նստի: Պիտի երթամ եւ տաքցնեմ թէյը (Կը պատրաստուի դուրս ելլել):

**Տիկինը.**— Նեղութիւն մի՛ քաշեր, ծարաւ չեմ: Եամփայն պիտի խմենք այս դիշեր: Վստահ կրնաս ըլլալ, թէ տուն պիտի չվերադառնանք:

**ՔԼԷՐ.**— Իրապէս, չի՞ մը թէյ միայն...  
**Տիկինը (խնայալով).**— Ինչպէս կ'երեւի, բաւական չղային եմ: Ձե՛մ ուղեր, որ դուն եւ Աոյանժը սպասէք մեզի: Վեր ել եւ անմիջապէս անկողին մտիր: (Յանկարծ կը տեսնէ զարթուցիչ ժամացոյցը): Բայց... Այդ զարթուցիչը ինչո՞ւ հող կը գանուի: Ո՞վ բերած է գոյն:

**ՔԼԷՐ (չափազանց շփարած).**— Չարթուցիչը: Ատիկա խոհանոցին ժամացոյցն է:

**Տիկինը.**— Իրապէ՛ս: Բնաւ տեսած չէի:

**ՔԼԷՐ (կը վերցնէ ժամացոյցը).**— Դարակին վրայ էր: Միշտ հոն եղած է:

**Տիկինը (ծպտելով).**— Ճիշդ է, ես օտարականի նման եմ խոհանոցին մէջ: Դուք հոն հարազատ կը զգաք դուք ձեզ: Ատիկա ձե՛ր կալուածն է: Դուք այ՛տոր մենատէրնէրը: Բայց կը զարմանամ, թէ ինչո՞ւ հոս բերած էք գոյն:

**ՔԼԷՐ.**— Աոյանժն էր բերողը, մաքրութեան համար: Ան բնաւ չէր վստահեր մե՛ծ ժամացոյցին:

**Տիկինը.**— Տարօրինա՛կ:  
 (Քլեր դուրս կ'ելլէ՝ զարթուցիչը ձեռքին):

**Տարօրինա՛կ:** (Կը նայի ձեռքի ժամացոյցին): Վստահաբար կը դանդաղի: Թաքտի կարելի է գտնել իւրաքանչիւր թաղի անկիւնադարձին: (Կը նստի արքայազարդի իր սեղանին առջեւ: Ինքզինք կը դիտէ հայելիին մէջ ու կը խօսի ինքնին): Իսկ դուն, ապո՛ւշ, այնքան մը գեղեցիկ պիտի

ըլլա՞ս ընդունելու համար զինք: Ոչ մէկ կնճիւ, է՞ն: Երկար բաժանում մըն էր տեղի ունեցածը, հազար տարուան շափ երկար: Է՞ն, Տեսնենք, հիմա՛: Չուս՛րթ: Թաքտո՛ւտ: Ապուշ, դուն ապո՛ւշ, կը շարունակեմ խօսիլ ինքզինքիս հետ: Ուրախութիւնը գլխու պտոյտ կը պատահուէ ինձի: Եւ դեռ Աոյանժ մերադարձած չէ: Այդ բոլո՛ր ծաղիկները: Այդ աղջիկները կը պաշտեն դիւ, բա՛յց (կը նայի արդուարդի սեղանին եւ կը փչէ փողին), բայց սեղանին փողին տուած չեն: Անոնց առաջին աշխատանքը պերճանքի ու ապահանջութեան տարօրինակ ձուլում մըն է: (Մինչ սն կ'արտասանէ վերջին նախադասութիւնը, Քլեր ներս կը մտնէ սուփիմ մատներուն վրայ: Լուս՛ կախ կ'ստնէ Տիկինին նստելը, որ յանկարծ կը նկատէ զինք հայելիին մէջէն): Է՞ն: Կը զստանցեմ, Քլե՛ր, միտքս կը մուրրի: Ներէ ինձի: Օրս շատ սուկայի էր:

**ՔԼԷՐ.**— Տիկինը գոհ չէ՞ մեր այսօրուան աշխատանքէն:

**Տիկինը (ծպտելով).**— Բայց այո, Քլեր: Եստ գոհ եմ: Եօթներորդ երկինքը կը գտնուիմ:

**ՔԼԷՐ.**— Տիկինը կը ծաղրէ մեզ:  
**Տիկինը (խնայալով).**— Օ՛հ, կատակով մի ձանձրացնե՛ր դիւ, մի՛րջ տուր: Այն բոլորը, որ ապրած եմ այսօր, իրաւունք կու տայ ինձի սոյ՛գրականէն դուրս ելլելու: Առաջին հերթին՝ կայ ոստիկանութեան ուղղուած նամակներուն պարագան... Ինքզինքիս հարց կու տամ, որ ո՞վ կրնայ զըրկած ըլլալ գանձը: Կ'ենթադրեմ, որ գաղափար չունիք այդ մասին:

**ՔԼԷՐ.**— Տիկինը ըսել կ'ուզէ, որ...  
**Տիկինը.**— Ես որեւէ՛ բան ըսել չեմ ուզեր: Կ'ուզեմ դիտեալ, այս է ամէնը: Ամբողջ օրը կը խորխորակէի կոյրի մը պէս: Չգայնութիւնը ունեցայ այն օստիկանին, որ թուփերուն մէջ կորսուած աղջկան մը դիտել կը փնտռէ:

Քլէի՛ր — Այդ բոլորը վերջացած են: Պարտնը ազատ է:

Տիկինը. — Փա՛ռք Աստուծոյ: Այդ նամակները իմատու չունին այլեւս: Ի՞նչ կրնայ ընել Սուրենի հիմա: Մէկ ժամ կ'ընէ Էրթայրը: Ինչո՞ւ անմիջապէս չբարեկարգի, թէ Պարտնը հեռաձայնած էր: Պիտի ըզայնանայ:

Քլէի՛ր. — Շատ կ'ը վախճայինք անակնկալի մատնելէ Տիկինը, ցնցում մը չպատճառելու համար անոր:

Ինչի՛նչ. — Փայլուն միտք է ատիկա: Ի՞նչք ծաղիկներով ու ազնուութեամբ դանդաղորէն կ'ը սպաննէք զիս: Գեղեցիկ օր մը մեռած պիտի գտնուիմ վարդերուն միջեւ: Քի՛չք, Ի՞նչ է կարծիքդ մաղի այս յարգարանքին մասին: Կ'ը հաւնի՞ս:

Քլէի՛ր. — Եթէ յանդիմանի՞ր...

Ինչի՛նչ. — Ի՞նչ: Եթէ յանդիմանի՞ր: Լա՛ւ: յանդիմանի՞ր: Մեծ վստահութիւն ունիմ թու կարծիքիդ: Լա՛ւ: Ի՞նչ կ'ը խորհիս այդ մասին:

Քլէի՛ր. — Եթէ համարձակիմ դիտողութիւն մը ընելու՝ Տիկինին մարդ աւելի վախճուի պէտք է Էրեւէր անոր ճակտին:

Տիկինը. — Վստա՞հ ես:

Քլէի՛ր. — Ատիկա պիտի քնքշայնէր Տիկինին զէ՛մքը:

Տիկինը. — Այսպէ՞ս: Ճիշդ ես: Դուն պայծառամիտ ազիլիկ մըն ես, Քի՛չք: Գիտես, Քի՛չք, ես միշտ մտածած եմ, թէ յարձր ճաշակի տէր եղած ես, եւ թէ՛ կոչուած ես աւելի լաւ բուներու:

Քլէի՛ր. — Դժգոհ չեմ վիճակէս:

Տիկինը. — Ո՛հ, ո՛հ, դիտեմ: Բայց առով հանդերձ, դուն աւելի զգայուն ես, քան ուրիշները: Գիտեմ, թէ շատ հաճելի չէ զեղի համար ապրիլ անոնց հետ: Ի՞նչք բնատնիք մըն էք: Բայց պզտիկ բախտով մը դուք...

Քլէի՛ր. — Ս՛հ: Եթէ ուզած ըլլայի:

Տիկինը. — Ձե՛մ կասկածիք: (Մտիկ կ'ընէ): Լա՛հ: (Ոտքի կ'ընէ): Լա՛հ: Ինչքաշարժ մը: Ի՞նչքն է: Ա՛հ: (Հա-

յիլիկ մէջ կրկին կ'ը դիտէ իմէզինքնը):

Քլէի՛ր. — Տիկինը պէտք է քիչ մը թէյ խմէ, օդը ցուրտ է:

Տիկինը (խօսակցելով). — Կ'ը փորձես ստաննել զիս քու թէյովդ, ծաղիկներովդ ու թեյադրանքներովդ: Շատ հոգածու ես ինծի հանդէպ, Քի՛չք: Ո՛հ: Երբեք այսքան կենտունակ չեմ զգացած ինքզինքս: Ս՛հ: Եւ սպասարկուած՝ թէյի լաւագոյն կազմածով մը: Այսքա՛ն պերճանք: Այսքա՛ն վայելչութիւն: (Կ'ընէ զուրս ելլել, բայց Քի՛ւր անոր աւ շլամ միջեւ կ'ը կեցայ):

Քլէի՛ր (ազերսակախօրէի). — Տիկինը պէտք է խմէ թէյը: Այլապէս... (Սոված ցնք կ'ը խոյանայ: Մէկդի կ'ը կրէ քոյրը եւ կ'ը դառնայ Տիկինին):

Տիկինը. — Լա՛ւ:

ՍՈՒՍՆԺ (գարնացած). — Ա՛հ: Տիկինը հո՞ս է զեւ: Ամէն տեղ վնասեցի: Ոչ ոք ուղեց զալ այսքան ուշ ատեն:

Տիկինը. — Բերի՛ր թաքսին:

ՍՈՒՍՆԺ. — Հոս է, Տիկին, վարն է, Տիկին:

Տիկինը. — Աճապարհե՛ք: Ուրեմն հասկընալի է, վեր պէտք է ելլէք ու քրոնանաք: Եւ վաղը առտու մենք պարտապէս պիտի քնանանք, ու քնանանք, ու քնանանք: Քի՛չք, եկուր եւ դուռը գոցէ ետեւէս: Եւ պէտք չէ որ կողմէք զայն:

(Կ'ը ձգէ սեղեակը, Քի՛ւր կ'ը հետեւի անոր: Սոված միմակ կ'ը մնայ: Քի՛ւր կ'ը վերադառնայ: Երկու քոյրերը կ'ը նային իրարու):

ՍՈՒՍՆԺ (հեզակալով). — Վստահարար լաւ գործ մը ըրիք: Եւ կ'ը ծաղրէիք զիս:

Քլէի՛ր. — Մի՛ խօսիր: Շատ փորձեցի չըսել, բայց չկրցայ զսպել ինքզինքս:

ՍՈՒՍՆԺ. — Ձիմե՛ց: (Քի՛ւր կ'ը շարժելի գլուխը քոչք ըսելու ձեւով): Բացայայտօրէն: Կ'ը անկախութիւնը այդ մէկը:



**ՔԼԻՐ** — Պիտի ուզէի տեսնել թեզ  
իմ տեղս: (վաշրկեանի մը հասար  
կը մնայ անշարժ եւ ապա կը օկսի  
քալել խահանգին ուղղութեամբ):

**ՍՈՒԱՆԺ** — Ո՞ր կ'երթաս:  
**ՔԼԻՐ** (տաանց ետեւ դառնալու եւ նուա-  
զուն օայնով մը) — Քնանալու:  
(Դուրս կ'ելլէ):

**ՍՈՒԱՆԺ** — Քչէ՛ր: (Լուսփիւն): Քչէ՛ր:  
(Կ'երթայ դէպի դուռը եւ կը կանչէ  
զինքն): Քչէ՛ր, թեզ կը կանչեմ:

**ՔԼԻՐ** (քեմիկ հոնէն) — Որո՞ւ հոգր:  
**ՍՈՒԱՆԺ** (դրան դիմացը, աչիւն) — Հո՞ս  
եկուր: Կը լսե՞ս: Հո՞ս եկուր: (Քչէր  
իւր գոզնոցը քակելով կու գայ):

**ՔԼԻՐ** (շատ ուժասպառ) — Ի՞նչ կ'ու-  
զես: Ի՞մ սխալս է: Թայլը — Ինչպէ՞ս  
ինք կ'ըսէ — պատրաստ էր: Դեղա-  
Պատեհերը դրած էի անոր մէջ: Չու-  
զեց խմել:

**ՍՈՒԱՆԺ** — Եւ կը խորհի՞ս, թէ պիտի  
նստինք ու ցնցուինք: (հստօրէն կը  
սննտէ աչիւրը քոյրը վրայ): Վաղը,  
հաւանաբար երկուքն ալ պիտի վե-  
րադառնան խմած, անտակ՝ նուա-  
ճողներու պէս: Անոնք պիտի իմա-  
նան, թէ նամակները ուրկէ՞ ղրկու-  
ած էին: Անոնք — կ'ստե՛մ զինք:  
(Քչէր կը թօթուէ իր ստերը): Օ՞հ,  
կ'ստե՛մ Տիկինը: Կը գանձի՞ իրմէ:  
Եւ դուն, դուն պարզապէս անաս-  
րեր ես: Չտեսա՞ր ինչպէս կը ճառա-  
դայթէր: Որքա՞ն զղուելիօրէն ու-  
րախ էր: Անոր երջանկութիւնը կը  
սնուցուի մեր ամօթին վրայ: Անոր  
մեխակը մեր ամօթին կարծիրն է:  
Անոր հազուատը... (Կից մը կը գար-  
նէ քուլիչէ կարմիր հագուստին): Ա-  
տիկա մեր ամօթին կարծիրն է: Ա-  
նոր մուշտակները... Մ՛հ: Եւ առաւ  
իր մուշտակները: Եւ դուն պարզա-  
պէս անտարբեր ես: Եւ չես ճշտր:  
Մեռա՞ծ ես:

**ՔԼԻՐ** — Ի՞նչ կ'ուզես որ ընեմ: Խոյս  
տուաւ մեր ձեռքէն: Շատ կանուխ  
փերազարձար:

**ՍՈՒԱՆԺ** — Ան կ'երթայ եւ դուն պար-  
զապէս անտարբեր ես:

**ՔԼԻՐ** — Ի՞նչ կ'ուզես ընել: Տեսարա՞ն  
մը սարքենք: Է՞հ: (Կը նշայ Սոյան-  
ժին երեսին, որ կը մնայ անշարժ):  
Կ'ուզես, որ տեսարա՞ն մը սարքենք:  
Պատասխանէ՛: Պատասխանէ՛: Լաւ,  
պատասխանէ՛: Ժամանակ ունինք:  
Ամբողջ գիշեր՛բ ունինք:

**ՍՈՒԱՆԺ** (շատ հանգարտ բռնով մը) —  
Շարունակենք այդ գործը:

**ՔԼԻՐ** — Ինչո՞ւ անպարտէ: Ո՛չ, լայն  
ժամանակ պիտի տրամադրենք ա-  
նոր, սկսի՛նք: (Կը բակէ գոզնոցը):

**ՍՈՒԱՆԺ** — Գոզնոցը թող մնայ: Քու  
կարգը է:

**ՔԼԻՐ** — Ո՛չ, ատիկա հարց մը չէ:  
**ՍՈՒԱՆԺ** — Տիկինը ըլլալու կարգը ի՞մ  
է:

**ՔԼԻՐ** — Ա՛ս գոզնոցր:  
**ՍՈՒԱՆԺ** — Բայց, Քչէ՛ր...

**ՔԼԻՐ** (պարզօրէն) — Վարժուած եմ ա-  
տոր: Ա՛ս: (Ան գոզնոցը մեղմօրէն  
կ'երկարէ Սոյանժին): Կը խորհի՞ս,  
թէ իրապէս չըթունքիս ներկը շատ  
դրած եմ:

**ՍՈՒԱՆԺ** — Կարծիր նե՞րկը: Այո՛, թեզ  
մը ներկ մնացած է... Բայց միայն  
չըթնե՞րկ ներկած չես: Ամբողջովին  
չպարուած ես:

**ՔԼԻՐ** — Նոյն բանը Տիկինն ալ րուս:  
**ՍՈՒԱՆԺ** — Վերջացած է: (Կը խլէ գոզ-  
նոցը): Պարտադրուած եմ հոգնե-  
լու: Բայց ես կ'ուզեմ իսկական ա-  
դախին մը ըլլալ: (Կ'ամրացնէ կա-  
պիքը կոնակին): Մարէ՛ լույս:

**ՔԼԻՐ** (երկչոտութեամբ) — Դուն...  
դուն չե՞ս ուզեր, որ մենք... որ  
դէպքերը դասուորենք մտեթին մէջ:  
**ՍՈՒԱՆԺ** — Ըսածիս պէս ըրէ: (Կը մարէ  
լոյսը: Սեննակը կիսամութի մէջ է:  
Երկու ճոյրերը իրարու կը ճայիմ, ու  
կը խօսակցին առանց շարժելու):

**ՔԼԻՐ** — Օ՛հ: Քիչ մը սպասենք, Մո-  
յանժ: Ենթադրենք, որ փերազար-  
ձաւ: Տիկինը կրնայ բան մը մտցած  
ըլլալ: Նման պարագաներու մարդ  
միշտ կրնայ բան մը մտնալ... Իր  
պայուսակը, կամ դրամ, կամ...  
**ՍՈՒԱՆԺ** — Միամի՛տ:

**ՔԼԷՐ** (մրբմըթալով) — Այնպիսի՝ ամուսնացածների մը ժեկնեցաւ: Կրնայ ծուղակ մը ըլլալ ատիկա մեղի համար: Տիկինը կը կասկածի քանի մը: **ՍՈՒԱՆԺ** (թօթուկով ուտելը) — Ի՞նչ, օրինակ: **ՔԼԷՐ** — Կասկածամտիս է: Հսկողութեան տակ ենք... **ՍՈՒԱՆԺ** — Ուրեմն Ի՞նչ: Այդ սահմանէն անդին կը դանտինք: **ՔԼԷՐ** (կ'ուզէ ժամանակ շահիլ) — Ձեռ մտիկ չես ընել, Սոլա՛նժ: Կը վըստահեցնենք քեզի, բան մը կը զգամ, կը զգամ ատիկա: Մտիկ ըրէ, կը լրտեսուինք: Վստահ եմ պիտի մտադատնայ անակնկալօրէն: Կրնայ մոռցած ըլլալ իր թաշկինակը, կամ մեռնոցները: (Սուլամի կը թօթուէ ուտելը): Կամ իր զարդատուփը: Աստուած գիտէ Ի՞նչ: Բայց կը զգամ, որ բան մը կայ հոս, Սոլա՛նժ — բան մը այս սենեակին մէջ, որ կրնայ արժանադրել մեր արարքները եւ վերարտադրել զանոնք: Ձրմոռնաս, որ Տիկինը թելադրեց մեզի չկրպակի դուռը... **ՍՈՒԱՆԺ** — Կը զստանցես: **ՔԼԷՐ** — Ձեռ զստանցեր: Ո՛չ: Հաճիս, սպասէ, հաճի՛ս, խնդիրը այնքան լուրջ է: Ենթադրենք, որ վերադարձաւ... **ՍՈՒԱՆԺ** — Ծառ դէչ կ'ըլլայ իրեն համար: **ՔԼԷՐ** — Սոսկալի կը գտնաս, Սոլա՛նժ: Աժէն բանի համար ունիս պատասխան մը, առնուազն... **ՍՈՒԱՆԺ** — Ի՞նչ: **ՔԼԷՐ** (երկչտուրեամբ) — Առնուազն... աղօթք մը ընէ՞նք: **ՍՈՒԱՆԺ** — Կը համարձակիս յիշել Աստուծոյ անունը... **ՔԼԷՐ** — Բայց Սուրբին... **ՍՈՒԱՆԺ** — Աստուածամա՞յրը միջամտի ընենք արարողութեան: Իրապէս, դուն աւելի քան տէրն ես ջիզերուդ: Աժօթի գրացում չունիս: **ՔԼԷՐ** — Աւելի մեղմ, Սոլա՛նժ, պատե՛րը բարակ են:

**ՍՈՒԱՆԺ** (նուագ բարձր) — Կը խենթանաս, Քլէ՛ր: Աստուած մտիկ կ'ընէ մեղ: Գիտենք, որ Անոր համար պիտի ներկայացուի վերջին արարք: Բայց պէտք չէ որ նախագուշակենք Ձինք: Մինչեւ ծայրը պիտի խաղանք դայն: **ՔԼԷՐ** — Ոչ այդքան բարձր: **ՍՈՒԱՆԺ** — Գատերը Անոր սկանջներն են: **ՔԼԷՐ** — Ուրեմն ճերմակ հագուստը պիտի հագնիմ: **ՍՈՒԱՆԺ** — Եթէ ուզես: Տարբերութիւն չունի: Բայց՝ անապարենք: Ձգնք երկրորդական խնդիրները եւ անցնինք հիմնականին: Երկուր ատեն է վեր դադրած ենք դարձուածքներու, մանուածապատ խօսքերու եւ սուտերու պէտք ունենայէ: Ուղղակի խնդրին անցնինք: Աճապարենք: Աճապարենք: Ձեռ կրնար ամօթն ու նուաստացումը տանիլ այլեւս: Որո՛ւ հողը եթէ աշխարհ մտիկ կ'ընէ մեղ, ժպտի, իր ուսերը թօթուէ եւ ըսէ, թէ ես խենթ եմ ու նախանձուս: Կը դողամ, կը դողամ ուրախութիւնէս: Քլէ՛ր, ճիշտ մը պէս պիտի խրինջում ուրախութիւնէս: (Այս խօսակցութեան ընթացքին, Քլէր անցած է փարուանի մը ետեւը եւ հագուած ճիւղակի հագուստը՝ իր սեւ հագուստին վրայէն, որուն սեւ քեզամիջերը կ'երևին տակէն): **ՔԼԷՐ** (ամբողջովին ներմակներու մէջ երեւելով, հրամայական ձայնով մը) — Սկսէ՛: **ՍՈՒԱՆԺ** (երթորէն) — Գեղեցիկ ես: **ՔԼԷՐ** — Մոռցիր ատիկա: Ըօհր, որ զանց առնենք նախաբանը: Սկսէ՛ նախատինջներէն: **ՍՈՒԱՆԺ** — Երբեք պիտի չկարենամ ընել ատիկա: Կը շլացնես զիս: **ՔԼԷՐ** — Նախատինջներէն ըսի: Թոյլ տուր, որ զան, թոյլ տուր, որ երեւան զան, խեղճն զիս, որովհետեւ, լաւ գիտես, կը գանիմ սպասուողներէն: Մտորին եւ պժգալի սերունդ, կը գանիմ իրենցմէ: Անոնք մարդ-

կային ցեղէն չեն: Սպասաւորները արիւնաքամ կ'ընեն մեզ: Յիմար դրսեւորում մըն են անոնք, որոնք կ'անցնին մեր սենեակներէն և սրահներէն, կը կաթկթին մեր մէջ, կը մտնեն մեր բերանները, ապահանջով մեզ: Կը փոխեմ թեզ:

ՍՈՒԱՆԺ.— Ծարունակէ': (Լուսիւն: Քլէր կը հագայ): Ծարունակէ': Հոն կը հասնիմ, հոն կը հասնիմ:

ՔԼԷՐ.— Քիտեմ, որ սպասաւորները անհրաժեշտ են, այնպէս՝ ինչպէս դերեզմանադորները, աղբահաւաքներն ու աստիպանները անհրաժեշտ են: Այսուհանդերձ, անոնք նեխած ամբողջութիւն մըն են:

ՍՈՒԱՆԺ.— Ծարունակէ', շարունակէ':

ՔԼԷՐ.— Ձեր սարսափահար ու մեղաւոր դէմքերը, ձեր կենտոնած արմուկները, փոթփոթած հագուստները, պղծուած մարմինները կը յարմարին միայն մեր անգործածելի իրերուն: Գուցէ մեր խորտակուած հայելիներն էք, մեր դանելի ձեւերը, մեր ամօթը, մեր քաշկոտու ջը:

ՍՈՒԱՆԺ.— Ծարունակէ', շարունակէ':

ՔԼԷՐ.— Հաճի՛ս, աճապարէ: Հաճի՛ս: Ձեմ կրնար շարունակել: Դո՛ւն... Դո՛ւն... Ատուտ՝ իմ, ոչ մէկ բանի մասին կրնամ մտածել: Միտքս ունայնութիւն է: Արհամարհանքերէ զղուած և: Քլէ՛ր, կը սպասես զիս:

ՍՈՒԱՆԺ.— Կեցի՛ր: Հասած եմ հող: Կարգս է: — Տիկինը ունէր իր մուրհակները ևւ հոյուերգութիւնները, իր սիրահարները, իր կաթնավաճառը...

ՔԼԷՐ.— Սոյա՛նծ...

ՍՈՒԱՆԺ.— Լուսի՛ն: Իր առտուն կաթնավաճառը, մթնշաղի պտազոմարերը, իր փարթած սրնգահարը, իր ամգոյն ևւ հմայիչ սիրտկանը: Վերջացած է: (Վար կ'առնէ միավարաքանակ խարտակ մը): Տեղդ զբաւէ պարտանդէսին համար:

ՔԼԷՐ.— Ի՞նչ կ'ընես:

ՍՈՒԱՆԺ (հանդիսաւորապէս)— Կը քըն-

նեմ դէպքերուն ընթացքը: Ծունկի՛ եկուր:

ՔԼԷՐ.— Սոյա՛նծ...

ՍՈՒԱՆԺ.— Ծունկի՛ եկուր: (Քլէր կը տատամսի ևւ ծունկի կու գայ): Ա՛հ, Ա՛հ: Ծառ զեղեցիկ էիք, այն պահուն, երբ կը դաշարէէր թանկագին բազուկներդ: Արցունքներդ կաթիլ-կաթիլ կը ձորէին սիրուն դէմքէդ վար: Ա՛հ: Ա՛հ: Գեախն: (Քլէր շի շարժիր): Գեախն: (Սուսմի կը գարնէ անար): Երկնցի՛ր: (Քլէր կ'ընդհարձայ): Ա՛հ: Կը զուարճացնես զիս, սիրելիս: Սողա՛: Սողա՛ կ'ընեմ քեզի, որզի՛ մը պէս: Եւ զսոն պիտի հետեւէիր նաւերուն շարժելուն, կտրելու համար ծովը, օգնելու ևւ հանգստացնելու քու փարթած աքսորեալդ: Դիտէ ինքզինքդ Նորէն: Այդ դերը վերապահուած է պեղեցիկներու զեղեցիկին միայն: Պահակները պիտի քրքջան: Մարդիկ պիտի մատնանչեն քեզ: Միբահարդ պիտի կախէ իր գլուխը ամօթէն: Եւ զուն զօրաւոր ևւ պէտք եղածին շափ, այնքան զօրուար, որ կրես անոր բեռը: Բաւական ուժե՞ր ևւ, Տիկին, ուժեղ՝ ոտքի կարենալ մնալու համար: Մի՛ մտահոգուիր: Նախանձու չեմ: Հոն ուր կ'երթամ, պէտք չունիմ այդ աւազակին: Ո՛չ, Տիկին: Ես առանձինս միտմամտ հակ թէ՛ աւազակն եմ ևւ թէ՛ անոր սարկական ստուերը: Առանձինս կ'ուզողու՛մ դէպի ամէնէն պայծառ ծովափները:

ՔԼԷՐ.— Կը կորսնցնեմ զինք:

ՍՈՒԱՆԺ.— Բաւարար չե՞մ քեզի համար:

ՔԼԷՐ.— Սոյա՛նծ, հաճի՛ս, կը խեղդուիմ:

ՍՈՒԱՆԺ.— Խեղդուէ՛: Բայց վերստին բարձրացիր մակերեսը: Քիտեմ, թէ ինչ պիտի ըլլայ իմ ճակատագիրս: Հասած եմ պատասպարան: Կրնամ առտնձին ըլլալ: (Շունչ մը կ'առնէ): Ոտքի ե՛լ: Պիտի ամուսնանամ հետդ՝ ուզեա կամ ոչ: Ա՛հ: Ա՛հ: Սողոս-

կիւ կարպետին վրայ աղամարդու մը  
ոտքերուն առջեւ: Ի՞նչ ախար, գիւ-  
րին շարժուձեւ: Մեծ արարքը պէտք  
է որ զեղնեցկորէն աւարտի: Ինչպէ՞ս  
ոտքի պիտի հլլես:

ՔԼԷՐ (ստի էլլիով գանգաղօրէն և ան-  
նարակօրէն) — Կը սպաննես զիս:

ՍՈՒԱՆԺ (հեզմանով) — Ուշադիր հի-  
մա, կառավարէ՛ շարժումներդ:

ՔԼԷՐ (ստի) — Մեր խորութենէն դուրս  
էլած ենք: Պէտք է անկողին եր-  
թանք: Վիզա կը...

ՍՈՒԱՆԺ (ստուտով մը անոր կը մտն-  
նայ) — Տիկինը սիրուն վիզ մը ու-  
նի: Թագուհիի մը վիզը: (Քիչը  
կ'ուղղուի դէպի խոհանոցին դուռը):  
Տատրակի մը վիզը: Եկո՛ւր, վայրի  
տատրակս:

ՔԼԷՐ (ետ կը քաշէ գայն, դնելով ձեռ-  
քերը անոր վիզին՝ պաշտպանելու  
ձեռով) — Ուշ է:

ՍՈՒԱՆԺ — Ոչ շատ ուշ:

ՔԼԷՐ — Տիկինը...

ՍՈՒԱՆԺ — ...շամփայն կը խմէ Պարո-  
նին հետ, որ վերադարձած է մաշ-  
ւընէ:

ՔԼԷՐ — Տիկինը որեւէ մէկ վայրկեան  
կրնայ վերադառնալ: Թոյլ առբ, որ  
երթամ:

ՍՈՒԱՆԺ — Մի՛ մտահոգուիր: Ան շուրջ-  
պար կը դառնայ հիմա: Շուրջպար  
կը դառնայ: Ընտիր գիծի կը կոնծէ:  
Յնորած է:

ՔԼԷՐ — Դուրս էլլենք հոսկէ, Սուրճի:  
Քեզի կ'ըսես, վտանգուած ենք:

ՍՈՒԱՆԺ — Փնա՛ հանդերձարան: (Խո-  
հանոցին դուռը կը մատնանշէ): Շա-  
րունակի՛, ներս: Պէտք է որ վերջա-  
ցնես խօսքը:

ՔԼԷՐ (կը նշայ կեղծ ձայնով մը) —  
Օգնութի՛ւն:

ՍՈՒԱՆԺ — Մի՛ պոռչուար: Անօդուտ է:  
Մաշը ներկայ է, եւ կը մտնենայ թե-  
ղի: Մի՛ պոռչուար: Այն ձեռով, որ  
ես պահպանեցի թեղ, այդ ձեռով  
կատուի ձագերը կը պահպանեն՝  
խեղդելու համար: Ես, այո՛, ես, որ  
զնդանդներով ծածկեցի որսվայնս՝

փճացնելու համար բոլոր այն սաղ-  
մերը, զորս նետեցի տիղմին մէջ,  
Որպէսզէ պահեմ թեղ, ունենամ քեզ  
ողջ:

ՔԼԷՐ (սննեակին մէջ վազվզելով) —  
Սուրճի՛, Սուրճի՛, ինքզինքի՛դ ե-  
կուր:

ՍՈՒԱՆԺ (անոր Խոհեւէն վազելով) —  
Ինքզինքի՛դ:

ՔԼԷՐ (թոյլ ձայնով մը) — Օգնութի՛ւն:

ՍՈՒԱՆԺ — Մի՛ ճլար: Ոչ ոք կրնայ լը-  
սել թեղ: Երկուքս ալ ցանկապատին  
միւս կողմն ենք:

ՔԼԷՐ — Սուրճի՛...

ՍՈՒԱՆԺ — Ամէն մտքը մտիկ կ'ընէ,  
բայց ոչ ոք պիտի լսէ:

ՔԼԷՐ — Հիւանդ եմ...

ՍՈՒԱՆԺ — Հոն լաւ հող պիտի տանին  
թեղի:

ՔԼԷՐ — Հիւանդ եմ... ես... Հիւանդ  
պիտի բլլամ... (կը քուի սիրախառ-  
նուք ունենալ):

ՍՈՒԱՆԺ (կը մտննայ անոր եւ կ'ըսէ  
համակրայից ոճով մը) — Իրապէ՞ս:  
Իրապէ՞ս հիւանդ ես: Քլէ՛ր, իրա-  
պէ՞ս հիւանդ կը զգաս ինքզինքդ:  
ՔԼԷՐ — Ես, ես պիտի...

ՍՈՒԱՆԺ — Ո՛ւ հոս, Քլէ՛ր, զսպէ ինք-  
զինքդ: (կը վերցնէ գայն): Հոս չէ,  
հաճիս, հաճի՛ս: Եկուր: Կոթի՛ք ին-  
ծի: Հո՛ն: Մեղմօրէն քայլէ: Աւելի  
լաւ պիտի բլլանք հոն, մեր ծագկա-  
ւէտ կայուածէն ներս: Այնպիսի՛  
կարուկ ձեւեր ունիմ վերջ մը դնելու  
բոլոր տառապանքներուն:

(Դուրս կ'իլլեն խոհանո-  
ցի դուռէն: Բեմը պարապ կը  
մնայ ժանի մը երկվայրկեամ:  
Հովի աւժգին հոսանք մը կը  
բամայ չափացուած պատու-  
հանը: Սոյանծ ներս կը մտնէ,  
աջէն, հագած է իր սեւ եւ  
կարն հագուստը: Ամբողջ  
տեսարանին ընթացքին պիտի  
քուի խօսքը ուղղել տիպար-  
ներու, որոնք երեւակայական  
են, քէն. ներկայ):

ՍՈՒԱՆԺ.— Տիկինը... Վերջապէս: Տիկինը մեռած է... խորին վրայ... խեղդամահ եղած է՝ մամաներ լուսալու յատուկ մեռնոցներով: Ի՞նչ, Օ՛հ, Տիկինը նստած կրնայ մնալ... Տիկինը զիտ կրնայ Օրիորդ Սոլանժ կոչել, այդպէ՛ս: Ատիկա այն բանին համար, զոր մատուցած եմ իրեն: Տիկինը եւ Պարոնը զիտ Օրիորդ Սոլանժ Լըմէրսիէ պիտի կոչեն... Տիկինը պէտք է հանած ըլլայ այդ սեւ հագուստը. արտօտոց է: (Տիկինն ձայնը կը կնդծէ): Հետեւաբար հարկադրուած եմ սղալ իմ աղախինիս մահը: Մինչ կը ձգէի գերեզմանատունը՝ չըջակայքի բոլոր սպասաւորները տողանցելով անցան քովէս, կարծէք ընտանիքի անդամ մը ըլլայի: Ես յաճախ եղած եմ ընտանիքին մէկ մասը: Մահը պիտի տեսնէ կատակը՝ մինչեւ անոր կէտէ վախճանը... Ի՞նչ: Օ՛հ: Տիկինը պէտք չունի ցաւելու: Ես Տիկինին համասուտար եմ եւ բարձր կը պահեմ գլուխս... Օ՛հ: Եւ բաներ կան, որոնց Պարոնը չի կրնար իրազեկ ըլլալ: Ան չի գիտեր, թէ ինք սովորութիւն ունէր մեր հրամաններուն ենթարկուելու: (Կը խնայ): Ա՛հ: Ա՛հ: Պարոնը ճղճիմ պղտիկ տղայ մըն էր:

Պարոնը կը հետեւէր, երբ մենք կը ծրագրէինք: Ո՛չ, պարոն Հարցաբրննիչ, ո՛չ... Պիտի չխօսիմ: Պիտի շարասանեմ բառ մը: Կը մերժեմ խօսիլ այս ոճերին բերած մեր մեղաւորութեան մասին: ... Հաղաւտուն՞րը: Օ՛հ, Տիկինը կըլնար իրեն պահած ըլլալ դանոնք: Քայս եւ ես մեր սեփական հաղաւտունները ունինք: Անոնք, զորս սովորութիւն ունէինք հազնիլ պիւլերները, դադանօրէն: Հիմա, ես ունիմ իմ սեփական հաղաւտու, եւ քեզի համահաւասար եմ: Կը հազնիմ ուրազործներու կարծիք պատուճանը: Պարոնը վրա՞ս կը խնդայ: Ան կը ժպտի ինծի: Պարոնը կը խորհի,

թէ խենթ եմ: Ան կը խորհի, թէ աղախինները պէտք է աւելի լաւ ճաշակ ունենան եւ չկապեն Տիկինին շարժումները: Պարոնը իրապէ՞ս կը ներէ ինծի: Պարոնը հոգե՞ն է պիտուութեան: Ան պիտի ուզէր իր մեծութեան մէջ մրցիլ ինծի հետ: Բայց ես չափած եմ ամէնէն ահարկու բարձրութիւնները: Տիկինը հիմա կը տեսնէ իմ միտակութիւնս — մերջապէս: Այո՛, առանձին եմ: Եւ կը վախնամ: Կրնամ անգութ բաներ ըսել, բայց՝ ազնիւ կրնամ ըլլալ... Տիկինը պիտի յաղթահարէ իր վախը: Ան տարողութիւն պիտի յաղթահարէ զայն: Ի՞նչ պիտի ըլլան իր ծաղիկները, անուշահոտութիւնները, հազուատները, գոհարեղէնները եւ սիրահարները: Իսկ ես, ես իմ քոյրս ունիմ: ... Այո՛: Կը համարձակիմ խօսիլ այս բաներուն մասին:

Կը համարձակիմ, Տիկին: Ինծի համար անկարելի բան չկայ: Եւ ո՞վ կրնայ լռեցնել զիս, ո՞վ: Ո՞վ այնքան յանդուգն կրնայ ըլլալ ըսելու համար ինծի. — «Իմ սիրելի զաւակըս» —: Ես սպասուհի մը եղած եմ: Լաւ եւ բարի: Ըրած եմ այն շարժումները, զորս աղախին մը պէտք է ընէ: Ես ժպտած եմ Տիկինին: Մտած եմ յարգարելու անկողինը, ծածո՛ շիկու կողմերները, ծածո՛ կեղուելու բանջարեղէնները, ունկեղրելու՝ դուռներուն առջեւ, փակցնելու աչքս՝ բանալիին ծակերուն: Բայց հիմա, կը կենամ ուղիղ: Եւ ամուր: Ես այն խեղդողն եմ: Օրիորդ Սոլանժ, այն անձը, որ խեղդեց իր քոյրը: ... Վերագտանա՞մ իմ անձիս: Տիկինը քեզու է, իրապէ՛ս: Բայց կը խղճամ անոր: Կը խղճամ Տիկինին սպիտակութեան, անոր սաթէ մորթին, անոր պղտիկ սկանջներուն, եւ պղտիկ դասաւորներուն... Է՛հ: Ես սեւ աղուան եմ... Օ՛հ: Օ՛հ: Ես իմ դատաւորներս ունիմ: Ես ոստիկաններուն կը

պատկանիմ: Քչէ՛ր: Ան իրապէս շատ խանդավառ էր Տիկինով... ՔՈՒ հա-  
գուստներդ նորէն: Եւ ԱՅԳ ճերմակ  
հազուստը, ԱՅԳ մէկը, զոր արդի-  
ւեցի իրեն հողնիլ, այն մէկը, զոր  
հազուսեցաք Օփերտյի պարահանդէ-  
սին գիւղեր, այն գիւղերը, երբ կը  
ծաղրէիք Տիկինը, որովհետեւ նըս-  
տած էր խոհանոցը՝ հիանալով  
Կէրի Քուփըրի նկարին վրայ... Տի-  
կինը պիտի յիշէ: Տիկինը պիտի յի-  
շէ իր ազնիւ հեղնանքը, այն մայրա-  
կան շնորհը, որով առաւ մակաղինը  
մեզմէ, եւ ժպտեցաւ: Տիկինը պիտի  
յմոռնայ նաեւ, թէ Քչէրը կոչեց էր  
Քլարինէթը: Պարտը ինչպէս ա՛յն-  
քան, որ արջուներն հոսեցան յատե-  
րէն... Է՛հ: Ո՞վ եմ ես: Աղտոնութեան  
ճեւղալային ուղին: ... Ո՛ւ, պարոն  
Հարցարնի՛չ, ոչինչ պիտի բացատ-  
րեմ անոնց ներկայութեան: Ատիկա  
Ան՛ր գիտնալիքն է: Լաւ բան մը պի-  
տի բլլար, եթէ տէրեր կարենային  
թափանցել այն ստուերներէն ներս,  
ուր ծառաները կ'ուարին... Ատիկա,  
զաւակ, մեր խաւարն է, մե՛րը:  
(Սիկարէթ մը կը վառէ, ու կը ծխէ  
անճարակօրէն: Մուխը հազ կը  
պատճառէ իրեն): Ո՛ւ ձեզի, ոչ ալ  
ուրիշ ուեէ մէկուն պիտի ըսուի բան  
մը: Միայն համոզեցէք զու՛ք ձեզ,  
թէ այս անգամ Մոլանտ գլուխ հա-  
նած է զայն... Կը տեսնէք զինք  
կարծիք հագուստով: Դուրս կ'ելլէ:  
(Կուզուի ղէպի պատուհան, կը  
բանայ, կը ցատկէ պատշգամ, կը  
դիտէ գիշերը, կոնակը համախալան  
նիւտուեայ խօսքերը: Մեղմ հով մը  
կը շարժէ վարագոյրները): Դուրս  
կ'ելլէ: Կ'իջնէ մեծ սանդուխնե-  
րէն՝ ընկերակցութեամբը ոստիկան-  
ներուն: Դուրս եկէք. մեր պատշգամ  
ները, որպէսզի տեսնէք զինք, երբ կը  
քայլէ ուրուակերպ ապաշխարողներու  
մէջէն: Կէսօր է: Ան ինը փառեւտնոց  
յուսարձակ մը կը կրէ: Դահլիճը  
շատ մօտէն կը հետեւի անոր: Անուշ

դատարկութեանը կը փոփոխայ  
ակունքին: Քչէ՛ր: Դահլիճը ըն՛՛ս է:  
Հիմա մէջքէս հանէ ձեռքը: Ան կը  
փորձէ համարել զիս: Հեռացի՛ր  
ըովէս: Ա՛հ: Ա՛հ: (Կը խնայ): Դա-  
հլիճը կը զրօնու հետո: Տիկինը պի-  
տի առաջնորդէ եւ անոր պիտի հե-  
տեւին շրջակայքի բոլոր աղախիննե-  
րը, բոլոր սպասաւորները, որոնք  
ընկերակցեցան Քչէրին զէպի անոր  
փերջին հանգստարանը: Անոնք բո-  
լորը պիտի կրեն թագ, ծաղիկներ,  
փետուրներ եւ զրօշներ: Պիտի հըն-  
չեցնեն զանոնք: Եւ զարկաւորներու  
թափօրը պիտի պարզէ իր շքերթը:  
Գեղեցիկ է, այնպէս չէ՞: Նախ կու  
զան մտանապետները, կատարեալ  
զգեստաւորումով, բայց առանց մե-  
տաքսէ աստտի: Անոնք կը կրեն ի-  
րենց թագը: Յետոյ կու գան հետե-  
ւակները, ծառաները՝ մինչև իրենց  
ծունկը երկարող տարաններով եւ  
ճերմակ դուլպաններով: Անոնք եւս  
կը կրեն իրենց թագը: Յետոյ կու  
գան սպասաւորները եւ ապա սենե-  
կապանուհիները, մեզի պէս հազ-  
ւած: Ապա՛ դո՛նապանները: Եւ ապա  
կու գան պատգամաւորները երկին-  
քէն: Եւ է՛ս կ'առաջնորդեմ զիրենք:  
Դահլիճը օրօր կ'երգէ ինծի: Կը ծա-  
փահարուիմ: Տեղոյն եմ եւ մահա-  
մերձ... (Կը վիրադառնայ սնննակ):  
Եւ ի՞նչ ծաղիկներ: Ի՞նչ փառաշուք  
յուզարկաւորութիւն մը բրին ի-  
րեն համար, այնպէս չէ՞: Օ՛հ:  
Քչէ՛ր: Խե՛ղճ փոքրիկ Քչէր: (Կը  
քաղաւի օրցումներու մէջ եւ կ'իյ-  
նայ բազկաքառի մը վրայ): Ի՞նչ:  
(Ուռի կ'իլլէ): Պէտք չկայ, Տիկին,  
կը հնազանդիմ ոստիկանութեան: Ա-  
նոնք միակ անձերն են, որոնք կը  
հասկնան զիս: Անոնք եւս կը պատ-  
կանին անօրէններու աշխարհին, այն  
աշխարհին, որուն կը զարթ մեր ու-  
նեկներով միայն:

(Հանդիսակցներու հա-  
մար միայն տեսանելի, Քչէր,  
վերջին քայլի մը վայրկեաններու)

րում ընթացքին, յեճած կը պահէ իր արմուկները խոհանոցին դրած եւ մտիկ կ'ընէ քոյրը):

Հիմա մենք կը կոչուինք Օրիորդ Առլանտ Լրմէրսիէ, ախինքն՝ Լրմէրսիէ Տիկին: Հաշակաւոր ոճրագործը: Եւ ամէն բանէ վեր, Պարոնը պէտք չունի անհանդիստ ըլլալու: Ես ազախին մը չեմ: Աղնիւ հողի մը ունիմ... (Կը բօքուէ իր աւերը): Ո՛չ, ոչ, ո՛չ իսկ մէկ րատ, սիրելի բարեկամս: Ա՛հ, Տիկինը չի մտնար, թէ ինչ րբած եմ իրեն... Ո՛չ, ո՛չ, պէտք չէ մտնայ իմ անձնուրբութիւնս...

Մինչ այդ, Քիւր կը մտնէ ձախ դուռնէն: Ճերմակ հաստ սաղմոս է):

Եւ հակառակ իմ արգելքիս, Տիկինը կը շարունակէ չըջիլ յարկարածնէն ներս: Ան պիտի հասնի նստիլ... եւ մտիկ ընել զիս... (Քիւրին): Քրիչ'ր... կը զատանցենք:

Քիւր (գտնուողովով, Տիկինին ձայնով)։— Եստ հեռուններ կ'երթաս, գաւազն: Եստ հեռունները: Գոցէ՛ պատուհանը: (Ստանձ կը գոցէ պատուհանը): Քաշէ՛ վարագոյրները: Եստ լաւ, Քիչ'ր:

ՍՈՒՍՆԺ.— Ուշ է: Ամէն ոք անկողինն է...

Քիւր (իր ձեռքով լաւ մնալու նշանը կուտայ)։— Քիչ'ր, դաւաթ մը թէ՛ լեցուր ինծի:

ՍՈՒՍՆԺ.— Բայց...

Քիւր.— Գուաթ մը թէ՛ ըսի: ՍՈՒՍՆԺ.— Մահուան շափ յողած ենք: Պէտք է զարթոցենք: (Կը բազախ քաղկաթոսի մը մէջ):

Քիւր.— Ա՛հ, ո՛չ մէկ ձեռով: Խեղճ ըսպատուր աղջիկ, կը խորհի՞ս, թէ դիւրութեամբ գլուխ պիտի հանես մեր ծրարները: Եստ պարզ պիտի ըլլար դաւադրել հոգին հետ, դիւերը ընել մէկուն մեղսակիցը: Սոլանտ, պիտի կրես զիս մէջը: Հիմա ուշադիր եղիւ:

ՍՈՒՍՆԺ.— Քիչ'ր...

Քիւր.— Ըբէ՛ աշնդէս՝ ինչպէս կ'ըսեմ քեզի: Պիտի օղնեմ քեզի: Որոշած եմ յանձն առնել առաջնորդութիւնը: Քու դերը զիս ընկրկելէ հետո պահել է, ուրիշ ոչինչ:

ՍՈՒՍՆԺ.— Աւելի թե՛ չկ'ուզես: Վերջաւորութեան հասած ենք...

Քիւր.— Մենք ճիշդ սկզբնաւորութեան կը գտնուինք:

ՍՈՒՍՆԺ.— Ուր որ են կու գան հիմա:

Քիւր.— Մտցի՛ր դիւերնք: Մինակ ենք աշխարհի մէջ: Ոչինչ գոյութիւն ունի բացի այն խորանէն, ուր երկու ազգայիններէն մէկը զոհուել վրայ է ինքզինք...

ՍՈՒՍՆԺ.— Բայց...

Քիւր.— Հանգստութի՛ւն: Ատիկա բու գործը պիտի ըլլայ, քո՛ւկդ միայն, ողջ պահելու համար երկուքս: Պէտք է շատ զօրաւոր ըլլաս: Բանտին մէջ ոչ ոք պիտի գիտնայ, որ քեզի հետ եղած եմ, զազանօրէն: Մածուկ կերպով:

ՍՈՒՍՆԺ.— Բնաւ կարող պիտի չըլլամ...

Քիւր.— Հասնի՛ս, կայնէ: Ուղիղ: Սոլանտ: Քիչ'ր: Սիրելիս, ուղիղ կայնէ հիմա, այգալէ՛ս, ողիղ: Հաւաքէ ինքզինքդ:

ՍՈՒՍՆԺ.— Կը ջանջախես զիս:

Քիւր.— Յուզ մը: Գրոշ մը: Քիչ'ր, ուղիղ սուքի: Ձիս ներկայացնելու կողմէն կ'ուզեմ քեզի...

ՍՈՒՍՆԺ.— Եստ աշխատած եմ: Սպասած:

Քիւր.— Եւրկայացնել զիս աշխարհի՛ն: (Կը փորձէ վերցնել քոյրը եւ ասիլի պահել գայն): Սիրելիս, սուքի կեցիր, ուղիղ:

ՍՈՒՍՆԺ.— Հասնի՛ս: Կ'աղաչեմ քեզի:

Քիւր (ընդամալով)։— Խնդրիմ, ոտքի կեցիր, ուղիղ:

Հանդիսաւորապէս, Քիչ'ր: Գծղեցկորէն, դեղեցկորէն: Ոտքի: Քրիչ'ր: Ոտքի, սուքերուք վրայ: (Կը բռնէ դաստակներէն եւ կը բարձրա-

ցընէ արտուն վեր) : Ոտքերուդ վը-  
րայ : Ուրեմն : Ոտքի : Ոտքի :  
**ՍՈՒԱՆԺ** .— Ձեռն գիտակցիք վտանգիս...  
**ՔԼԷՐ** .— Բայց, Սոլա՛նժ, գուն անձա՛հ  
 ես : Կրկնէ հեռա...  
**ՍՈՒԱՆԺ** .— Կոսէ : Բայց ոչ շատ բարձր :  
**ՔԼԷՐ** (մեքենականօրէն) .— Տիկինը  
 պէտք է առնէ իր թէյը :  
**ՍՈՒԱՆԺ** (քրտուքեամբ) .— Ո՛չ, պէտի  
 չկրկնեմ :  
**ՔԼԷՐ** (քանկելով անոր դաստակներէն) .—  
 Ի՞նչ քա՛ծ : Կրկնէ : Տիկինը պէտք է  
 առնէ իր թէյը :  
**ՍՈՒԱՆԺ** .— Կր գտնուի՞մ այնպիսի՞ կա-  
 ցուցեան մը մէջ, որ...  
**ՔԼԷՐ** (տակի քրտուքեամբ) .— Տիկինը  
 պէտք է առնէ իր թէյը...  
**ՍՈՒԱՆԺ** .— Տիկինը պէտք է առնէ իր  
 թէյը...  
**ՔԼԷՐ** .— Որովհետեւ պէտք է քննայ...  
**ՍՈՒԱՆԺ** .— Որովհետեւ պէտք է քննա-  
 նայ...  
**ՔԼԷՐ** .— Ես պէտք է արթուն մնամ :  
**ՍՈՒԱՆԺ** .— Ես պէտք է արթուն մնամ :  
**ՔԼԷՐ** (կը պարկի Տիկինին անկողինին  
 վրայ) .— Մի՛ ընդմիջէր նորէն : Կը  
 կրկնեմ : Մտիկ կ'ընե՛ս : Կը հնազան-  
 դե՛ս : (Սոլանժ գլուխը կը շարժէ  
 աչքոյի ձեռով) : Կը կրկնեմ, թէյս :  
**ՍՈՒԱՆԺ** (տատամելով) .— Բա՛յց...  
**ՔԼԷՐ** .— Կ'ըսեմ, թէ՛յս :  
**ՍՈՒԱՆԺ** .— Բայց, Տիկին :  
**ՔԼԷՐ** .— Լա՛ւ : Եարունակէ՛ :  
**ՍՈՒԱՆԺ** .— Բայց, Տիկին, պողտեմ է :  
**ՔԼԷՐ** .— Յամենայնպէս պիտի խմեմ

զայն : Տուր ինձի : (Սոլանժ կը բե-  
րէ ախտէն) : Եւ լեցուցած ես զայն  
 ամէնէն աղուոր թէյի կազմածին  
 մէջ : (Կ'առնէ գաւաթը եւ կը խմէ,  
 մինչ Սոլանժ, հանդիսականներուն  
 դառնալով, կ'արտասանէ իր խօսքին  
 վերջաբանը) :  
**ՍՈՒԱՆԺ** .— Նուագախումբը փայլուն  
 կերպով կը նուագէ : Բեմաձայրը կը  
 բարձրացնէ կարմիր թուիչ վարա-  
 զոյրը : Կը խոնարհի : Տիկինը կ'իջնէ  
 աստիճաններէն : Անոր մուշտակները  
 կը ջստին կոնայ խոտերուն : Տիկինը  
 ինքնաշարժ կ'ելլէ : Պարունը քաջք  
 դատարկախօսութիւններ կը փսփոսոյ  
 անոր ականջին : Տիկինը պիտի ուզէր  
 ժպտիլ, բայց մեռած է : Չանգը կը  
 հեշեցնէ : Ինչպէս կը յորանջէ : Կը  
 բանայ դուռը : Տիկինը աստիճաննե-  
 րէն վեր կը բարձրանայ : Իր յարկա-  
 բաժնէն ներս կը մտնէ — բայց, Տի-  
 կինը մեռած է : Անոր երկու աղա-  
 խիները ողջ են, անոնք նոր ոտքի  
 ելած են, ազատ՝ Տիկինին սառցա-  
 յին ձեռքէն : Բոլոր աղախիները ներ-  
 կայ են անոր կողքին — ո՛չ թէ ի-  
 րենք անձնապէս, այլ իրենց անուն-  
 ներուն զժոխային հոգեվարքներով :  
 Եւ ինչ որ կը մնայ անոնցմէ՝ ծփա-  
 լու համար Տիկինին օղային դիակին  
 վրայ, քնքուչ անուշահոտութիւնն է  
 սուրբ կոյսերուն, որոնք իրենք էին,  
 աղախիները, զաղանօրէն : Մենք  
 դեղեցիկ ենք, գուարթ, դիմով եւ ա-  
 զատ :

Վ Ա Ր Ա Պ Ո Յ Ր



Ա. Գ Ա Ր Ա Լ Է Ք Ե Ա Ն

**ՅՈՒՑԱՀԱՆԴԷՍ**

Այն բարձունքին,  
Ուր լուսքեան երկարածից համն եմ, բայրն եմ,  
Հանանչազարդ ցուցահանդէս սարքեցի՝  
Հագար հարիւր նկարներու :

Առատեան ազմուկին հետ ծնող, մեռնող  
Արգասաւոր խոստումներու եւ սառնասիրտ դրժումներու՝  
Յուզաներով խնդրած  
Կեդրոնածի՞րց նկարներ :

Առօրեայի տաժանֆներէս խռչումներու  
Մայրամուտը՝  
Մեռութեան կանքե՞րց առկայծ,  
Ու դուն՝  
Բոցավառում, լուսաւորում անհատում  
Պատրոյզին հետ բոց,  
Աչքերուս դէմ՝ նորէ՞ն դուն,  
Հողէն բարձրացող մրմունջ ու միջերկրական խոնա՛ւ տխրութեանը  
յագեցած կրկներեւոյթ...

Ի՞նչ երգներ խորտակուած կ'ընդելուզուին պատմութեան փառա տումարին,  
Կը բարձրանան, կ'ըլլան բառեր քափանցիկ  
Ու կը ժայթքին իմ նկարներուս երանգներով յուղահաս...

Նկարներն իմ կանչն են անյայտագիր ամէնօրեայ անսքեռեք  
Քատերգութեան :

Պատասաններու ներմակութեան՝  
Արիւնավառ գոյներս  
Կ'ըլլան լուրջ տրտունջ  
Ու աշխարհակալ խորունկ տխրութիւն...

ԱԶՆԻԻ ԳԱՐԱԼԷՔԵԱՆ

Բ. Կ Ռ Ա Ն Ե Ա Ն

# Տ Պ Ա Ի ՈՐ ՈՒ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

## Վ Ե Ն Ե Տ Ի Կ

Դեռ առաջին այցելութեանս ազաւորութիւնները թարմ են: Սիրելի ծանօթ մը վերագտնել: Օդը սորչ, եւ շէնքերը աւելի մաշած եւ հին կը թուին:

Նաւը կը սահի Մեծ Ջրանցքէն: Վենետիկը հետզհետէ կը թափանցէ մէջը եւ հին կարաններու մէջ ամբարտաւած հին գինիի նման կը սկսի կախարհել քեզ: Գոյները եւ հարուստ, այլազան ոճը: Գոթական սրակամարներ, արապեօք, սեւ կարապի նման կոնտուլները: Աշունը թեթեւ մշուշի քող մը ձգած է ամէն ինչի վրայ: Կը փնտռես պայծառութիւնը եւ գոյներու թրթրութեամբ՝ Դիցիանոյի կամ Թըրնրի:

Պանդուկի պատուհանը կը նայի Սան Մարկոյի աւազանին եւ Սանդա դելլո Սալուդէի դմբէթին: Կը նետուի զուրս, Փիացցա Սան Մարկօ, աշխարհի զեղեցկագոյն հրապարակներէն մէկը: Հոն են բացօթեայ սրճարանները, կամարները՝ շրջապատող շէնքերուն, աղանիները, Սուրբ Մարկոսի առասպելական եկեղեցին, կարմիր զանդակատունը: Եւ ելքը դէպի ծով: Կոնտոններու օրօրուող ցուկները: Երածշտութիւնը եւ մարդիկը: Ուրախութիւնը: Կարծես երբեք մեկնած չէիր, հոն էիր միշտ: Անյիշատակ ժամանակներէ ի վեր: Ամէն ինչ էր, ինչպէս պէտք էր ըլլար: Ոչ մէկ քաղձանք, կեանքը սրբադրելու ոչ մէկ տենչ: Ըլլալ միայն, հոն, առանց դիտակցելու ժամանակին:

Այս ուն սահաւաթիւ քաղաքներէն է, որ իր գրաւչութիւնը կը պահէ: Շատ քիչ կը փոխուի: անհատականութիւնը, իր իւրաքանչիւր գոյնն ու ոճը, միջավայրը: Ինքնաշարժ չի կրնար թափանցել հոս: Նեղ փողոցները, նկարչադեղ խանութներով: Վենետիկեան ապակին եւ յարճապակին: Ջրանցքները եւ կամուրջները: Փողովուրդը: Շատախօս, բոմանթիք, արուեստագէտ: Ջերմ եւ բնկերակաւ:

Կը փորձուիմ արտայայտել սպաւորութիւններս, որ ժիշտ խանդավառ են, բայց տարիներ առաջ զբաժ կեմ արդէն:

Կրկին կը մտնենք ահազեմիայի շեմէն ներս: Առաջին սրահը նախնականներն են: Ոսկի փորքի վրայ՝ զոյներու եւ ոճաւորուած կերպարանքներու եւ զէմքերու զգացումով հարուստ աշխարհը: Հեռանկարի չզոյութիւն կամ միամիտ նշմարներ: Իրենց փնտածը եւ զգացածը այլ է: Բիւզանդական դաման եւ «Ատտուած վրէժխնդիր»ի արուեստը մարդկայնացած է: Դարձ զէպի կեանքը, որ բանաստեղծութեամբ, քաղցրութեամբ եւ տխրութեամբ լեցուն է: Ինչ որ զիտ կ'տոխնդէ՝ միջոցներու ժուժկալութիւնն է, որով արուեստագէտը կը հասնի զգացումի նման հարստութեան եւ խորութեան: Արուեստը տակաւին ազգատ է տեսարանութեամբ, գիտութեամբ եւ թեքնիքով: Կը հաստատէ Համադուս, որ էականը տաղանդն է, որ էր արամազրութեան տակ ինչքան ալ նորինական եւ ուսմանաբազ միջոցներ ունենայ, — կ'երազորէ էր իտէալը:

Կը տնտնամ Պելլիներու առջեւ: Ոմանք հոյակապ են: Նախ՝ բանաստեղծական զգայնութիւնը, գոյներու թաւշեայ հարստութիւնը: Երկիւղածութեան, ներքին վերելքի, բառէն շփարհայի՝ միտք անէանքի, որ Արեւելքէն կու գայ: Պուտտաներու ինքնասոյզ ներհայացքը: Աչքեր, որ կեանքը կը գիտեն, բայց ներքին տարածութիւն մը ունին:

Կ'ուզեմ ծանրանալ Դինտորէտոյի վրայ: Անցեալ այցելութեանս, շիրքայ տեսնել Սան Բոպոյի դպրոցի էր նշանաւոր որմանկարները: Տեսած եմ Տոթերու պայտաի էր որմանկարները: Հոս, ահազեմիայի մէջ, է մանանարի էր «Մարդու անկուր» (Աղամ եւ Եւս) եւ «Ս. Մարկոսի հարշփ» կամ «Ս. Մարկոս կ'ազատէ գերիներ»: Վերջին նկարը էր տանին բաւական ազնուկ հանած է: Վերածնունդի հաւասարակշռութեան, խոր ու գիտակալացած հմտութեան, Հաստատուած կոնտրաստներու եւ թեքնիքին զէմ բարաստացում մը: Կատոյցի հասկացողութիւնը փոխուած է: Տա վիշիի բրգածեւ կամ հռանկիւնի բարձրման շատ հեռու է արուեստագէտը: Ձի սիրեր պարտադրուած տարազները, կը կոտրէ կաշկանդումները, կը հետեւի էր զգացումին, որ խիտ է, լարուած է, շարժումը կը սիրէ, զոյներու եւ վրձինի կատարեալ ազատութեամբ:

Դինտորէտոյ մարմնի ամենազօր նկարիչներէն է: Վենետիկցի է մինչեւ ծուծը եւ գրեթէ հոն անցուցած է էր երկար կեանքը:

Գոյնի հանդէպ արթուն եւ հարուստ է վենետիկցին: Հանգիւր, ճոխութիւնը, հեռաւոր տարածութիւնները կը սիրէ եւ հեշտու է անշուշտ: Բիւզանդական ժառանգորդը, Ալեքսիքի հետ տեւական շփման մէջ: Գորգերու, կերպասներու, զոհարի, համեմներու, տարաշխարհիկ վայրերու ազգացութիւնները զինք դարձուցած են ճաշակաւոր, երեւակայութեամբ, զգացումով եւ զգայնութեամբ հարուստ:

Դինտորէտոյի մերկ կիները ունին այս միջավայրին հեշտու հմայքը եւ արուեստագէտին եզակի խառնուածքին յակամեղները: Իրբև ոճ կեցած է էր միւս երկու քաղաքակիրթներուն՝ Դիցիանոյի եւ Վերոնէզի միջեւ: Մէկուն հեշտանքը եւ տաքութիւնը, միւսին թափանցիկ, զգայուն երանգներով արուեստագող մակերեսները (ժորթի): Եւ իւրաքանչեւ կշուէր շարժումը, ծաւայները փթթեցնելու եւ գտնոք լոյսի եւ ստուերի միացումով միջոցին մէջ ծփացնելը, էականը, որ կը զգացնեն էրենց կենդանութիւնը, որ կը

Հժայեն ու լինելու Հաճոյքին կը հրաւիրեն: Մեղք, որ Տրիդուէնի Վուզումնա եւ ծերիքը նկարին իսկականը չեմ կրցած տեսնել: Երբ ակադեմիայի սրահին մէջ կը շրջես աչքերդ, ո՛ր անկիւնէն ալ բլլայ, «Աղամ եւ Եւա»-յի մարմիններուն ճառագայթումը կը կախորդէ քեզ:

Սըուտլա տի Սան Բոգոօ կոթողային նուաճում մըն է արուեստի պատմութեան մէջ: Որոշ Համեմատութիւն պահելով, կարելի է յիշել Սիքստինի Վաստաւը եւ, թերեւս, Ռաֆայէլի «Ստանձա»: Աւելի քան քսան տարիներու ընթացքին, արդէն քառասունըհինգը անցած արուեստագէտը նկարեց աւելի քան յիսուն հսկայ պատատներ Սան Բոգոօյի Համար:

Վենետիկի պայծառ լոյսը, և շէնքերու ներքին մթութիւնը, որ ուղղակի ընդվզեցուցիչ է: Արուեստի շքեղ դործերը անհար է տեսնել, ալ խօսք չի կրնար բլլալ վայելելու մասին: Եւ իշխանութիւնները, չես դիտեր ինչու, որեւէ արուեստական լուսաւորման չեն պիտի կացութիւնը զարմանելու համար: Տոժերու պայտար, ուղղակի կը ըզայնացնէ դիտողը, որովհետեւ դեղնակութիւնը չոն է, բայց զրկուած էս զայն լիովին ըմբռնելու Հաճոյքէն: Մանաւանդ էթէ մօտենաւ բաց պատուանի մը, ուրիշ ներս կը խուժէ պայծառ լոյսը, աչքերդ կը կուրծնես եւ ոչինչ կը տեսնես: Որմանակարները իրենք ալ ժամանակի ընթացքին մրտաձեռն են, խաւ կապած են, գոյները մթնցնելով եւ անոնց պայծառութիւնը խաթարելով:

Չէի կրնար երեւակայել, որ կարելի էր աւելի ընդվզեցուցիչ կացութեան մասնօրին: Պատմիչներ կը գրեն, որ Դինտորէտտօ գոթարութեան հնթարկուեցաւ, երբ սկսաւ Սըուտլա տի Սան Բոգոօյի նկարներուն: Սրահը մութ էր եւ այդ իսկ պատճառով գոյնէն աւելի լոյսին ապակինեցաւ՝ մարմինները եւ յօրինումները երեւան հանելու Համար: Ինչ որ անհասկնալի է այսօր, իրերու ներկայ վիճակն է: Վարի սրահը քիչ թէ շատ տեսանելի է, բայց վերը, ուր պատուանի իսկ չկայ, ուր հսկայական եւ բազմաթիւ պատառները կը գրուեն ամբողջ միջոցը, միայն անուղղակի լուսաւորում մը կը տիրէ: Միտիք, խորհրդաւոր մթնոլորտ մը, որ երկիւղածութեան կը տանի: Ասիկա լաւ, թերեւս այս է եղած նպատակը թանգարանի տնօրէնութեան: Բայց այցելուները միտիք մթնոլորտին Համար չէ, որ կու գան չոն, այլ Դինտորէտտոյի նկարներուն: Եւ անհար է նկարը վայելել, էթէ չես կրնար տեսնել: Կը մղուիս դժգոհութեան եւ ուղղակի կատաղութեան: Ջանաջի աչքերս չաւելով տեսնել ինչքան որ կտրելի էր, մրթմրթալով, անմեղ Հայհոյանքներ արձակելով: Երբ վար իջայ, զնեցի գունաւոր արտադրութիւններու շարքը. ազօտ յիշողութեան եւ անոնց վրայ կը յենուն տպաւորութիւններս:

Նախ՝ ընդհանուր գործը վիթխարի է եւ մեծ: Հանճարի, Հօր անհատականութեան եւ հսկայ ու տառապագին աշխատանքի երախտիքը: Նկարիչը կը սիրէր մեծ եւ գոթարին երկերը: Տոժերու պայտարին մէջ են իր Հերքուլէսեան պատատները, «Իրախտը», որ կը նկատուի աշխարհի մեծագոյն նկարը: Սան Բոգոօյի նկարները կը շօշափեն նիւթեր հին եւ նոր կտակարաններէն: Քիչ բացատրութեամբ, գլուխ-գործոցներ են:

Ինչպէս ըսի, ան կը սիրէր վիթխարի եւ բարդ գործերը: Երբ այլ վարպետներ կը մրցէին իրեն հետ Սան Բոգոօյի պայծառագրութիւնը ձեռք բերելու, ինք ներկայացաւ ամբողջովին լրացած նկարով մը: Կուզէր ամէն զնով ստանալ յանձնառութիւնը եւ ստացաւ:

Դինտորէտտօ խոռվ Հոգի մըն էր: Անդորութիւնը, Հիացիկ զժայլու-

մը եւ իրերը իրենց արտաքին զեղեցկութեան մէջ յառելը իր խառնուածքին հարապատ չէին: Աինք կոչած են «մուրհիպոս», Միքելանճիլոյի նման ինքնատոյժ եւ աշխատեալու, ստեղծագործելու տենչով այրող էակ մը: Իր ձգտումներուն եւ մեծ տեսիլներուն կատարեալ դոճացում պիտի տար ստանձնած նոր ձեւնորդը: Պատասանելու մեծութիւնը, պատկառելի քանակը, Հին կուսկարանի եւ Նոր Կուսկարանի տրամաթիք կամ գերիրական պատահարները հարուստ նիւթ կը հայթայթէին: «Ամենդնեալ ջարդը», «Յիսուսի ծնունդը», «Դատաւարութիւնը», «Վերջին քնքրիքը», «Յարութիւնը», «Համբարձումը», «Ոսկի հորթիմ պաշտամունքը», եւայլն, եւայլն: Յօրինուածքները բարդ են եւ խիտ: Լեցուն են կակներով, որոնք շարժման մէջ են եւ մասնակից տրամին: Միջոցի անսահմանութեան հօր դրացում մը ունի եւ դասն իրադործելու համար կը դիմէ երկրաշփոխան նահանջող կառոյցներու, հետզհետէ հեռացող մակարդակներու վրայ էակներ կը զետեղէ, կ'օգտագործէ դոյնի կարելիութիւնները, մանաւանդ լոյսը, որ կը շնչտէ ծաւալները, մակերեսները եւ խորութիւնները: Նկարներու առաջին մակարդակի կերպարանքները նկարուած են հօր վրձինով ու դոյներով, մինչ քանի հեռանան՝ լոյսի մէջ կը հալին ու կը ծփան: Հեռաւոր կերպարանքները լոյսով ուրուագծուած են: Անջրպետային այս խորութեան տորթներ, հրաշքով մը, նկարը կը պահէ իր Ֆիարչական երկտարածեան ամբողջութիւնը եւ մակերեսը ձեւերու, դոյնի եւ լոյսի կառոյց մը կը ներկայացնէ: «Մոգեբու պաշտամունքը», «Ոսկի օձիմ հրաշքը», «Յարութիւնը», «Համբարձումը», եւայլն: Ակամայ կը յիշեմ էլ-Կրեյտն: Տրամը կը կատարուի երկրի եւ երկնայիններու մասնակցութեամբ: Գրեթէ ամէն տեղ մարմիններ, դանազան բարդ դիրքաւորումով, կը ծփան կամ կը սաւառնին միջոցին մէջ, որովհետեւ երբեմն ձգողականութենէ կը ձեռքազատուին եւ ծանրութենէ զուրկ են, նիւթեղէնը տարբալուծուած է եւ սգեկանը կը վարէ գրեկնը: Միւն երանգներու մէջ լոյսի փայտակալումներ, լոյս մը, որ Փիլոզեական չէ եւ սկուզը անյայտ: Կը ճառագայթէ ամէն կողմէ եւ կը պարուրէ կակները եւ իրերը: Ընդհանուր յայտարարն է նկարչական կառոյցին: Անսովոր մթնոլորտ մը, անսովոր դէպքեր, անսովոր էակներ: Որքան ալ հզոր Վերջին քնքրիքներուն (նկարած է քանի անգամ) տալ ամէնօրեայ ճաշի մը բնութիւն, կատարուող պատարազը, դայիք ողորդութիւնը, սգեկանը ներկայ են: Ասոնք կ'արտայայտուին լոյս ու մութի տրամաթիք հակադրութեամբ, էակներու լարուած եւ պայթուցիկ տաղնազով եւ իրականութենէն վեր մթնոլորտով:

Անկասկած, որ խառնուածքի ազդականութիւն մը կայ էլ Կրեյտնի եւ Դինտորէտտոյի միջեւ, եւ կրեւտացին ամէնէն տեւիլ սորված ու ներշնչուած է վենետիկցիէն: Դինտորէտտո կը կոտրէր Վերածնունդի սպառող ժառանգութիւնը եւ հորիզոն կը բանար Պարոք շարժումին, Ռեմպրանդին: Այս առթիւ, կ'արժէ բազմաթիւն մը ընել նոյն Սան Բոզզոյի սրահին մէջ Դինտորէտտոյի «Աւետում»-ին եւ Դինտորէտտոյի «Աւետում»-ին միջեւ: Յղացման, կառոյցի եւ արտայայտութեան ի՞նչ հսկայ տարբերութիւն: Իրարմէ այնքան հեռու: Դինտորէտտոյի «Նաշնլաթիւն»ը, որքան դիտեմ, մեծագոյն պատաստար շարքին, հակառակ շաւերու զովասանքին, զիս չի խանդավառեր: Կառոյցը այնքան խճողուած է գերակատարներով եւ զործողութեամբ, որ կեդրոնական թեման կը կորուսէ: Փառնաւա մըն է քան նկարչական յորինուածք: Նկարչական մակարդակները շփոթ են, խառնուած Յիսուսի գլուխը նկարի շրջանակին գրեթէ կպած է, դիտող աչքը կը մոլորի ամէն ուղղու-

Թեմաք եւ ընդհանուրը բանուածքի մը սպաւորութիւնը կը թողու: Ամէն յարգանք ունենալով:

Յատկանշական է արուեստագէտին ինքնանկարը: Խոհուն, խոնարհ իսկ զէմք մը, ձեռքերը իրտրու վրայ խաշանիչ՝ կուրծքին, հրկիւղածութեան, իր պարտքը կատարածի, «ձեր խոհարհ ծառան» խառն արայայտութեան սպաւորութիւն մը: Աջին «կրօն» 1577 կամ 1978 արձանադրութիւն մը, որքան կրնամ կարդալ: Դիմադրատնոց զուական էր ներկարարի մը, ուրիշ իր մականունը: Պատանութեան շատ կարճ առեւն մը աշակերտած է Դիցիանոյի: Միայն: Ինքզինք կերտող հանճարներէն էր:

Սան Բողոքոյի մէջ կան նաեւ քանի մը երկեր Դիցիանոյէ, ձերբճեղանէյէ եւ Դիէփոյոյէ: Վերջինը զիս շի խանդավառեր: Յատկանշական է բազմապատկ Դիցիանոյի եւ Դիմադրատնոյի «Աւետումները, ինչպէս ըսի: Դիցիանոն զեռ վերածննդեան աւանդութեան մէջ է: Յօրինուածքը, սիւներն ու բազրիքը, հանդիսաւոր գիրքաւորութիւնը, զոյներու պայծառութիւնը, հաւատարակչութիւնը: Դիմադրատնոն կտրած է աւանդութիւնը. գաւառական միջավայրը, անակնկալի եկած Կոյսին «ոչ-նկարչական» զերքը, ծիւղն հրեշտակագետը եւ անոր վերեւ թռչկաող հրեշտակիկներու բոյրը, Յովսէփը, որ անտարբեր կը շարունակէ ատղձագործել գուրսը: Սովորական օր մը, սովորական պահ մը եւ աստուածային հրաշքը: Դիմադրատնո կը նախազգայ Թեմաքանսը:

Ճիւղերնէքի «Քրիստոս կը կրէ իր խաչը»: Դահլիճը եւ նահատակը: Քրիստոս խոհուն, այս աշխարհէն վեր, նահատակութեան հաշտուած: Եւ զահլիճը, շուանը ձեռքին, ճաղատ, սպիտակ, պիղծ: Գոյները իրն են. ձերբճեղանէիներ: Երանգներով հարուստ (երածիշտ էր, կը նուազէր ու կ'երգէր), զգայուն, ստուերները թափանցիկ: Հանդիպած էր մեծ կախարհի գործին, Տա Վինչիին, որ Պելլենիէն աւելի խոռոված էր իր խոսնուածքը: Կրօնականին կը յաջորդէր Հեթանոսականին եւ զգայապաշտին սէրը: Սալոնարոյսէն հաջ, արուեստը կրկին կը զրոնար հիւմանիզմին: Զգայապաշտ մօտեցում բնութեան, կնոջ, կեանքին: Կնոջական մարմինը Ճիւղերնէքի Հետ կը ստանար սարսուռն, հեշտոտ ու տաք յատկանիշ մը, որ պիտի շարունակուէր Դիցիանոյի, Վերոնէզի, Դիմադրատնոյի, Բուպլենի, Կոյսի, Բընուարի եւ ուրիշներու արուեստին մէջ:

Պօսելով Ճիւղերնէքի արուեստի մասին, առհասարակ: Իր «Փոքորիկը», «Դաշտայիճ Ըուսպահանդէրը» եւ «Քնացող Վեմիւրը», որուն անաւարտ խորքը իր աշակերտ եւ աշխատակից Դիցիանոն է, որ լրացուց: Դեռ մէճ կայ «Ըուսպահանդէր» գլուխ-գործոցի հեղինակի ինքնութեան մասին, Ճիւղերնէքի եւ Դիցիանոյի միջեւ: Այնքան մօտիկութիւն կայ երկու արուեստագէտներուն միջեւ, որ մասնագէտներն իսկ չեն կրնար վերջնական եզրակացութեան մը հասնիլ: Իմ զղացումս կը հակի դէպի Ճիւղերնէք: Նիւթը զիւ մը անհասկնալի է, ինչպէս Ճիւղերնէքի կարգ մը այլ գործերու պարագային: Օրինակ. «Փոքորիկը»: Կիսամերկ կրն մը, որ սպիտակ կտուտով մը մարմինը մասամբ ծածկած, անձրեւէն հաջ, ազատ բնութեան մէջ, երեխային կաթ կու տայ, իսկ նկարին միւս կողմը հովիւ մը կամ ասպետ մը կանգնած է, կարծես բնութեան կը զմայլի: Ի՞նչ է կուպը, միտքը ոչ ոք գիտէ: Իսկական զմայլելին յոյսակալ բնակարան է, փոթորիկէն հաջ: Նոյն շփոթը «Ըուս-

զգահնդէս»ի մասին: Կեդրոնը վանականը, որուն ձեռքերը դաշնամուրին վըրայ են, պոռթկը եւ նայուածքը զարժուցած զէպի միւս հոգեւորականը. աշին երբտասարդ, զլիարկաւոր կին մը: Ինչ է մէջընդի վանականի խոր արտայայտութեան իմաստը, առեղծուած մըն է, բայց նկարչական արուեստի հզօրազօյն նուանումներէն մէկը: Յետոյ, կառուցուածքի, ոճի եւ զգայնութեան համանմանութիւն մը կայ ձիրճիտնէի Փիատի միւս երրորդութեան միջեւ՝ «Լ'արդու երեք տարեշրջանները»:

Ձիրճիտնէ վենետիկեան մեծ զպրօզը հարստացուց զգացումով, լոյսի եւ երանդներու խորունկ հասկացողութեամբ մը եւ ճամբայ բացաւ Տէլ Պիոմ֊սիէի, Իիցիանոյի եւ Վերոնէզի:

Կողմնակի ջրանցքի մը դիմաց, գիւղական ճաշարան: Զերմակ եւ կարմիր քառակուսիներով սփռոցի միայ ժամպոն, պանիր, խտալական հաց եւ գինի: Հեղուկ արեւ մը, որ կը հալեցնէ դծերը եւ թափանցկութիւն մը կը ստեղծէ: Ջուրին մէջ ցուլեր. կամուրջը երազի նման ձգուած: Նստիլ, յամեՊալ, ըմպել արեւը, օդը, գինին: Արբենալ: Էտթիւնը, մարմնիզ գեղեցկութիւն է: Նայուածքը զարձած է ներսը, կը նայի զմալլելի աշխարհի մը վըրայ: Ամէն ինչ հոն է եւ կը հօսի: Մէկ արփիւն, սիրտը, տիեզերքի կեդրոնը:

Հոս եւս, ինչպէս Սպանիա, Արեւելքը եւ Արեւմուտքը հանդիպած են: Միրաբանած, միտսին անկողին մտած: Բեղմնաւորուած: Հարուստ, զուճակեղ, տաք: Զարդի եւ պոյնի շափաղանցութիւն, սճերու խառնուրդ: ԱյլաՊանութիւն, հմայք: Շատախօս են, համակրելի, հաղորդական: Ամէնէն ոտմանթիք ժողովուրդը: Ի վերջոյ, երեւակայութիւնը, գեղեցկութիւնը կը յաղթին առեւտրականին: Հարստութիւնը արուեստի հովանաւորն է: Աղէտը եւ ոճիբը, — գեղեցկութիւնը շահին եւ դորձնականին զուհին է:

Իտալացին գերծ է այս ոճերէն:

Միջերկրականեան աւազանը եղբրոզ ժողովուրդները ունեցած են այդ զլայարանքը գեղեցկութեան: Սպանիոն, Պրանսան, Իտալիան, Յունաստանը եւ Եգիպտոսը: Այս ժողովուրդները (ոչ միակը անշուշտ) օժտուած են գեղարուեստական բացառիկ զգայնութեամբ եւ ստեղծագործութեամբ: Աշխարհազրական մօտիկութիւնը դիւրացուցած է աղեցցութիւններու ներս եւ արտահոսումները: Բիւզանդիոնն ու ծովը բերած են Արեւելքը:

Վենետիկ ամբողջութեամբ թանգարան մըն է: Ինչպէս Պլորանս, Հըռոմ, եւայլն: Եկեղեցիներով կը վիտան այս քաղաքները: Ամէն եկեղեցի զլուխՊործոցներ կը պարփակէ: Զարտարապետական, նկարչական եւ արձանագործական: Նոյնը կարելի է ըսել ոչՊհուր շէնքերու մասին: Այս գեղարուեստական ստեղծագործութիւնները, միացած ընտթեան գեղեցկութեան, կը կազմեն այն միջավայրը, որ կը կախարդէ, զմայլանքի, փիլիսոփայելու եւ զգացողութեան կը տանի: Արագութիւնը չի հալածեր քեզ, կրնաս նստիլ հրապարակի, ջրանցքի մը ափին եւ ըլլալ ինքզինքդ: Նայել ներսը, իմաստներ եւ խորհուրդներ փնտռել: Զգալ, որ անձը գեղեցիկ է, նուիրական է: Ստեղծագործ: Արուեստագէտ եւ բանաստեղծ: Կեանքի համը: Յաւերթութիւնը: Քաջութիւն մահուան զէմ: Թափանցել ըլլալ, հոսիլ, ընդայնի: Զգալ ուժը եւ տեւականութիւնը էութեանդ, որ տիեզերքն է:

Այլևս կը ներես վեճատկայիին իր շարժճիութիւնները, դրամ կոր-  
զելու հազար նսարքները, շահագործելու յաւիտենական բնագոյրը: Որովհե-  
տեւ ինչ որ կը ստանաս՝ անդին է, անդտանելի: Կը հարստացնէ թեզ, կը  
մաքրագործէ, կ'ևանքին կը կան: Կը դորացնէ թեզ: Առօրեայի մտահոգու-  
թիւնները, մեր դարու մոճաւանջները կը փարատին: Ապրիլը հոգ ըլլալէ կը  
դադրի եւ հանոյքի կը փոխուի: Համարումը զէտի մարդ էակը կ'ամբարայն-  
դուի: Որովհետեւ, կը կրկնեմ նորէն՝ տկարութիւնները, տառապանքը, ու-  
ճիւնները կ'անցնին, դեղեցկութիւնը կը մնայ: Եւ որբազան հացին նման հոն  
է, ամէնուն կը բաշխուի:

Մէկ րոզճանք ունիմ: Հետս ծնած է, հետս ապրած, հետս պիտի մեռ-  
նի, եթէ շահանիմ երազիս: Տեսնել հայրերուս երկիրը: Հայաստան: Ի վեր-  
ջոյ, մեր բոլոր ճիղերը, ծրարիւնները, գերագոյն նպատակը այդ է եղած:  
Մեր ամենազրազ, ատղնապալի պահերուն իսկ, երբ հողը, վախը չոքած են  
մեր էութեան, ենթադիտակցութեան մէջ նստած է յաւիտենական տենչը:  
Նման պարպաներուն՝ թերեւս աւելի սուր եւ հզոր կերպով: Հայրենիքէն  
հետո, այս է եղած հայ ըլլալը: Երկրէ երկիր, սունու-տեղ, դործ, երբեմն  
հարստութիւն, երբեմն փառք, քաղաքացի — կ'սցութիւնը ըստ էութեան մը-  
նացած է նոյնը: Ինչո՞ւ համար եկեղեցիները, դպրոցները, հաստատութիւն-  
ները եւ կաղճակերպութիւնները: Հայ լեզուի սրբազան պայքարը: Հայ մնա-  
լու ճակատագրական պաշարումը:

Այս իսկ պատճառով, Ս. Ղազարը խորհրդանիշ մըն է ինծի համար:  
Ջուրերով լըջապատուած, առանձինն, անկախ, ամբողջովին հայ: Փոքրիկ,  
մանրանկար Հայաստան մը: Երազ մը: Անհնար է. յուղուած ես, երկիւղած:  
Ուխտագործի մը իր հանդրուանին հասած ըլլալու անէանքը: Երջանկութիւնը:  
Եւ դեռ, բուն Հայաստանին, մեծին, յաւիտենականին, իսկականին կարօտը  
եւ յոյսը:

(Շար. 6)

Բ. ԿՈՒՆԵԱՆ







# ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

## ԱՌԱՋՆԱՅԵՐԹ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԵԱՄԲ

Ներկայ համարով «Բագին» կը բուրբէ իր տասներկորոգ տարին եւ կը սկսի իր նոր տարեշրջանը:

Սփիւռքի մեր պայմաններուն մէջ, մասնաւանդ վաթսու- նական թուականներէն ետք, դիւրին չէր զուտ դրական հանդէսի մը հրատարակութեան ձեռնարկել եւ կարենալ կանգուն պահել զայն, բայց հրամայական անհրաժեշտութիւն դարձած էր նման ձեռնարկ մը, որ մարմին առաւ եւ շնորհիւ հովանաւոր ուժին դուրդուրանքին, աշխատակիցներուն ճիգին եւ ընթերցողներուն ցուցարեքած դրական վերաբերումին՝ յաղթահարեց բոլոր գըժ- ւարութիւնները եւ ամբողջ տասներկու տարի դարձաւ մէկը Սփիւռքի գրականութեան ամէնէն տիրական ներկայութիւննե- րէն:

Իր գոյութեան առաջին հնգամեակը հազիւ բուրբած, միայն վերջին եօթը տարիներուն — յիշէ՛նք յարգանքով ու արտասան- քով — յաջորդաբար մահացան լայն հատարակութեան ծանօթ «Բագին»ի բարեկամ եօթը գրողներ, — Էլեոն Գարսէն, Նիլուարդ Պոյաճեան, Համաստեղ, Արսէն Նրկաթ, Նշան Պէշիկթաշեան, Նիկողոս Սարափեան եւ Բենիամին Թաշեան, որոնց ստեղծագոր- ծական օժանդակութիւնէն զրկուեցաւ մեր ամսագիրը, բայց ինչ- պէս օրէնքն է կեանքին՝ շարունակեց իր ճամբան, հետեւողակա- նօրէն հետապնդելով իր առաջագրութիւններէն գլխաւորը, — նպաստել արդէն կազմուած գրողներուն ստեղծագործ թափին զօրացման եւ ասպարէզ տալ օժտուած նորերու:

Մեր հաւաքածոներուն աչք մը նետող հետաքրքիր ընթեր- ցողը անմիջապէս պիտի նկատէ, որ հնարաւոր սահմանին մէջ կենսագործուած է «Բագին»ի այդ յանձնաւարութիւնը: Մասնաւանդ նորերու պարագային, որոնք չկային մեր առաջին տարիներուն, ներկայ են այսօր, իրենց ջիգերէն հանուած թարմ տողերով եւ

Թարմագոյն ճանաչումները ընթերցողին հաղորդելու խանդավառ անսպարանքով:

«Բագին»ը կեդրոնաձիգ ուժ մը հանդիսացաւ եւ կազմաւորող հողը մասնաւորաբար այս տղոց, որոնց հրապարակ գալու երազը կա՛ր հիմնադիրներուն մտքին ու կը տեւէ՝ յանուն վաղու ան գրականութեան:

Ոմանք, ինչպէս պատահած է ու կը պատահի բոլոր թերթերուն, իրենց նախաքայլերուն հետ աստղային հեռաւոր պատրանքներ տալէ ետք, ատուպի պէս մարեցան. պիտի գան եւ ուրիշներ եւ ուրիշներու մէջ եւս պիտի ըլլան ասուպներ: Ամէն սկըսող չի կրնար դիմանալ գրելու արարք ըսուած ամէնօրեայ նախատակութեան, դիմացողներ պիտի ըլլան սակայն եւ կարելորը ա՛յլ է, կուչեցեալ բազումներուն մէջ սակաւաթիւ ընտրեալներուն իրականութիւնը, իսկ անոնց համար կենսական է բեմը, գրական կենդանի կեանքը, մթնոլորտը, որուն համար ճիշ չէ խնայած «Բագին» ու աւելի քան երբեք պիտի կրկնապատկէ իր ճիգերը՝ Սփիւռքի գրականութեան շարունակման համար իր ստանձնած պատասխանատուութեան բաժինը առաւելագոյն չափով մը արդիւնաւորելու կիրքով:

Այս գործը, ի հարկէ, իր մենաշնորհը չի նկատեր «Բագին»- հայ մամուլին բոլոր թիւերը ունին նոյն նպատակները եւ նորընծայ տղաք, ու ճիշդ այդ պատճառով է, որ մեր թերթերէն որեւէ մէկը երբ դադարեցնէ իր հրատարակութիւնը՝ բնագաւառ մը կորսնցուցած ըլլալու դառն տպաւորութեամբ կը լեցուինք, մեր ժողովուրդին տրուած անդարման հարուածի մը կակիծով կը խոցուինք ամէնքս:

Առանց մամուլին անկատար պիտի ըլլան, մնա՛ն մեր բոլոր միւս ձեռնարկները, պիտի զրկուինք հոգեկան միութեան կենսատու իրականութենէն եւ ազդային ու մարդկային իրադատուկ մեր առաքելութենէն որեւէ՛ մէկը պիտի չկարենանք ըստ արժանւոյն պսակել:

Մեր մտածումին մէջ պէտք է առաջնահերթ կարեւորութիւն մը ստանայ այս գիտակցութիւնը եւ գործի վերածուի ամէնուրեք:

Սփիւռքի մեր կեանքին մէջ քիչ չէ եղած ու քիչ չէ՛ հայ մարդուն ցուցաբերած զոհարեցութեան չափը, ներկայ է ան կարեւոր բոլոր ձեռնարկներուն ու ամէն տեղ կը բերէ իր լիառատ մտնակցութիւնը, պէտք է բերէ ամէնէն աւելի մամուլին, որ ամէնէն տարածունն է, ամենահար, համադրական պատկերը ամէնուն, ցո՛յքը ամէնուն, համախմբող ու հունաւորող զօրութիւնը տակաւին եւ մէկը կեանքի մեր եղանակներուն նպատող մեծ սխրագործութիւններու ծնուցիչ մեծագո՛յն ազդակներէն:

Ապրելու, ստեղծագործելու, կեանքի առաջընթացին հետ քայլ պահելու համար առաջին անգամ պիտի մտածենք ապրեցընել մեր մամուլը, այսինքն՝ հայ գիրքը, հայ գրականութիւնը, մշակույթը, ցեղային մեր անհատականութիւնը շաղախող այդ անփոխարինելի ժառանգութիւնները:

Ս. Կ Ի Ր Ա Կ Ո Ս Ե Ա Ն

Լ Ի Բ Ա Ն Ա Ն Ե Ա Ն Ա Ն Մ Ի Զ Ա Կ Ա Ն  
Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

XVIII

Սախո Ազգի «Մագքադիմացիին» քերթողադերձէն ետք, Իլիաս Ապու Շապաքէի «Իրախտի օձերը» անուն հատորը արարական արդի բանաստեղծութեան ուղիին վրայ նոր երանգներ նետող լուսարձակը եղաւ:

Ժամանակի ընկերային եւ բարոյական տիրող բժրունումներուն ղէմ թոյներ եւ բողոքի ճիւղեր արձակող Ապու Շապաքէի «Իրախտի օձերը» զգալի մասով մը կնոջական մարմինը նիւթ դարձնելէ ետք, փորձեց հաշտութիւն մը կնքել անոր մարմնին ու հոգիին միջեւ:

Աւելցնենք անմիջապէս, թէ կաթողիկէ Իլիաս Ապու Շապաքէ, ինչպէս նաեւ նոյն սերունդին պատկանող մասնետական Օմար Ապու Րիշէի գրականութիւնը ունին նոյնօրինակ միջնորդ մը: Երկու բանաստեղծներուն մօտ ալ այրբ սեռային ազատութեան մենաշնորհը ունեցող արարածն է, մինչ կինը զրկուած է այդ իրաւութենէ: Այդ իսկ պատճառով՝ թէ՛ Ապու Շապաքէի եւ թէ՛ Ապու Րիշէի գրականութեանց մէջ կը հանդիպինք կնոջական երկու տիպարներու: Աստիճակով՝ անմեղ ու անբիծ, իսկ երկրորդը՝ ֆիզիքապէս ու հոգեպէս տղմացած զօժը:

Յանախ կրօն մը, կամ նոյն կրօնին ու ազգին պատկանող քերթողի մը գրականութիւնը, իր դաւանանքին անուղղակի ազդեցութեան շնորհիւ, տրուելով ազգի գրականութիւնը կը հարստացնէ հոգեբանական, ընկերային եւ կրօնադաւանական նոր տաղանայներու այլադանութեամբ: Այս հարցին լաւագոյն օրինակը կը հայթայթէ Ապու Շապաքէ: Ան եղաւ արար տառային բանաստեղծը, որ մարմինն ու հոգին անջատեց իրարմէ:

Մասնետական բանաստեղծին համար, մինչև Ապու Շապաքէի երեւումը, դրախտը կը ներկայանար իբր հանգստավայր, ուր ստուերոտ ծառերուն բուրումնաւէտ պարտէզներուն եւ դաշտացող գետերուն աննկարագրելի դեղինգիտութիւնը վայելէր: Գառքը վերապահուած էր հաստացեալներուն:

«Իրախտի օձերը» հատորի էջերուն, Ապու Շապաքէ մարմին ու հոգի միացնալ երանութիւնը կղեմի մարզերուն մէջ անջատեց իրարմէ: Կաթողիկէ այս բանաստեղծը արարական բանաստեղծութեան հաւուն արձանագրեց նոր յաւելում, երբ երգեց փրկութիւնը, քաւարանը եւ հողույն փրկութեան սիրոյն շարժարուող մեղսալից մարմնին դեղեցիկ տառապանքը: Հողույն փրկութեան է ինչոր այնպիսի Ապու Շապաքէի խղճմտանքի յեղափոխութիւն:

նը իր հետևորդները ունեցաւ արարական արդի բանաստեղծութեան մէջ: Կարգ մը մասնետական բանաստեղծներ որդեգրեցին այս հոգեբանութիւնը, բան մը, որ արարական արդի բանաստեղծութիւնը հարստացուց բարոյական ու հոգեբանական նոր մթնոլորտներով: Օրինակ մը տալու համար, հարկ է յիշել այս հոգեբանութիւնը լաւագոյնս իւրացուցած անուն մը՝ Ալի Մահ-ժուս Թահան, որուն 1942ին լոյս տեսած «Ողիւնք եւ ուրաւականներ» հատորը Ապու Շապուքի սեռային, դաւանական, հոգեկան ու կրօնաբարոյական համոզումներուն մէկ ինքնատիպ արձագանքն է:

Բնականացական ու ուժանթիք զգալարանքներու միջեւ տատանող դրոշմներ են երկու Ալիարհամարտներուն ընթացքին երեւան եկած սերունդին ներկայացուցիչները: Զիրար ամբաստանող, բայց զիրար ամբողջացնող հակադիր երկու բեւեռներու գործիչներ: Այս ժամանակաշրջանի գրականութեան պարունակութիւնը սեռն է եւ հոգին:

Աւորեայ կեանքէն անդին անցնելու այս տենչը միաժամանակ աշխարհը բացատրելու ձեւ մըն է: Հոս, գնալուն աշխարհը իր մեծ մեղքերով, սեռային թանձր հեղանջներով, ծրարակող ցուերով ու խարուսեկ գինոփութեամբ կը հակադրուի միայունին, որուն տարրերն են անմեղ մանկութիւնը, երազը, անձանօթը եւ խորախորհուրդ յաւանանութիւնը: Հոս, աշխարհը, չօլափիլի վայրկեանը ներկան է, փորձութեան «օձիք»ով լեզուն «Իրախտ»ը, ուր օրըստօրէ կը ծաւալի շարք, հրապուրիչ փորձութիւնը, որ քերթողին իսկ բառերով՝ «նահիմ է շիշուար», «սղտեղութիւն», «սակաւմ ախաղ» եւ «տարակուսանքներու ծով»:

Ապու Շապուքի փորձին արժէքը կը կայանայ այն գիտակցութեան մէջ, որ մարդը աշխարհին եւ անոր շարքուն զոհն է, այն շարքուն, որոնք մակերսային, տեսանելի ու ժամանակաւոր պերճանքներ են, մինչ իրաւ ուժը հոգին է, բոլոր ժամանակներուն զուլալ աղբիւրը, որ կը հոսի ամէն օր՝ բարիքի ու յաւիտենականութեան այլազան բոյրեր ցրուելով շրջապին:

Մտրդուն կարելիութիւններուն ու վերջնական յողթանակին փառաբանութեան գիրքն է «Իրախտի օձիքը»: Իր մարդեղութեան հաւատացող եւ յողթելու վճռակամութեամբ ապրող մարդ-բանաստեղծին տրտունջքն ու վճիռը նոյն աստիճանին վրայէն, գեղեցիկն ու անձաւը ուղղուած արուեստագէտ մարդուն վճռակամ քայլերգը, իսկ Ատոնիսի բացատրութեամբ՝

«Իրախտ Ապու Շապուքի փոյժը կը զուգարտի այն հոգիին մէջ, որ կ'ամբարէ մեծեմ մը ըլլալու պատրաստութիւնները, այսինքն՝ մաքրամաքութիւնը, ջիւղը, անախտը և կամ փերթողին իսկ բացատրութեամբ՝ «տարտնութեան քարայրը» եղող հոգիին մէջ»:

Այս իսկ պատճառով՝ ան խոյս կու տայ կեանքի մղձաւանջներէն ու կը պատուարուի երազին, մանկութեան ու բնութեան տարբերուն գթառատ գերկը:

Ու երազի ուղիներով կը մաղլցի Ապու Շապուքէ, երազը կը վերածուի արծուի լայն թեւերու, որոնց շնորհիւ կը ճախրէ ան ու զանազան երազներու այլազան փետուրներէն կը կազմուի ամէնէն ամուր թեւը՝ լեզուն:

Ապու Շապուքէն բարձունքէ բարձունք տուաբարող այս լեզուն՝ ուժեղ, վայրազ, վճռակամ եւ իր ներկայ վիճակէն զինք վեր հանող աղջակն է: Ու դուցէ հոս է պատճառը այն երջանկութեան, որ ներկայ է անոր լեզուին մէջ, վաճառի ան իր այդ կարողութեան գիտակից բանաստեղծն է: Իրը այն լեզուն է, որ ամէն օր կ'անցնի նուաճած նոր հեռաւորութեան հոյրղոններէն անդին, եւ միեւնոյն աստեղ զինք կը տանի զէպի իր հոգւոյն հեռա-



ւորապէս ըստերը, որ նախորդ թուիչքի վերջին թեւահարումներուն առընթեր զոյաւորուող զեղեցիկ երազ մըն էր: Արուեստով, զինելով ու բանաստեղծութեամբ զինովնալու վերացումն է այս երջանկութիւնը, իր ստեղծագործութեամբ զինով արուեստադէտին զոչունահուսթիւնը:

Այնուամենայնիւ, Ապու Շապաքէի լեզուն նաեւ իր առօրեան ցոլացընող հայերէն է, որովհետեւ իր բառերուն եւ աշխարհի էրերուն միջեւ կան որոշ հանդիսութիւններ: Այս իսկ պատճառով՝ ընթերցողին կը թուի, թէ երկրային իրերուն համով հասունցած պտուղներ են Ապու Շապաքէի բառերը, որոնք մերթ կարծր են՝ ինչպէս կրանիթն ու պողպատը, մերթ թափանցիկ՝ ինչպէս ապակին ու օդը, եւ յաճախ զինելին ու մեղրին շափ համեղ՝ ըմպելիներ:

1903ին, Նիւ Եորքի մէջ ծնած, բայց Լիբանանի մէջ կազմաւորուած ու ստեղծագործած Ապու Շապաքէ, իր «Իրախտի օձերը» անուն միակ զիրքով մտաւ արաբական արզի բանաստեղծութեան մայր դարպասէն ներս: 1938ին լոյս տեսած իր հատորէն մինչեւ իր մահը (1947) երկարող կարճ ժամանակաշրջանին մէջ գրած իր բանաստեղծութիւններով՝ ան աւելի եւս խորացուց, բիւրեղացուց աշխարհաբնկալման իր բացառիկ կարիքութիւնները եւ հանդիսացաւ սէրն ու կինը Նիւթ դարձուցած անկրկնելի երգիչը:

«Նովում» քանաստեղծը՝ փաղաքշական տիտղոսին արժանացած լիբանանցի այս երգիչը, ըստ շատերուն, կը համարուի թէ՛ Լիբանանեան եւ թէ՛ արաբական նոր-սոսնայի սերունդներուն անգերազանցելի բանաստեղծը:

XIX

1930ական տարիներուն, յունահռոմէական ու արաբական դասական ասանդներով ընթացող պատմողական, բարոյախօսական, հայրենասիրական ու քաղաքական բանաստեղծութիւնները կարգ մը բանաստեղծները հեռացուցին ճպրտանեան ուղիներէն, երբ անոնք առաջնակարգ համարեցին բանաստեղծութեան ձեւը եւ յանձնուեցան անոր «հրապոյր»ներուն:

Ինքնուրոյն մայն հանդիսանալու փոխարէն, անոնք դարձան երկրորդական մայներ: Զլմարտութիւն է, որ այս երկրորդական մայները ունէին արաբական դասական բանաստեղծութեան եզակի մայներուն ուժականութիւնն ու երանդները, սակայն ճշմարտութիւն է նաեւ, որ յուպղած կրկնութիւններ են:

Իրենց ձեռք ձգած դասականութեան փորձառութեանը շնորհիւ ընդհանուրէն անլիատուող այս երկրորդական մայները հուսան դասականութեան բարձունքներուն, մնացին հոն ու դարձան Ապպասեան կամ Օմայյաեան հարստութեանց օրօք ծնած ու եզակի մայն հանդիսացած քերթողներուն ուղղակի կրկնօրինակները: Այս տեսանկիւնէն դիտած՝ անոնք մեծ քերթողներ են, բայց ոչ բանաստեղծներ, որովհետեւ ասոնց գրականութեան ամէնէն խոցելի կէտը բանաստեղծութիւնը նուրբ արհեստի վերածելն է, բան մը, որ թեւաբեկ ջրաւ բանաստեղծութիւնը եւ այսպէսով անիկա եղաւ թուիչքէ զրուրուած, լինելութեան խորհուրդներէն պարպուած ու ծանօթ լինանիթերով կառուցուած անդիմադիծ եւ հասարակ տաղաչափութիւններ:

Ահմէտ Շաուքի, Պէտէուի էլ ձէպէլ, Հաֆէզ Իպրահիմ, ձէմէլ Սըտպի էլ Ջահհաուի, Մաարուֆ էլ Բասաֆի եւ Մուհամմէտ Մէհտի էլ Ճաուհարի դասականութեան բարձունքներուն հասան, բայց չկարենալով յաւելում մը արձանագրել՝ դարձան դասադրձային անշունչ ներկայութիւններ, կամ՝ ա-



«Կենդանի քանաստեղծութեան ձեւը այն է, որ կը մնայ շարունակա- կամ կազմաւորման մէջ» :

Արարական ու մասնաւորաբար լիբանանեան անմիջական բանաստեղ- ծութեան մէջ, առոնիոնեան այս խիտ բնութագրումը մեզի կը յիշեցնէ ուրիշ արուեստադէտ բանաստեղծի մը, Ֆրանսացի Ռընէ Շարի դրսեւորումը, ըստ որում՝ «արդի քանաստեղծութիւն կը ճշմարիտ արձանագրէ աշխարհի մը, որ միշտ արձանագրուող կարօտ կը մնայ» :

XX

«Միշտ արձանագրող կարօտ աշխարհը՝ որոնելու եւ գայն որոնումէ որո- նում, բարձունքէ բարձունք ու նուաճումէ յաւելում տանող լիբանանցի բա- նաստեղծներու շարան—Մուսթրան—Ապու Շապաբէ—Ալլի քառեակին առն- թեք, ոչ-կարկառուն գրիչներ եւս իրենց լուսան գրին գրականութեան զան- ձանակին մէջ» :

Գեղապաշտ ու բնագանջական ախորժակներու տէր տեճեր էին այս բանաստեղծները, որոնց մէջ կային թէ՛ չափաւոր դասականներ եւ թէ՛ ա- ճանդապաշտ նորարարներ :

Եթէ գեղապաշտ ու նոր-առումնաբէք այս սերունդին յառաջապահն ու վարպետը ամբողջական իր վաստակին ընդմէջէն Ապու Շապաբէն եղաւ, ան- գրին, կարգ մը բանաստեղծներու որոշ ոտանաւորները կըրցան ըլլալ դրական ժամանակաշրջանին վաւերական փորձերը : Աւելցնենք անմիջապէս, որ ձեւ, ոճ ու կատարչէ աւելի նորարարութեան իրենց ենթահողը հանդիսացաւ բա- նաստեղծութեան խորքը : Աստե՛ք, այս կամ այն չափով՝ փորձեցին այլափո- խել բանաստեղծութեան հնամաշ միջուկը, եւ այդ աշխատանքին ընթացքին երբեմն բախեցան իրենց ստեղծումներուն արդէլք հանդիսացող կատարչի եւ յանդի պատնէ շներուն : Այս իսկ պատճառով՝ ինդորոյ առարկայ դարձաւ բա- նաստեղծութեան ամբողջական կատարչը, սրուն յաջողութեան համար որոշ թիւով քերթողներ վերամշակեցին դասական տաղաչափութիւնը :

Իմաստին եւ տողին խտութեան սիրոյն յանդ մը աւելցնելու կամ երկու յանդ զօհելու այս նորարարութիւնը չունեցաւ այն խոր, կըքոտ պարունա- կութիւնն ու ջղուտ խառնուածքը, որով սերունդ մը կը բախի դասական գրականութեան պատնէ շներուն եւ ըստ այնմ կը կերտէ իր դիմագիծը :

Չհաշուած արարական արդի բանաստեղծութեան յեղափոխական ճար- տարապետը՝ ձպրան Խալիլ ձպրան, անվարան կրնանք ըսել, թէ քաններորդ դարու առաջին երեք տասնամեակներուն նոյնիսկ տաղաչափական նորարա- րութիւնները մնացին բարեկարգումներու սահմաններուն մէջ : Անոնք շխրդ- ւեցան դասական տաղաչափութենէն, այլ փորձեցին բարեփոխել զայն :

Երեսնական թուականներուն լոյս տեսաւ այս առաջադրանքով գրուած «Պարզի էլ Մատուֆի «Թռչող գորգին վրայ» բանաստեղծութիւնը, որ կա- րենոր տեղ մը կը դրուէ արարական արդի բանաստեղծութեան մէջ :

Քիչ մը իմացապաշտ, քիչ մը բնապաշտ, քիչ մը գեղապաշտ նոր-առ- մանթիք սերունդի կարկառուն դէմքը եթէ Իլիաս Ապու Շապաբէն եղաւ, անդին՝ Օմար Ապու Րիշէ, Իլիաս Ապու Մատի, Ահմէտ Ջէքի Ապու Շատի, Լպրահիմ Նաճի, Ապու էլ Գասէմ էլ Շապի, Ապտալլա Ղանիմ, Եուսէֆ Ղա- սուպ, Պարուզի էլ Մատուֆ եւ դեռ ուրիշներ, որոշ չափով երիտասարդա- ցուցին արարական բանաստեղծութեան խորքը, ձեռք ձգեցին որոշ նուա-

ճուճներ, որոնց յաջողություններն կարելի է սեպել Ծառուղի էլ Մաաւուֆի «Թռչող գորգին վրայ» երկարաչունը զերթուածը:

Լիբանանեան եւ արարական անմիջական բանաստեղծութիւնները պարտական են այս համեստ զերթոյններուն:

XXI

Եռուէֆ Աղզըլ Տինի խմբադրած «Արարական արդի գրականութեան մէջ» ժողովածուի էջերուն կան սակայն այս ժամանակաշրջանին տպուած կարգ մը հետաքրքրական բանաստեղծութիւններ:

Արդարեւ, քանակական թուականներու իրաքեան մատուց շուրջ կերպով հետախուզական քննութեան մը ենթարկելէ հտք, Եռուէֆ Աղզըլ Տին մատուցի փոշիներէն լոյս աշխարհ բերաւ շարք մը բանաստեղծութիւններ: Ընդհանրապէս զարձակ բանաստեղծութիւնն սահմանումին ներքեւ ամփոփուող երժույշներ են այս զերթուածները: 1914 դարու վերջին տասնամեակներուն եւ 20-րդ դարու սկզբնաւորութեան միջազգային գրականութեան արձակ բանաստեղծութեան այլ փոխանցիկ հիւանդութիւնէն վարակուած սոսըին բանաստեղծը եղաւ Էմին էլ Ռիհանին:

Արիւ լիբանանցիի մը՝ Մարուն Ապպուտի կողմէ զարձակ բանաստեղծութեան հայրը» զնահատանքին արժանացած Էմին էլ Ռիհանիի անուան կապուած զարձակ բանաստեղծութիւնն» բացատրութեան առաջին անգամ կը հանդիպինք «Էլ Հիլալ» («Մահիկը») տմարի 14րդ հատորին մէջ (1905), ուր ձերձի Ձէյսանի ստորագրութիւնը կրող եւ էլ Ռիհանիի յիշեալ սեռին պատկանող փորձերուն արժեւորման ընթացքին, ան կը դործածէ «Շը'ըր Էլ Սարըր» («արձակ բանաստեղծութիւնը») տարւոյր:

Աւելցնենք անմիջապէս, որ արձակ բանաստեղծութեան տարրերը օգտարժան անձրին անձը ձգրան Խալիլ ձպրանն է:

Սակայն պէտք է յիշել, որ Թէ' ձպրան եւ Թէ' էլ Ռիհանի կոկեցին արձակ բանաստեղծութիւնը եւ իրենց արասկարպ տաղանդին շնորհիւ զայն բարձրացուցին Արեւմուտքի մէջ Free verse քնորոշումով ծանօթ ազատ բանաստեղծութեան միջազգային մակարդակին: ձպրանի եւ Ռիհանիի փորձերուն վրայ հիմնուած, գրական այս սեռը զարդացնելու եւ արուեստի աւելի բարձրորակ մակարդակի մը հասցնելու ճիշդ լայնօրէն ի գործ դրաւ «Շը'ըր» սերունդը:

Յիշենք նաեւ, թէ Երեսնական թուականներուն «Ափոլլօ» թերթի էջերուն լոյս տեսան այս առաջադրանքներով դրուած թաղմաթիւ զերթուածներ: Արոնք անմիջական արձագանքներն էին նոյն թերթի հիմնադիր Ահմէտ Ձէքի Ապու Շատիի 1925էն 1930 երկարող տարիներուն գրած բանաստեղծութիւններուն: Արդարեւ, Ապու Շատի, առանց զեղարուեստական լուրջ տուեալներու՝ ստորագրեց ազատ բանաստեղծութեան մօտեցող քանի մը նմուշներ: Տուղաչախական մէկէ աւելի կաղապարներու ենթակայ իր փորձերուն կը պտկսէին զեղարուեստական պատճառներն ու ա'յն հրամայականը, որ լուրեայն ենթական է ձպրանի զերթողութեան:

Ապու Շատիի եւ իր հետերդներուն բանաստեղծութիւնները փոխանակ մղուելու զերթուածին ներքին ռիթմէն, իրենց տաղաչափութիւնը կը ներդաշնակէին երաժշտական անձնական ախորժակներուն հետ: Այս իսկ պատճառով՝ քնարերգակ զմայքներէ մղուած ու յանգէ յանգ ստոտսող մեքոյիշեալ զերթուածները յանգեցան ձախողութեան:



Գնանական թուականներուն, Ապու Շատիի կողմէ Ձազառ տապալա-  
փութիւնք անուամբ մկրտուած վերոյիշեալ բանաստեղծութիւնները, հակա-  
ռակ անոր, որ իրենց հաշտոյն յաջողութիւն մը չկրցան արձանագրել, շեշ-  
տեցին սուկայն այն ճշմարտութիւնը, որ արարական բանաստեղծութեան ար-  
մատական փոփոխութիւնը անհրաժեշտութիւն մըն է :

Ֆեղտուեստական այս պահանջը երկունքի երկար ժամանակաշրջան  
մը ապրելէ ետք, 1947-48 տարիներուն միայն սկսաւ խլրտիլ ու ձեւ առաւ  
իրբեւ ամբողջութիւն, երբ կարգ մը իրաքցի երիտասարդ բանաստեղծներ  
(Նազէք էլ Մալալեհ, Պատր Շաքէր էլ Մոյեայ, Ապարը Ուսհայ էլ Պայեա-  
թի) յանդիմեցան վերաստեղծութեան ենթարկել բանաստեղծական հասկացո-  
ղութիւնը :

Յիշեալ երեք բանաստեղծներն ու շարք մը այլ բանաստեղծներ ստո-  
բարկեցին բազմաթիւ յօդուածներ՝ ապացուցելու համար, թէ իրենք են ա-  
րարական անմիջական բանաստեղծութեան առաջին նորարարները :

Արարական մամուլի մէջ երկար ժամանակ մելան հոսեցուցած այս  
հարցը հետո է նորարարական արդի հասկացողութենէն : 1947ի վերջաւորու-  
թեան տպուած թէ՛ Նազէք էլ Մալալեհի եւ թէ Պատր Շաքէր էլ Մոյեայի  
«Քոլլեքս» (\*) ու «Արդիտի սէր էր» (\*\* ) բանաստեղծութիւններուն նորարար-  
ական սահմանումը կը շիջի... տաղաչափական դաղջ բարեփոխութեան մը  
նկարագրէ :

Սակայն, իրաքցի երիտասարդ բանաստեղծներէն ո՛չ էլ Մալալեհն,  
ո՛չ էլ Մոյեայը եւ ոչ այլ էլ Պայեաթի կտրելի է համարել արարական ան-  
միջական բանաստեղծութեան հիմնադիրը :

Ճշմարտութիւն է, որ անգլիագիր Եիթսը, Օտընը, Իյերթն ու Պայ-  
րընը զգալի կերպով կը միջամտեն սնունց առաջին փորձերուն մէջ. սակայն,  
կարելի է անվարան ըսել, որ այս փորձերը դասական բանաստեղծութենէն  
խզուելու սրբազան խնթութիւններ չէին : Գասական բանաստեղծութիւնը  
երիտասարդացնելու ճիշդ մը եղաւ իրաքցի չափաւոր երիտասարդներուն կող-  
մէ ձեռնուղ առած ու տաղաչափութեան բարեփոխութիւններով ընթացող նո-  
րարարական այլ ուղիքը :

Մինչդեռ, 1924 թուականին տպուած եւ լիբանոնցի Նիքոյա Փայեասի  
ստորագրութիւնը կրող մէկ փոքրիկ գերթուածը, որ կը դանուի Եուսէֆ Ադ-  
զըլ Տինի խմբագրած ժողովածուին մէջ, բառին յայնպոյն առումով նորա-  
րար բանաստեղծութիւն մըն է :

Մնաց որ, Եուսէֆ Պաթիրի կողմէ 1936ին թարգմանուած եւ 1946ին  
Գահիրէի մէջ տպուած Շէյքսփիրի «Րումէօ եւ Ժիլիէր» քնարախաղին մէջ

(\*) «Քոլլեքս» եղաւ նորարարութեան ազմուղը յարազանգ գլխաւոր բանաստեղ-  
ծութիւնը, որ տաղիմ անգամ տպուեցաւ լիբանոնեան «էլ Ըրուպա» օրաթերթի 1 Դեկտեմ-  
բեր 1947ի քիւիմ մէլ :

(\*\*) «Արդեօ սէր էր» Նազէք էլ Մալալեհի ուսերն «առաջին նորարար» տիտ-  
ղոս յափշտակի փորձող քիւ երկու քերթուածը : Պատր Շաքէր էլ Մոյեայի սոյն քերթ-  
ուած լոյս տեսաւ Կ. էլ Մալալեհի բանաստեղծութեան հրատարակումէն ետք, եւ 1947ի  
աւարտէն քանի մը շաբաթ առաջ : Այդ օրերուն Գահիրէի մէջ լոյս տեսաւ Պ. Շ. էլ Մոյեա-  
յի բանաստեղծութիւններուն առաջին հատորը՝ «Թառամած ծաղիկեր» : Գիրքը կը բովան-  
դակեր Պ. Շ. էլ Մոյեայի տաղաչափական չափաւոր նորարարութեամբ գրուած «Արդեօ  
սէր էր» քերթուածը :

օգտագործուած են արարական դասական տաղաչափութեան մէկէ աւելի ձեւերը:

Աւելին, անդլիական գրականութեան մասնագէտ փրոֆ. Լուիս Աուստի «Փլիքսթիլնս եւ այլ ֆիլիքսթիլներ» հատորը (1947) արարական տրիպլա-նատեղծութեան կամայ լայն է: Ք. Ս. Իլերթի «The Waste Land»-ը թարգմանիչ այս բանաստեղծը շարժանացու սակայն իրաքցի երիտասարդ զերթոյներու բախտին:

1938ին Քէմպրիճի մէջ դրած «Փլիքսթիլնս...» հատորը բացող իր յանաբանին մէջ, «արարական դասական միայնակ ու միոյնաբան բանաստեղծութիւնը մեռած է այլեւս»՝ յայտարարող Աուստի անդրանիկ հատորը, այս իսկ պատճառով՝ հուսալուծեցու շուկայէն, որուն իբրեւ արդիւնք՝ Անդլիոց մէջ կազմաւորուած եւ Աքսֆորտէն շրջանաւարտ գրականութեան փրոֆեսորին յանդուածն փորձը մնաց ծանօթ Եզրպտտի մտաւորական սեղծ շրջանակին մէջ միայն:

Քսաներորդ դարու անգլիացի բանաստեղծներուն նման, խօսակցական լեզուի պատուաստում-օգտագործումով, բանաստեղծական դասական լեզուն աշխուժացնելու աշխատանքին առաջին դրօշակիրը հանդիսացող «Փլիքսթիլնս եւ այլ ֆիլիքսթիլներ» հատորի էջերուն տպուած, «ԱՌՏՈՒՄ ԲԱՆՏԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ» շարքի «Քիլիքի Էլիլյան» խորագրեալ բանաստեղծութիւնը, թեւեւ նորարարութիւն բառը իր յայն իմաստով արգարացնող, եւ մերօրեայ շահանքները գոհացնող առաջին լուրջ փորձն է, որովհետեւ այս քերթըւածը միանդամայն ցնցեց արարական դասական բանաստեղծութեան եւ տաղաչափութիւնը, եւ լեզուն, եւ կտաւոյցը, եւ խորքը:

XXII

Երկրորդ Ալիսարհամարտը բնիկային, քաղաքական եւ հոգեկան նոր վերլիւյսութեանը ստիժ ընծայելով հանդերձ, արարական երիտասարդութիւնը դէմ յանդիման դրաւ մէկէ աւելի պահանջներու, որոնք ամփոփուեցան վճռական հրամայականի մը մէջ.

Լինե՛լ...

Երիտասարդութեան մօտ օրրոտորէ արծարծուող լինելութեան հրամայականին պատասխանեց նոյնինքն երիտասարդութիւնը: Երկրորդ Ալիսարհամարտէն յուսալքուած ջիւղերով գուրս ելած երիտասարդութեան զայրոյթը ստացաւ առաւել յայն ծաւալ՝ մասնաւորաբար Պաղեստինի դրաման յաջողող յուսախարութենէն ետք: Իշխող կարգերուն դէմ ըմբոստացող երիտասարդութիւնը իբր բրաւ ժողովուրդին տազնայները, ապրեցաւ ցեղին յոյզերը, մղձաւանջները, երազներն ու պատրանաթափութիւնները:

Ժողովուրդին համետ խաւերէն ծնած համալսարանական երիտասարդութեան համար, ժողովուրդին քաղաքականացումը դարձաւ գլխաւոր մըտահոգութիւն, մասնիկ առիկա այն երիտասարդութիւնն էր, որ հաւատաց, թէ միայն քաղականացած ժողովուրդի լայն զանգուածներու մասնակցութեամբ կայ ժողովրդավարութեան յաջողութիւնը: Այս իսկ պատճառով՝ սիրող կարգերուն դէմ բարձրացող դժգոհութիւնը դարձաւ ամէնօրեայ սարուած:

Դժգոհութեան այս շարժումը լայն տարածում գտաւ մասնաւորաբար Եզրպտտի եւ Իրաքի մէջ, իսկ աւելի ուշ՝ Սուրիոյ: Համալսարանական երիտասարդներուն համար այս անելէն դուրս գալու միջոցները դասուեցան:

յեղափոխական եւ ընկերվարական կուսակցութիւնները: Իրենց հարցերուն ու տագնապներուն լուծման բանալիները հանդիսացան մարքսիստ փրփոսփայտութիւնը, Համայնափարութիւնը, Իսլամ նղրայրներ կուսակցութիւնը, իսկ հետագային՝ Արար Ընկերվար կուսակցութիւնը:

Մարքսիստ փրփոսփայտութեան անդամադրուած կարգ մը բանաստեղծները բուռն կերպով յարձուում գործեցին առօրեային ու ժողովուրդին հեռու, իրենց թանձրակուտ պատեաններուն, այսինքն՝ փղոսկրեայ աշտարակներուն մէջ կծկուած ոտմանթիբ բանաստեղծներուն վրայ, որոնք ըստ առաջիններուն՝ «պատասնկան տաճուի գրականութեամբ եւ հնարարի հայրը» լը կր փորձնն օրօրեղ ժողովուրդը»:

Կարճ ու կտրուկ՝

Բանաստեղծութիւնը պարտաւոր է ըլլալ ժողովուրդին երազներուն ու տաղանայներուն ողջ դումարը ցոլացնող հայելին: Յանձնառու բանաստեղծութիւնն է ասիկա, ուր էժերին ու խալիֆային փոխարէն տեղ դառն ժողովուրդի համեստ դասակարգերը, պիւղն ու զրկանքը, պիւղացին ու բանուորը եւ դանձը յուզող ընկերային հարցերը:

Համայնարանական ընկերվար երիտասարդ բանաստեղծներու օտեղծագործութիւնները արժանացան անակնկալ ընդունելութեան: Եթէ ումանթիբ զպրօցի անկման շրջանին յաջողած այս բանաստեղծութեան յաջողութեան պատճառներուն առաջինը՝ ումանթիբ զպրօցի անկումն է, երկրորդ պատճառը՝ ժամանակին ժայնը ըլլալու իրողութիւնն է անկասկած:

Արդարեւ, ընկերային հարցերով տագնապող երիտասարդ բանաստեղծներուն ջանակը՝ Քեմալ Ապարը Հալիմ, Ապարը Բահման էլ Եարգաուի, Ալի էլ Մուհթի էլ Հիճապի եւ Սալահ Ապարը Սապաուր կրցան իրենց զերթուածներուն ալիքներով հանդիսանալ արձագանդները թէ՛ «ցեղին ձայն»ին ողջ լարերուն եւ թէ՛ քսաներորդ դարէն ծնած ձանձրոյթի եւ անհեթեթութեան խուլ կանչներուն: Այսպէսով՝ ծնունդ առաւ իրապաշտ ընկերվարական բանաստեղծութիւնը:

Իրապաշտ ընկերվարական բանաստեղծութեան երեւման պատճառով՝ րացի Ապարը Սապաուրէն, երիտասարդ բանաստեղծները լքեցին ներայնարհային, ետակարուն գրականութիւնը, եւ տոկոսային այս կամ այն համեմատութեամբ, իր բանաստեղծութեան թեմա օգտագործեցին առօրեային քաղտած, ընկերային հարցեր թովանդակող նիւթերը, ճնշուած դասակարգերուն տառապանքը, պիւղացին ու յետամնացութիւնը, եւ այլն: Այլ խօսքով՝ աւտտապետական Արեւելքը իր մութ ու յոռի գիծերով մտաւ պրականութեանէն ներս:

Ռումանթիբ ախորժակներու տէր բանաստեղծներն եւս զկրցան ձերբազատուիլ այս հոսանքէն: Նոյնիսկ զկնոջ քանապակովը տխրողին արժանացած օտերիացի նիղար էլ Գապպանիի եւ երիտասարդ Քեմալ Նաչաղի զերթուածներուն մէջ կը հանդիպինք ընկերային երանգներու:

Քաղաքը, անթութիւնը, թշուառութիւնը եւ քաղքենի նենդութիւնները, որ յատուկ են քաղաքներուն, ծագիկին, արշալոյսին, մայրամուտին եւ բնութեան այլ տարրերուն փոխարէն տեղ գրաւեցին բանաստեղծութեան մէջ:

Երիտասարդ եւ Իրաքի մէջ միաժամանակ սկսած իրապաշտ ընկերվարական բանաստեղծութեան ի հալի խնկարկեցին յիսունական ու վաթսունական թուականներուն երեւան եկած երիտասարդ բանաստեղծները: Մինչեւ այսօր, քսանական թուականներու անգլիացի բանաստեղծներուն պէս (Իլերթ, Օտրն, Փատնա), ընկերային հարցերը կը դառնան բանաստեղծութեան

դիտարար նիւթերէն մէկը, պարզ աչի տարբերութեամբ, որ արարներուն մօտ յանձնուեցաւ հռետորային ալիքներու, յաճախ եղաւ ժակերեսային ու հորի- ղոնական պոսթկում, ուղղակայեաց, ներսուղում եւ հոգեկան բարդ կա- ցութիւններու տարբարումում ըլլալու փոխարէն:

Ժողովուրդին բազմեցողին արտօնումը ըլլալու ձգտող բանաստեղծու- թեան այս հոսանքը, եթէ արարական անմիջական բանաստեղծութիւնը հա- բըստացուց շարք մը նոր ու համամարդկային քերթուածներով, պէտք է ընդգծել սակայն, որ անհիմա սկումայ հայրը հանդիսացաւ շարքային եւ թի- ւով ոչ-քիչ հատորներու:

«Մատաֆէֆ»(\*), մէջ, Ատոնիսի ստորագրութեամբ լրջ տեսած «Տար կելտեր» հասկնալու համար արարական նոր բանաստեղծութիւնը՝ յօղ- ւածին հինգերորդ կէտը խիստ շահեկան է, ուր քննարկման նիւթ կը դառնայ իրապաշտ ընկերվարական կամ յեղափոխական բանաստեղծութեան սխալ հասկացողութիւնը:

Այսպէս՝

«Պէտք է յստակ ըլլայ այլեւ, որ այս բանաստեղծութիւնը՝ ամուտ- նային է միայն: Օրաքերթի մէջ կարդացուող կամ տօնահնդէսներու ըն- քացիք յատուկ թանկութիւն չար ու նման թանկեր եւ: Կրնայ ըլլայ անհրաժեշտ, օգտակար, շինիչ, ինչպէս կրնան օգտակար, անհրաժեշտ եւ շինիչ ըլլալ լը- րացրական յօղուածը կամ քաղաքական մտաբ: Մակայն անհիկա կը մնայ լը- րացրական, նկարագրողական կամ շարադրական ձեւ մը միայն: Այս իսկ պատճառով՝ պէտք է մօտենանք եւ կշռենք գայն լրացրական «արուեստ»ի տեսանկիւնէն...»:

Սխալ եւ անգիտակից պատճառներով՝ «նոր բանաստեղծութիւն» կու- ւած տաղաչափական ջնարակով զարդարուած, կամ ազատ բանաստեղծու- թեան կարուկ ու երկար տողերն ի վեր ման եկող լրագրական այս նախնա- կան ճարտեսանքին դէմ ծառայան լիբանանցի արուեստագէտ երիտասարդ- ները:

«Շըլըր» ծնունդ առաւ իբր հակադրութիւն բանաստեղծութիւնը թը- ոիչքէ գրկող, խորհուրդէ դարպող ու տեսիլքէ քամող արհեստային արուես- տին:

Անխառն բանաստեղծութեան ստեղծագործ նկարագիրը ձեւակերպող ճարտեսան զեզակի ձայնը, յիսուն տարուան թմբիւրէ մը ետք վերստին ծը- նաւ, տղատ ու անկաշկանդ բնական ծնունդով մը, իսկ բանաստեղծութիւնը դարձաւ անձանօթ կախարդութիւն, աղատութեան պատարագը...:

XXXIII

Կարելի է «Շըլըր» հանդէսը համարել ներաչխարհի բոցերով օծառուած բմբուս սիրահարներուն արկածախնդրութիւնը: Մահմանեւալ ներկայ եւ անցեալ տաղաչափութիւններուն դէմ ծառայող բողոք հանդէսին առաջին համարը կը բացուէր ամերիկացի բանաստեղծ Արչիպալտ Մաքլիշի բանաս- տեղծութիւնը բնութագրող մէկ նոթով:

Երեք անգամ «Փալիսըր» դրական մրցանակը շահած, տառը տարի Հարվըրտ համալսարանի զբաղանդութեան ամպիոնը վարած, մշակութային

(\*) «Մատաֆէֆ» թիւ 24-25, 1973 Փետրուար, Երիտասարդ բանաստեղծութեան յանկացուած բացառիկ համարը:

ու պետական շարք մը բարձր պաշտօններ ուսանձնած ամերիկացի զինադատ բանաստեղծ Արչիպուլա Մաքլիշ ստորագրութիւնը կրող նոթով բացուող նոր հանդէսի առաջին թիւը պատկերող այս էջը օտարամուլ քմայք մը չէ : Ընդհակառակն, կայունացած բանաստեղծութիւնը դասապարտող Մաքլիշի բունաստեղծութեան այդ բանաձևումը կու դար պաշտպանելու ճպրանեան «եզակի ձայն» ու անաւարտ տեսիլք բանաստեղծական ըմբռնողութիւնը, որուն շարունակութիւնն ու դարպացումը եղաւ «ՄԸՂԸ» հանգէսը :

Փորձառական բանաստեղծութեան հանդրուանը յաղթահարած «ՄԸՂԸ»ը ճպրանեան ուղիով ընթացաւ անակնկալէ անակնկալ : Անոնք վերջնական սահմանումի մը կազապարին ներքեւ երբեք չբանաստեղծեցին բանաստեղծութիւնը : Չգործեցին նախորդներուն սխալը եւ այս իսկ պատճառով՝ մարդկային բարձր ներշնչարհին ու անաւարտ տեսիլքներուն հրամայականէն մրգւած՝ սուղեցան «միշտ որոնման կարօտ» մնացող աշխարհէն ներս :

Պատմողական բանաստեղծութեան, լեզուաուղեկութիւն բանաստեղծութեան, իրապաշտ բանաստեղծութեան փոխարէն անոնք մղուեցան ճշմարտողական բանաստեղծութեան :

Այս բանաստեղծութեան դրօշակիրները վերատեսութեան ենթարկեցին պանաստեղծական բառապաշարը, ոճը, կառուցն ու խորքը : Անոնք եղան այն յոնդուզն մտաւորականները, որոնք յայտարարեցին, թէ ամբողջական մարդն է բանաստեղծութեան եւ պարունակութիւնը, եւ պարունակելը :

Ամբողջական եւ բոլոր ժամանակներու մարդը գտնելու, ըլլալու առաջադրութեամբ ներսուզուող բանաստեղծութիւնն է ասիկա : Երկրային մետաբանայ ստանութեան եւ երկնային սարսափազդու անակնկալներուն միջեւ մոլորած մարդը փրկելու արամբ : Ինքզինքը ինքզինքէն վեր հանելու եւ ներսը լսած հրեղէն ակերը յայտնաբերելու եւ ցնցելու ասպետութիւնը :

Պչառանէն ի վեր ծանօթ բանաստեղծական այն սահմանումն է ասիկա, ըստ որում՝ իրաւ բանաստեղծութիւնը ճշմարիտ գոյութեան մը խորագրուն կէտերն ի վար կատարուող սուղումն է, այսինքն՝ ներսուզում :

Այս սուղում աստեղծութեան ընթացքին է դարձեալ, որ երեւան կու գան նոր նախադասութիւններ, նոր ժայթքեր, նոր որոտումներ, նոր պատկերներ, որովհետեւ այս անաւարտ գործողութիւն-փորձառութիւնը ապրող արկածախնդիր բանաստեղծը, այսինքն՝ Թանին սիրահար ասպետին հոգւոյն մէջ մազկող Միթին հետ կը ծաղկի նաեւ իր բնազանցութիւնը : Մինչ այդ կոկորնի մը նման փակ ու անծանօթ իր բնազանցութիւնը կը սկսի բացուիլ, ու քերթողը կը զարմանայ ի տես նոր երեւոյթներուն, կը զարմանայ իրրեւ մարդ, իրրեւ հոգեմիճակ, իրրեւ լեզու, եւ ամբողջական մազնիսացումի դեմքի ձևանէլէ ետք, զանոնք կը ձուլէ մազնիսացած ու մազնիսացնող նոր լեզուով մը : Ի վերջոյ, իւրաքանչիւր իրաւ բանաստեղծի մէկ նոր կախարհային փորձառութեան առընթեր կը ծնի նոր ու նշմարիտ լեզու մը, այն լեզուն, որ կը պայթի նոր մտայնութիւն-փորձառութիւն ակերուն հետ, եւ զայն կը զրսեւերէ սովորական լեզուի ծանօթ, սահմանեալ հեռաւորութիւններէն անդին անցնող, հոգեկան նոր կացութեան զարգացումը եղող սաք ու անակնկալ լիզու-բանաստեղծութեամբ :

Փորձառական այս նոր գրականութիւնը վերլուծող իր յօդուածներէն մէկուն մէջ ԵռուէՖ Էլ Պալ կ'ըսէ .

«Նարաբիւնը տարագ մը չէ, որով մարդ կը գարդարուի եւ կը յառկանդուի : Կարեւարագոյնը ձեւերէն ու տարագներէն անդին կը գտնուի : Ձայն

կը կոչենք մտայնութիւն. մարդ կա՛մ մտային նոր կառայց ունի եւ կամ չու-  
նի, անշուշտ միշտ խորքը նկատի առնելով :

«Մէկ խօսքով՝ նորութիւնը գրականութեան մէջ վարդապետութիւն մը  
չէ, որ կ'արգիլէ տարբեր ըմբռնումներ, այլ ստեղծագործական շարժում մըն  
է, որ կը հետեւի կեանքին՝ անոր տեսական փոփոխութեան զուգընթաց յա-  
ռապացումով» :

Այս իսկ պատճառով՝ «Շը՛րը»-ը չունեցաւ փերջնական հանդանակ մը,  
ընդհակառակն, իրաքանչիւր բանաստեղծ իր այնպիսի մտքով հարստացուց  
այդ հանդէսը, որ դարձաւ բանաստեղծական մշտարժեք հարբուի :

Այսուհանդերձ, ներկայէն դժգոհ, իրենց առանձնութեան, անհեթե-  
թութեան եւ պոթիկումներու փոթորիկներու մէջ բոկոտուող, մարդուն գեր-  
մարդութեան հաւատացող, սիրահար-յեղափոխականներ եղան «Շը՛րը»-ական-  
ները: Ձգտեցան ամբողջականին, գերագոյն կատարելին, եղակիին: Հոս  
պէտք է փնտռել ատելութիւն-մերժումին խոր դրոշապատճառները, որ ստա-  
ցաւ պայծառ ու գրեզան գիմազիծ մը :

Հոգեկան հակասական կացութիւններու միջեւ տարուբերող բանաս-  
տեղծները կառչեցան բանաստեղծին ամբողջական ազատութեան: Գուրգու-  
րացին արուեստագէտին թոհիջները ղեկավարող ազատութեան վրայ: Ապրե-  
ցան այն դասն իրականութիւնը, ըստ որում՝ գրական անհղութեան արթուն  
պահակը ըլլալու յանձնառութիւնը կը ջլատէ նոյնինքն ազատութիւնը, որ  
արուեստագէտին գերագոյն գէնքն է եւ հարստութիւնը միտամանակ :

Աւելի՛ն .

Ամբողջական ազատութեան վրայ գուրգուրացող այս բանաստեղծները  
չեղտեցին, թէ արդէ բանաստեղծը պէտք է դուրս գայ քարացած մշակոյթէն,  
կերտէ իր ազատութիւնը, որուն շնորհիւ միայն կարող է յաւելում մը ար-  
ձանագրել իր մշակութային գանձարանին վրայ: Վասնզի բանաստեղծութիւ-  
նը ազատութիւն է եւ անվերջակէտ այլափոխութիւն:

Ազատութիւնը իրր յեղափոխութեան միակ միջոց ընդունած այս բա-  
նաստեղծները, նոյն պատճառով հասան բնագանցական այնպիսի վիճակնե-  
րու, ուր բանաստեղծութեան կշռոյթը մերթ շտաշելով երկարեցաւ, մերթ  
զըզաց առուակի մը նման եւ յաճախ պայթեցաւ իրենց ներաշխարհներուն  
մէջ պայթող հոգեկան կացութիւններու զուգընթաց ուժականութեամբ...

Ու ծնաւ բանաստեղծութիւնը...

Ու ծլորձակեց բանաստեղծութիւնը...

Ի սկզբանէ գոյութիւն ունեցող եւ այլափոխուող Բանը դարձաւ ստեղ-  
ծագործութիւն, եզակի սեսիլք, ինքնուրոյն բոյր, անաւարտ լեզու, անկա-  
րելին հասնող եւ գերանկարելին ձգտող յեղափոխական թոհիջ, ուր հա-  
ղորդակցութիւն-լեզուն նուաճուելէ ետք, անեցաւ լինելութիւն լեզուն, որ  
խորտակեց արձարանութեան եւ ընթացիկ մտածումներու պատճառները ու  
թափանցեց կեանքին մէջ՝ կեանքի ստեղծագործ հոսանքն ի վեր:

Ժամանակին, սահմանելին ու բնութեան գէժ մենամարտ մըն է ա-  
սիկա: Շէ՛րքափրիի Համիլէթի հարցումին ու բոլոր դարերու բոլոր արուեստա-  
գէտներու հոգիներուն խորերէն բարձրացած վճռակամ պատասխանը՝

Լինել...

Իբ «Արարական ժամանակակից բանաստեղծութիւնը, զարգացումն ու  
ապագան» խորագրեալ ուսումնասիրութեան մէջ, նոյն սերունդին պատկա-  
նող բանաստեղծուհիներէն, իտարթումի համալսարանի արարերէն լեզուի դա-  
սախոս փրոֆ. Սարմա էլ Սարաա էլ Ճաշիւսի, վերլուծելէ ետք նոր բանաս-

տեղծներուն մօտ մարդու հոգիին խորերը սուղուէլու արարքին անհրաժեշտութեան դրդապատճառները, կը հասնի հետեւեալ խիստ շահեկան եզրակացութեան .

«Մենք կը դիմակայենք մեր ներաշխարհները պարզ այն պատճառով, որ ոչ մէկ բան կրնայ սուգուիլ քերթուածին նման եւ մեր եռագոյն խորերէն երկուսն համել ծամօք ժամանակի ընթացքին հան քաղուած գօզանները: Բանաստեղծութեան պահը է նաեւ մարդկային ետին գիւտը ընելու ժամանակը, որովհետեւ կը կառչի ու կը պլլուի ապագայի կռկարդին եւ անտանելի ներկայէն ձերբազատուելու համար կը վարձէ գալիքը: Այս իսկ պատճառով՝ անհկա կը գգայ անհրաժեշտութիւնը տեսիլներու, այն տեսիլներուն, որոնք պիտի գծեն ապագային քարտէսը: Բանաստեղծութիւնը այս տեսիլներուն նետուող կամարքն է: Անհկա տեսանելի, արասիպագոյր բանաստեղծութեան պայթումին պահն է, որովհետեւ ժամանակն է դէպի ապագան ուղղուած շարժումին եւ արկածախնդրութեան»:

Ապագային բացերն ի վեր կատարած ճարտանշաններու ընթացքին, «ՆՐՂՐ»-ի սերունդը, միջազգային բանաստեղծութեան եղանակներուն, շըփումներուն, փորձառութիւններուն զծով դիմեց դիցարանութեան եւ առասպելին, պարզ այն համոզումով, որ անոնք տակաւին կը պահէին բան մը իրենց նախնական ու հեթանոս ջերմութիւնէն, եւ զանոնք իբր թթիւմոր ու շաղախի օգտագործելով՝ կերտեցին իրենց վարարուն աշխարհը, որով դիմացրեցին երկաթի ու ոսկիի սասն աշխարհին:

Փունիկեան, ասորական, փարսեան, քրիստոնէական, մահմետական, արեւելեան ու արեւմտեան դիցարանութիւններէն քաղուած բազմաթիւ զէմքեր զարձան սեմպոլներ: Իրենց ներաշխարհը ցոլացնող հայելիներ: Վերջնական յաղթանակին հասած կամ ընդդիմադիր ու ջղուտ այն հերոսները եղան անոնք, որոնք թափ տուին իրենց երեւակայութեան, կերք՝ ջիզերուն, եւ մահուան դատապարտուած զնայուն մարդը բարձրացուցին յաւիտենական հերոսի պատուանդանին:

Թ. Ս. Իւնըթի «Նրկիր անբակացի էջերուն իրազործուած առասպելական ու դիցարանական մշակոյթներու նուանումները սերտելէ ետք, հին մշակոյթներու օրրան Արեւելքի հարուստ մասնագութեան հանգրէն քաղեցին եւ նոր շունչ տուին մէկէ աւելի շատուածներու:

Հոս հարկ է ճշդել, թէ դիցարանութիւնը առաջին անգամ օգտագործողը եղաւ Ճպրան Խալիլ Ճպրանը: 1914ին դրուած իր «Հանդիպում» պատմութեան մէջ ընթերցողը կը հանդիպի Աստուխ ու Ալթարութ շատուածներուն: Իսկ 1934ին, Ճպրանի գրչեղբայրներէն Միխայիլ Նաիմէ կը ստորագրէ առաջին լուրջ ուսումնասիրութիւնը՝ «Փիւնիկը» տիպար կեանքի անասանքը: Նաեւ պէտք է ակնյցնել, որ «Ալիոլլօ» ամսագրին լուրջ հաւաքուած բանաստեղծներն ալ դիմեցին դիցարանութեան եւ առասպելին: Սուկայն, անոնք մնացին դիցարանութեան եւ առասպելի պատմագրերու ծանօթ բովանդակութեան սահմաններուն մէջ: Մինչդեռ, 1960ական թուականներուն եւ «Նրկիր» էջերուն ապուած բանաստեղծութիւնները, շնորհիւ դիցարանական եւ առասպելական երանգներուն՝ զարձան բանաստեղծութիւնը աղօթք-վերացումի ոլորտներուն առաջնորդ աւելնը, աշխարհաբնկալման ու դրոսեւորման խորախորհուրդ պատարագ մը, եւ եզակի տեսիլք-ազդանիքներուն ու խորհուրդներուն ամէնէն խոր յատակներն ի վար առաջնորդող ուղեներինն ու լուսարձակները միաժամանակ:

**Աւելի՛ն .**

Գերմարդը գրուերող, անյողթաւարելին բնութագրող, մաւը չէզոքացնող, անմահութիւնն ու անկարելին պարտութեան մատնող յեղափոխաչունչ ու մարգարէչաղունչ ուժականութիւնը նաև : Սրինակ մը տալու համար ըսենք, որ նոյնիսկ «Աւետարան»ի Ղազարոսը զոգեցաւ յեղափոխական նկարագիր, եւ եղաւ անպարտելիութիւնը, պողպատեայ կամքը, այլ խօսքով՝ ամբողջական գերմարդ արուեստագէտը խորհրդանշող ստւպոլ, ինչպէ՛ս՝ Փիւնիկն ու Աշխարութը, Մահարն ու Ատոնիսը, Կալկամիչն ու Քամմուզը, Յիսուան ու Սիդիֆը, Պրոմէթէոսն ու Յուլիոսը, Հալլանն ու Այնուպը, եւ ուրիշներ . . .

Անշուշտ մշակոյթներու բացաւած ա՛յս գրականութիւնը բախեցաւ մէկէ աւելի զժուարտութիւններու, որոնց գլխաւորագոյնը պատճառեց տալաչափութիւններու սովոր դասական ընթերցողը : Բայց անոնք երբեք զիջում չըրին ընթերցողին, ընդհակառակն, բանաստեղծական լեզուն խօսակցական լեզուով թարմացուցած բանաստեղծները «Շը՛րք»ի էջերուն տպեցին իրենց եւ միջլզային արդի բանաստեղծներուն ստորագրութիւնները կրող շարք մը մտաւորական յօդուածներ, պարզ այն համոզումով, որ բանաստեղծութիւն կարգացողը պարտաւոր է ունենալ մտաւորական եւ իմացական մակարդակ ու բանաստեղծական նուրբ զգայնութիւն :

**Վասնզի՛**

«Հակայ բանաստեղծը կը նեղէ իր ընթերցողը զայն ուրախացնելէ աւելի : Բացառիկ բանաստեղծութեան մը ընթերցումը արճում է եւ տառապանք, որովհետեւ ծնունդի ձեւ մըն է եւ առանց երկուսնիս անկախի է, որ ծննդէ : Բանաստեղծութիւնը աստիճանով ծնունդն է» :

Թ. Ս. Իյերթի այս խիտ բացատրութիւնը կու գայ շեշտելու ա՛յն, որ բացառիկ բանաստեղծութիւնը անաւարտ ծնունդն է, որուն կ'ենթարկուի նաև ընթերցողը, որ գայն ընկալելու ընթացքին կը տաւապի, կ'այնկածի, կը կորստի արուեստագէտին պղտոր ներաշխարհի խորհուրդներուն ձէջ : Այլ խօսքով՝ կա՛մ կը յողթաւարէ բանաստեղծութիւնը կամ ալ կը յողթաւարէ : Բանաստեղծական հարուստ մակարդակի եւ դերզգայուն գրայարանքի տէր անձին համար խորապէս բանաստեղծական այս քերթուածը, ճշմարիտ ընթերցանութեան նիւթ ըլլալէ աւելի, ընթերցանութեան ընթացքին յայտնադործուող եւ ձեւաւորուող իր իսկ լինելութիւնն է : Քերթուածին ստեղծագործումը, խորհուրդներն ու շշուկները իր մէջ շարունակող «պատկեր մարդուն գերմարդացումը» :

Իր «Հատմանիքներ արարական արդի բանաստեղծութեան» ժողովածուն բացող յառաջաբան-ուսումնասիրութեան մէջ, Մուսթաֆա Պէտէուի իբրանացի երիտասարդ յեղափոխականներուն ու իրապաշտ ընկերավարականներուն միջիւ բաղդատութիւն մը կատարելէ հտք, կը հասնի հետեւեալ եզրակացութեան .

«Ուշագրան այն է, որ արդի ամէնէն յեղափոխական բանաստեղծութիւնը ո՛չ մարքսիստ վարդապետութեան հետեւողներուն եւ ոչ ալ իրապաշտ ընկերավարականներուն ստեղծագործութիւնն է, այլ՝ իրագործումն է խումբ մը բանաստեղծներու, որոնց անունները կապուեցան իբրանեան «Շը՛րք» հանգէտին : Անոնք իրենց կեցածքին մէջ, ամէնէն ուժգին կերպով կ'ընդդիմանան իրապաշտ ընկերավարականներուն ալ կը հաւատան, որ բանաստեղծութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ եզակի տեսիլներու դրսեւորումը նոյնքան»



եզակի լեզուի մը միջոցաւ, եւ որ իբրեւ խորք շունի մարդկային եսի յայտնագործումը»:

Անկասկած, որ «լեզուի պատմելը»<sup>(\*)</sup> բանդելու ճամբուն եւ ամբողջական մարդն ու ամբողջական բանաստեղծութիւնը կերտելու ընթացքին, լիբանանցի մտաւորական այս տաղբիւնները գործեցին ծայրայեղութիւններ, ընթացողը զարմացնելու սիրոյն իրենց զարմացան՝ բնագանցական անխառն պահու մը ընթացքին արարուած բանաստեղծութեան ի տես, սակայն պէտք է ընդդէմ, թէ Բանի սիրահար ու Բանին նարսիսք դիմագծին Հաւատացող կախարհներուն մեհեանը եղաւ նախ «Շր՛րք» եւ ապա զայն զարգացնելու համար Հրապարակ իջած Ատոնիսի «Մառախլֆ»ի երկամասթերթը:

«Շր՛րք»ին ու «Մառախլֆ»ը «ո՛չ» ըսին արարական դաստիարակ մշակոյթը պահպանելու կրաւորական պարտականութեան, դուրս եկան արարական մշակութիւն աւանդներուն պահպանման պատճառով ստեղծուած նեղմիտ դրականութեան լոյժ անդատանէն, արար ընթերցողը զարմացուցին, սակայն իրենց շնորհիւ արար ընթերցողը հասաւ միջազգային մակարդակներու, իսկ արարական գրականութիւնը երկու տասնամակի ընթացքին կտրեց երկու դարերու ժամանակամիջոցին նուաճուող Հեռաւորութիւն: Ետեւէ՞ք էլ թաղ եւ իր ընկերները թարգմանեցին, վերլուծեցին, ստեղծագործեցին եւ իրենց նիւերուն բերումով արարական աշխարհին մէջ փնտռուած անուններ զարձան իւրերթն ու Օսթըն, Ուիթմընն ու Շարլը, Փերան ու Արակոնը, Փազն ու Ժուլիը, Զարան ու Մեմպոն, Եիթն ու Փառնալը, Բելլին ու Պրէլթը, Պրիթանն ու Կինգսթրիմը, Լորթան ու Փրեմիլը, Եւաուշենրոն ու Տը Պուշենն եւ դեռ միջին մերօրեայ Երրորդ Աշխարհի ոչ-շատ ծանօթ անվանները: Լիբանանցի մտաւորական եւ միջազգային բանաստեղծութեան քաջածանօթ արկածախնդիր բանաստեղծները արարական գրականութեան յեղափոխական սերունդն է, գործերու ու պատմով Հասանցած Հրարուխին անակրնկալ պայթումով եւ արարական անմիջական բանաստեղծութեան ճարտեսան տանար ծրարելը իրապարտող վարպետներն ու ջուրմերը միաժամանակ:

«Շր՛րք»ը բացառիկ երեւոյթ մըն է արարական անմիջական գրականութեան պատմութեան մէջ եւ նոյն այդ պատմութիւնը յուսաւորող մշտաբարբոք արեւակը...

(Շար. 5 եւ վերջ)

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

(\*) «Լեզուի պատմելը» — Այս գծով նաեւ մեծ ջիւր կատարեցին լիբանանեան բարձրագոյն գրող բանաստեղծները: Քնարերգակ, խեղճակ ու միտով յարող բանաստեղծութիւններու կը համոզեցինք յոյսանք մտ, ինչպէս՝ Միշէլ Թրասի կամ Մորիս Աուառի հատորներուն մէջ: Դմաճագէտ լիբանանեան իսուսկական լեզուով Բանդանի եզրայրներուն կողմէ գրուած շերտածննդի մասին իրենց բանաստեղծական քաջածատ ու քաջամտիկ շերտութեամբ կը հնային ընթերցողը անմիջական գերմութեամբ մը, որ սակի վարակիլ կը դառնայ Ֆէյրադի արեան տաճարի մը պարունակող անեղ ճայթի ընդմէջէն: Այնուհետեւ այս բանաստեղծութիւնը արարական արդի գրականութեան բանաստեղծութիւն-ճայթ բացառիկ երեւոյթն է:

Սակայն, առասարակ քաջածատ ու լորձաշարք գրականութիւն մըն է լիբանանեան իսուսկական լեզուով մշակուող բանաստեղծութիւնը: Անք կը պահի յեղափոխական նկարագրերը: Այսուհանդերձ, անբառ միւս մըն է արեւելի յարակիլ յար եւ նման անգլիերէն ու ֆրանսերէն լեզուով մշակուող լիբանանցի բանաստեղծներու ստեղծագործութեանց:

## ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՒՐՆԵՐ

### I ՄԱՄՈՒԼ

- «Էլ Առաստ՝յոյ ամսագիր», Պէջրութ, 1953 թիւ.— 5, 7, 11, 12,
- > > > > 1954 թիւ.— 2, 3, 4, 6, 7, 9, 11.
- > > > > 1958 - 1963
- > > > > 1967 - 1973
- «Էլ Առաստ» հոսմանայ հանգէս, «Շը'ըր» հրատարակչութիւն, Պէջրութ, 1962 - 1963,
- «Էլ Առաստ» էլ Առաստի ամսագիր, Դամասկոս, 1971 - 1973,
- «Էլ Մարիֆէ» ամսագիր, Դամասկոս, 1968 - 1973,
- «Էլ Նահար» օրաթիւրթ, Պէջրութ, մշակութային «Լիբանան» գաղմակցութիւն կի-  
րակերտայ յանգում, 1961 - 1973,
- «Մառաթէ» կրկամամիսիկ, Պէջրութ, 1969 - 1978,
- «Շը'ըր» հոսմանայ հանգէս, Պէջրութ, 1957 - 1970,
- «Ալլամ» ամսագիր, Պաղատ, 1972, թիւ 2, էլ Քապիսի, Քրատ՝ «Բանաստեղծութիւնը  
և յեղափոխութիւնը»,
- «Ալամ էլ Շըգը» հոսմանայ հանգէս, Քուէյթ, 1973, Դ. հատոր, թիւ 2, էլ Ճախուսի,  
Յայժա էլ Դատրա՝ «Արաբական ժամանակակից քանաստեղծութիւնը, զարգացում  
ու ապագան»:

### II ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Ապրատ, Ահաբ՝ «Ալլամի Ռահիպ էլ Պայեսի և իրաբան արդի բանաստեղծութիւ-  
նը», Պէջրութ, 1935,
- Ապրատ, Մարտն՝ «Արաբական գրականութիւնը», Պէջրութ, 1968,
- Աղգութի, Բահի՝ «Լուստարտիներ արաբական արդի բանաստեղծութեան վրայ», Պէջ-  
րութ, 1972,
- Ատիբ՝ «Պատմական ու գրական յախտեմական ճանրոյթութիւնը», Պէջրութ, 1957,  
«Համադարտիկ արաբական բանաստեղծութեան» (կրկ հատոր), Պէջրութ,  
1964 - 1968,
- «Գաղատարան արաբական բանաստեղծութեան», Պէջրութ, 1972,  
«Բանաստեղծութեան ժամը», Պէջրութ, 1973,
- էլ Կարի, Բաթի՝ «Արաբական արդի մտածողութիւնը», Պէջրութ, 1944,
- էլ Կարի, Ապրէլ Մըքէժ՝ «Գրական կնամքը մալտանիստական շրջանի», Պաշ-  
րէ, 1948,
- էլ Մալիքի, Նազի՝ «Մերօրնայ բանաստեղծութեան հարցերը», Պէջրութ, 1958,
- էլ Նուէյի, Մահմատ՝ «Նոր բանաստեղծութեան հարցը», Պաշրէ, 1964,
- էլ Քապիսի, Քրատ՝ «Իրանիան մեր բանաստեղծութեան վերջ», Մալա, 1972,
- էլ Ռաիի, Ըպրուի՝ «Իրանիան քաղաքական բանաստեղծութիւնը ԺԹ. դարուն», Պաղ-  
ատ, 1961,

- էլ *Ըօթայիլի Ազգէլ Տիւն*՝ «Արարական մերօրեայ բանաստեղծութիւնք», *Պէյրուսթ*, 1972,  
*Հոսպիէլ, Զոուտոս*՝ «Ուսումնասիրութիւններ եւ յուշեր», *Պէյրուսթ*, 1948,  
*Հուսէի, Թահա*՝ «Գրականութիւն եւ քննադատութիւն», *Էրկեր Բ. Հասոսթ*, *Պէյրուսթ*, 1973,  
*Ճապրոս, Ըպրահիմ Ճապրոս*՝ «Ազատութիւնը եւ զրեկչոյց», *Պէյրուսթ*, 1980,  
*Մահֆուզ, Իսամ*՝ «Արարական արդի սշակոյթի տեսքակեր», *Պէյրուսթ*, 1973,  
*Նաիմէ, Միխայիլ*՝ «Նոր մազին մէջ», *Պէյրուսթ*, 1972,  
*Պէտէուի, Մուսթաֆա*՝ «Հատընտիրներ արարական արդի բանաստեղծութեան», *Պէյրուսթ*, 1969,  
*Սուխ, Խուլուէ*՝ «Արմտոններու դրանումք», *Պէյրուսթ*, 1980,  
*Սոյեզ, Քաուֆիք*՝ «Նոր լուսարձակումներ ձգրոնի վրայ», *Պէյրուսթ*, 1966,  
*Բաֆզա, Զոուտոս*՝ «Բանաստեղծութիւնն ու մանք», *Պէյրուսթ*, 1973:



- «Անեկանք, *Էսամահաջ Հանգէօ*, *Պէյրուսթ*, 1988, Թիւ 1, էլ *Խալ, Եուսէֆ*՝ «Նշմարներ»  
արարական արդի բանաստեղծութեան մասին»,  
«Անեկանք, *Էսամահաջ Հանգէօ*, *Պէյրուսթ*, 1968, Թիւ 2, *Բասա, Անթուան*՝ «Նոր բանաստեղծութիւն»,  
«Ազդակ Շարաքօրեակ», *Պէյրուսթ*, 1944, *Մարտ 3-11, Լէյլանէ, Ա.*՝ «Ազու Այա էլ Մարրի»,  
«Նայիրի», *ամսագիր, Հոկտեմբեր, 1947-1949, Օշական, Յակոբ*՝ «Ազուլ Այա Մարրի»,  
*Ասթարանան, Գ.*՝ «Ընդարձակ, ընդհանուր, արարական սրտմտութիւն», *Պէյրուսթ*, 1961,  
» » «Արարական գրականութիւն», *Պէյրուսթ*, 1987,  
*Վալմուսդեան, Սիսակ*՝ «Ճարտն ետիլ ձգրանք», *Պէյրուսթ*, 1968:



**Թ Ա Տ Ե Ր Ա Վ Ա Ն Կ Ե Ա Ն Ք**

**Պ Ա Ր Ո Ն Ե Ա Ն Ի**

**«ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՏԱՄՆԱՐՈՅԺԸ»**

**Բ Ե Մ Ա Դ Բ Ո Ւ Թ Ի Ի Ն**

**Վ Ա Ր Ո Ւ Ժ Ա Ն Խ Տ Ը Շ Ե Ա Ն Ի**

30 նոյեմբեր 1973ին, Վ. Խաչչեանի Քաարոն 67 խումբը Պուրե Համուտի «Յակիր Տէր Մեչընեան» Քատերարակին մէջ սկսաւ ներկայացնել Յ. Պարոնեանի «Արեւիկան ատամնաքոծը» Քատերակը: Մենք ներկայ եղանք Չ Գեղատեմբերի ներկայացման:

Սրահէն դուրս եկանք գո՛ւ որոշ չափով, դժգո՛ւ՛ խաչը չափերով:

Եթէ խոսելու ըլլալինք միայն ներկայացման մասին, քանի որ անոք հասանաբար պիտի բաւէր մեր տպագրութիւնը յայտնելու համար: Այսպէս չենք ուզեր վարուիլ, որովհետեւ ամբողջովն մեր կայ մեր մտքին մէջ, Ըսենք անմիջապէս եւ աւելի որոշակի, որ ամբողջ է Վ. Խաչչեանի կարողութիւններուն ու ժամանակին: Անմիջապէս պիտի չէ վատնէ այնպիսի նիւթերու վերայ, որոնք մ'ը սրբանային կը ծառայեն, ոչ ալ հասարակութեան ճաշակին կամ պահանջներուն գուհացում կու տան:

Քատերական արտեանի ատումով՝ Յ. Պարոնեանի «Արեւիկան ատամնաքոծը» ոչ մէկ արժէք կը ներկայացնէ: Պարոնեան ինք եւս անգրադարձած է այդ իրողութեան եւ աշխատած է

հրատարակուած նոյնանուն հատորը հաւաքել հրադարակէն: Քանի որ օրինակներ ճողորմած են (աւաճ...) եւ հասած միջեւ մեր օրերը: Ի՞նչ հարկ կար Պարոնեանը շարունակելու կարելի չէ՞ր զինք հանդիսա թողուլ. կամ զէթ ընտրել իրժէ սոյնպիսի կտոր մը, որ Պարոնեանի փոխանցէր հասարակութեան: Աւելի՛ն, եթէ անպայման այդ կտորը պիտի խաղցուէր եւ կէք բեժադրէր զինք զինքին թոյլ տուած էր (հարկադրաբար) անտարբերութեամբ կատարելէ զատ նաեւ յանկուտաներ ընել, մուտքի բացառական անտարած մը տեղաւորել, Պարոնեանի կերպար մը բեժ հանել, կարելի չէ՞ր արգելք այդ յանկուտաները կատարել Պարոնեանի այլապէս արժէքաւոր հարուստ ժառանգութեան անուան տողերէն կազմելով, պարոնեանական մթնոլորտ մը առյուծ զէթ, փոխանակ բեժ հանելու խեղճացած, բեժ լիք չունեցող, ո՛չ իսկ սրամտութեան ճշոյլ մը պարունակող Պարոնեանի պունտի կերպար մը, որուն ամբողջ պարտականութիւնը եղաւ Խաչչեանէն պահանջել, որ հայկական Քատերարակ մը խաղալ...:

Վ. Խաչչեան համազուտ է արգելք, թէ

իր խաղալիք աստիճան հայկական թատերախաղը այս պնդման է ըլլալ... Այսքան ասան հայկական թատերախաղերուն ձեռք չգարնել է առ, ինչո՞ւ այս բացարձակորէն դատարկ կտորը հրամայուցաւ հայ հասարակութեան:

Այս առիդը կը գրեմք ցաւով: Մեծ չէ թիւը հայկական արժէքաւոր թատերակներուն: Ատիկա պատճառ մը չէ սակայն, որ ձախող գործով մը բեմ բարձրանալու փորձ կատարուի, հայկական թատերակ ներկայացնելու պահանջի մը պահանջով ասուլու աստիճանութեամբ:

Ամենամահաբեկ թատերախաղին մէջ անգամ կարելի չէ տեղաւորել բեմական գիւտեր, ծիծաղաշարժ կացութիւններ: Պիլ մը ինչուք, քիչ մըն ալ ինչուք սպասում, գունդակ տեսարաններ, հրաժարութիւն ու լոյսի խաղեր չեն բաւեր թատերակ թատերական արժէքի բարձրացնելու համար:

Այսքանը բաւ համարելով թատերակի ընտրութեան կապակցութեամբ, անցնենք բեմադրութեան ու խաղարկութեան:

Վ. Խորշեան բազմիցս ասուած է վաստը իր բեմադրիչի, գերուսայիի եւ դերասանի կարողութեանց: Այս ներկայացման մէջ միւս չէ, որ այդ կարողութիւնները ի յայտ եկան: Ի՞նչ կը փնտռէ Վ. Խորշեան բեմադրիչը, Խորշեան դերասանը: Կը թուի, թէ հակառակ անցնալին երբեմն շատ դժուարին եւ մինչեւ անգամ վտուտիւլային (սեմպլիք գլխաքիզ) փրկաներու ներկայացմամբ ձեռք բերած իր մեծ յաջողութիւններուն, վարուժան Խորշեան կը փնտռէ դեռ իր հասելիք ուղին եւ այդ պատճառով կը թափառի ընդ մէջ արժէքաւոր, կիտարէք ու անարժէք զարծեքու:

Ներկայացման ընթացքին իրարու կը յորդորէին զուարճալի պահեր ու ձանձրալի սպասածները: Բեմադրական ճիգերով, արուեստական կարք մը տարբերու ներածումով ու սպասարժեամբ կարելի եղած էր որչա՞ռ տեսարաններ դարձնել զուարթ ու հետաքրքրական: Կարելի եղած չէր սակայն հանդիսատեսը պահել

գրեւորակութեան յարածուն վերելքի հողիկներէն մէջ:

Գրեւորակութիւն պատճառով գլխաւոր իրողութիւնը գերատանական շնորհի յայտնութեան մըն է: Առաջին անգամ չէ, որ Խորշեան կը յաջողի դերասանական շնորհք մը յայտնարեւելու ներկայացնել հասարակութեան: Այդպիսի յայտնարեւում մը եղաւ պր. Վիգէն Գարբինեան, փեսացու Մարգարի գերով: Իր խաղարկութիւնը, սկիզբէն մինչեւ վերջ, եղաւ նշարիտ, բնական, ներքին հուսկան մը արտացոլումի հարազատութեամբ, որով տիրապետեց բեմին եւ հասարակութեան հողիներուն: Ահա՛ բեմական շնորհներով ամուսնած շոր ասը մը, որուն կ'որո՞ժէ հետեւիլ եւ ընծայել բեմական տարբեր, այլապէս կացութեանց մէջ եւս իր կարողութիւնները յայտնարեւելու եւ զարգացնելու ասիթներ:

Լեւոն Շրեշտակեան, որ ցարդ տեսարար կը մտար բեմի մշտնջեն սակ որդուած ու շարացած, որով եւ անբնական խաղարկութեան մը սահմաններուն մէջ, այս անգամ, Չաղապան Մարկոսի գերով՝ դուած էր բնականութեան բաւարար չափով ուշագրաւ խաղարկութեան մը գաղտնիքը. բան մը, որ ուրախութեամբ կարելի է հատուտել, յուսալով աւելին՝ ազատային:

Սպասեակ Նիկոյի դերը վստահուած էր օր. Արփի Գէորգեանին, որ յաջողեցաւ իրայատուկ կերպ մը ասլ դերին եւ սուղաւ գարձուելի զայն, հակառակ տիպարային կերտումի մը նպաստով քննաքն քայտկայութեան:

Մարթայի դերով Մարի-Յօզ Մանուկեան եւ Քովմանի դերով Յակոբ Գոյալեանը՝ իրենց նշարիտեանի նպատակ բերին թատերակը ուղի պահելու համար թափառող ճիգերուն:

Վարուժան Խորշեան ընտրած էր թափառելիսակ, արեւելեան աստմեարոյժի դերը: Իրեն համար անյարմար գեր մը՝ ըստ մեզի: Հակառակ կարգ մը յաջող գիւտերու, դերը չունէր Խորշեանի կերպը, ոչ ալ կրնար համապատասխանել իր կարողութեանց. որով՝ հարցումը կրկին հու գայ մեր դրին սակ՝ ինչո՞ւ ընտրուած էր այս թատերակը...:

Բ. Փ.

# Կոմարներ

## ՏԳԵՂ ԱՐԱՐՔ ՍԸ...



Ձենք կրնար այս տարին գոցել՝ առանց անգրադառնալու այն ազեղ ալարքին, որուն ենթարկուեցաւ բանաստեղծ Փաղ Յակոբեան, Գալիֆորնիոյ շրջանի Եդեմի եկեղեցւոյ բակին մէջ, յանկարծ ամբոխի վերածուած «Տաւատացեալներու» կողմէ:

«Ասպարէզ»ի հրատարակած Նշմարին տուեալներէն մեկնելով զիւրին է ըմբռնել յանցաւոր խիղճերուն ալեկոծումը, բայց վարկի ու խղճմտանքի տէր մէկը չկա՞ր արգեօք հոն, որ ըմբռնէր մաքրամտաբուր հոգիի մը անհաշու ենկատ վրդովումը եւ զգաստութեան կոշով մը սանձելով դազազածները՝ ինչայէր իւրայիններուն խախտուած նուիրապետութեան մը վրայ բանաստեղծ մը յարձակման թիրախ դարձնելու երկրորդ սրբապղծութիւնը:

Բանաստեղծները, ի հարկէ, երկինքէն չեն իջած ու երկնային չեն, երկրային են իրենք եւս եւ մեղքեր կրնան գործել եւ կրել մեղքերուն հետեւանքները: Եւ յայնչեւ եւ ի կոշմանկ յարցելի ուրիշներ, բոլոր անոնք, որոնք կը ժպտին նուիրազործուած սրբութիւն մը ոտնակոխել: Բայց պարզանք ըստրովին տարբեր է հոս: Բանաստեղծ Փաղ Յակոբեան մեղք մը չէ գործած, ազտծ է սպարզայէս, որ մեղք մը եւս չթաղուի մեր նուիրապետական կարգերուն վրայ եւ, նախանձախնդիր մարդու իր այդ ոգին յարգալիք տրամազրուութիւններ արթնցնելու փոկարէն՝ պատճառ դարձած է Աստուծոյ առեւնը մաքսատունի վերածած աղանդամոլներուն դայրազնած լրբութեան:

Բանաստեղծ մեր հին սուրբերէն ետք, սրբակենցաղ Վարուժանի եւ Մեծարենցի օրերէն առդին, թերեւս կարելի չէ հայ գրականութեան մէջ գտնել ուրիշ անձնատրուութիւն մը, որուն վաքքը այնքան անարատ ըլլար, որքան եղաւ Փաղ Յակոբեանի վարքը իր կեանքին մէջ եւ մեր արժէքներուն ու աւանդներուն նկատմամբ: Վերջին անձերէն մէկը, որուն վրայ ձեռք բարձրացնելու համար արդար պատճառներ չեն կրնար ունենալ մարդիկ, կտրցնող պատճառներ միայն կրնան ունենալ թէ՛ Աստուծոյ մեր այսօրուան պաշտօնեաները եւ թէ՛ տատուածահաճոյ գործերէ հեռու անոնց պաշտպան հրոսակները:

Բայց ա՞յս մարդոց ձեռքը «ջանի» դրաւ Փաղ Յակոբեան եւ բարութեան եւ մարդկայնականութեան ճանապարհներուն շերտքի հրաւերներ ուղղեց անոնց:

Ասոնց համար Վերստպաշուկը՝ խորհուրդներ գտաւ ու քնարերգեց: Եման արարածներու հաշտ՞յն «Հայաստանի» կը տրոփէ շարունակ:

Հայ բանաստեղծի մը վրայ ձեռք բարձրացուցած հոյ մարդոց այս արարքը հոս կ'արձանագրուի իրրիւ սրբապղծութեան եսերեկի նմոյշ:

## ԲԱՆԱՍՏԵՂԾ ԺԱԳ ՅԱԿՈՐԵԱՆ

ՅԱՐՁԱԿՈՒՄԻ ԿՆԵՐԹԱՐԿՈՒԻ

ԵՂԵՄԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԸՄԷՁ

Այս տղևը ու այսպանկի յարձուկումը տեղի ունեցած է Շարաթ, 8 Սեպտեմբեր 1973ին, ի ներկայութեան քահանայից դատուն եւ նոյնինքն էղմիածնական Արեւմտեան Թեմի Առաջնորդին, որ տեղեակ ըլլալով հանգերձ ըզրջովակին մէջ շարունակուող յարձակման, ի գործ չէ դրած իր հեղինակութիւնը՝ միջամտելու եւ կարգի հրահրելու իր հօտը:

Կիրակի 9 Սեպտեմբերին տեղի պիտի ունենար քահանայական ձեռնադրութիւն Եղեմի Ս. Աստուածածին Եկեղեցոյ մէջ. Շարաթ իրեկուն: Կոչման արարողութեան աւարտին, «Նրքայք խաղաղութեամբքէն ետք, Ժազ Յակոբեան՝ նախնձախնդիր Հայց. Եկեղեցոյ սրբութեան եւ օրէնքներուն՝ Խօսք կ'անէ, յուսարանելու համար հասարակութիւնը, որ յաջորդ օր տեղի ունենալիք քահանայական ձեռնադրութիւնը դէմ է քրիստոնէական վարդապետութեան եւ Հայց. Եկեղեցոյ կանոններուն ու բացարձակապէս ապօրինի, քանի որ քահանայական թեկնածուն ամուսնալուծուած ու վերամուսնացած ըլլալով, իրաւունք չունի եւ արժանի չէ ո՛չ միայն քահանայ ձեռնադրուելու, այլեւ սարկաւազ ըլլալու եւ ծառայելու Աստուծոյ ու ժողովուրդին՝ եկեղեցականի հանգամանքով:

Երբ Ժազ Յակոբեան կը յայտարարէ, թէ ձեռնադրութիւնը ապօրինի է եւ թեկնածուն արժանի չէ քահանայութեան, բողոքութենէն մէկը կը դռչէ. «Մեմք Վեհափառ Հայրապետէն արտօնութիւն ունինք»: Որուն Յակոբեան կը պատասխանէ. «Աստուած Կաթողիկոսէն քարձր է»:

Անմիջապէս այր ու կեն, տարեց ու երիտասարդ կը շրջապատեն Ժազ Յակոբեանը: Եւ Հրհրելով ու քաշքշիւով զայն կը հանեն դուրս՝ շրջափակ, ուր քրիստոնեայ Հայ ժողովուրդ մը յանկարծ խուժանի վերածուած կը սկսի հարուածներ տալ բանաստեղծի կուրծքին, ուսերուն եւ կրնակին, մինչեւ որ զայն բակէն ալ դուրս կը ստիպեն՝ հայհոյանքներով ու ձեռքով հեռուելու: Այս տղեղ ու տղէտ յարձակման ընթացքին բիրտ հարուածներ կը ստանան Ժազ Յակոբեանի աներձագը՝ րժ. Շ. Սեյճեան եւ իր որդին, որոնք կը մանային առանց հակադարձութեան պաշտպանել Ժազ Յակոբեանը խուժանի անորակելի արարքին դէմ: Իսկ Տիկին Շ. Սեյճեանի հասցէին նոյնպէս կ'ուղղուին ո՛չ հայու եւ ոչ ալ քրիստոնեայի վայել անարդական արտայայտութիւններ:

Յուալի է, որ ոչ մէկ տեղացի հայորդի փորձ չի կատարեր զանոնք սղատելու ամբոխին ձեռքէն: Ո՛չ իսկ թեմին հովիւր, որ չ'երեւիր:

Իրարանցումին վերջ գանելէն յետոյ միայն վրայ կը հասնի ոստիկանութիւնը, քննելու եղելութիւնը եւ խնդրոյ առարկայ անձերուն «վտանգաւորութիւնն» ու ինքնութիւնը հաստատելու:

(«Ասպարէզ», 21 Սեպտեմբեր 1973)

### «ԲԻՒՐՈՎՐԱՏԻՋՄԻ ԵՒ ՔԱՇՔՈՒՔԻ ՓԱՍՏԻ ԱՌԱՋ»...

ձիւղ բսած չենք ըլլար, երբ ընդդէնք, որ հրատարակչական մեր ար-  
ւեստը անորակ մակարդակի մը վրայ կը գտնուի այսօր եւ քանակական ա-  
ռոււմով արհամարհելի է Հայրենիքի թէ Արտասահմանի մէջ դիրքի մեր ար-  
տագրութիւնը :

ձիւղ բսած չենք ըլլար նոյնպէս, եթէ ընդունինք, որ արուեստի գոր-  
ծերուն եւ գասական հեղինակներուն առիթով մեզի ընծայուած հրատարակ-  
չական հաճոյքը կը կրկնուի նաեւ նոր եւ մասնաւորաբար կրիտասարդ ստեղ-  
ծադործողներու երկերուն հետ :

Նոն հրատարակչական ունինք, բայց զուրկ ենք նախաձեռնութենէ, ու-  
րով՝ կամայականութիւններու ենթակայ, հոս՝ նախաձեռնելու առիթ ու-  
նինք, բայց զուրկ ենք ընթերցող զանգուածէն, որով՝ յուսարեկութեանց  
դատապարտուած :

Մեր դժնդակ կացութեան գիմաց հայրենի հրատարակչութիւնը միւի-  
թարութիւն մը նկատուած է բոլորին կողմէ, բայց միշտ արուեստը եղած չէ  
այդ հրատարակչութեան զեկամար սկզբունքը, ու արգար՝ անոր տնտեսու-  
թիւնը : «Հայաստան» հրատարակչութիւնը յաճախ եւ անաւոր չափով մը կը  
մտնէ իր գրամագլուխը իր «չուրջ» զեղերող ներսի եւ զուրսի ծառայամիտ  
ոչնչութիւններու անկնիք գործերուն վրայ : Պաշտօնական տեղեկադիրներու,  
առանձին գրքայիններու կամ թերթերու մէջ ընթերցողը կը կարգայ, օրինակ,  
որ «Շուտով Հայաստան» հրատարակչութիւնը լոյս կ'ընծայէ երիտասարդ  
բանաստեղծի առաջին ժողովածուն», կը կարգայ ու կը սոցասէ խոստաց-  
ւած գիրքին, կը սպասէ մէկ տարի, երկու, բայց ո՛չ գիրքը կը հասնի, ոչ  
ալ անոր մասին ուրիշ տեղ ակնարկութեան կը հանդիպի : Փոխարէնը, սա-  
կայն, կը կարգանք ուրիշ բան, աւելի իրազեկ եւ արտցա մարդոց արտունջը.  
«Ժամանակն է մտածելու, որ իսկական բանաստեղծները փոխարէն յա-  
նախ տղագրութիւններու հնարաւորութիւն է արուսմ ապաշնորհ, պնդաճակատ  
մարդկանց : Ռոմանտիկ, եթէ մէկին արուսմ է գրելու շնորհքը, միւսին՝  
իմրագրութիւններու ու հրատարակչութիւններու դռները մաշելու, նման ան-  
ուով հեշտութեամբ տպագրութիւն շնորհքը :

Իրենց յարաբերական գործունէութեան մէջ ամէնուրե՛ք շնորհալի այդ  
«ապաշնորհներ»ուն եթէ վարկ չբանար «Հայաստան» հրատարակչութիւնը եւ  
տարրեր ճակատներու վրայ պիտանի այդ «պնդաճակատ»ներուն անպիտան  
գործերուն դէմ ճակատ յարդարէր, ճշմարիտ իր կոչումին ծառայած կ'ըլլար  
հարկաւ եւ արքան խոր դժգոհութիւններու առիթ չէր տար : Դեռ վերջերս,  
Հոկտեմբեր 23ին, Հայաստանի Գրողներու Վարչութեան հերթական նիստին,  
արձանագրութեացա շատ բան բացատրող սա տխուր դիտողութիւնը.

«Գրքի անագրերը հրատարակչութիւնում անցնում են բազմաթիւ օ-  
ղակներով, եւ հեղինակը կտնջում է քիւրակրատիզմի սւ քաշէշուքի փաստի  
տուպ : Գրքերը երբեմն հրատարակչութեան դարակներում մնում են 7-8 տա-  
րի ծւ լոյս տեսնելուց յետոյ այլեւս ուրախին չեն լինում ո՛չ ընթերցողի, ոչ  
հեղինակի համար» :

7-8 տարե՛ր : Եւ դեռ 7-8 տարեկն աւելի ժամանակ «ծնատղներ» ալ  
կան...

Ի վերջոյ հասկնանք սակայն. առիկա հրատարակչակա՞ն դործ է, թէ  
աւարեկչական...



### «ՊԱՏՆԵՑԻ ԱՅՍ ԿԱՄ ԱՅՆ ԿՈՂՄՈՒՄ»

Հայաստանի ծառայողականության վարչակազմի ղեկավարները, Վաղգին Մնացականեան, «Սովետական գրականության» ամսագրի ղեկավարները, Հոկտեմբերի համարին մէջ ստորագրած է իտալականի սխրամբը՝ անուն տասնութէկ իջնոց մանրատառ յորուած մը, ուր, 1959 թուականին «Յարաբեր», իմա՝ Իտալականերու լոյս բնծայած «Աւետիքի իտալականի մամակները» հատորը քննութեան նիւթ կը դարձնէ ան, յանդիտու համար առաջին տողէն իսկ կոտորելի այն եզրակացութեան, որ՝

«Իտալականի կոլուր՝ յամառ, տեսական ու ծանր, եղի է պատմէշի այս կամ այն կողմում գտնուելու երկրներում: Յողթեց այս կողմը, այս սինքն՝ մեծ քաղաքացին ու բանաստեղծը»:

Որպէսզի անելի պարզ ըլլայ յողթական այս կողմին «յողթականը»՝ անհրաժեշտ է կարգաւ նաեւ քննադատին բռնութիւնը մեղադրուած Իտալականի սա համոզումը:

«Հայկեմիտում իտալականը շատ շուտով խորապէս համոզուեց, որ բոլորէն ու հայրենիքը մի ամբողջութիւն են կազմում եւ ինքն էլ դուրս չէ այդ ամբողջութիւնից, որ բոլորէն ու ժողովուրդը իրար հակառակ ձեռք չեն, այլ բախտաւոր մի միասնութիւն, որին եկել է խառնուելու նաեւ ինքն»:

Պատմէշի «այս կողմը» (յողթեց) անցնելէ ետք՝ այն ո՞ր գրողին սեփական համոզումը առանձին երանգ ու նշանակութիւն ունեցած է արդեօք, որ Մնացականեան այս լրջութեամբ կը խօսի ընթերցողին հետ: Մնաց որ, քննադատը, ինչպէս իրենք կ'ըսեն՝ խնամքով թաքցրել է «այն կողմի» ապրած Իտալականի խոհերը, որոնցմէ կ'արժէ կարգաւ նմոյշ մը, արձանագրուած գեղարտիստական մասլէն ժէկուկէս տասնամեակ առաջ, 1923ին:

«Այդ շնորհի հետ գլուխ ելնելը դժուար է, նոյնիսկ անկարելի. ո՛չ օրէնք կայ, ո՛չ դատ, միայն տեսք: Մի լաթի կտոր՝ միտնուածներին արիւննակ կարմրեցած՝ շինել են մի փետիշ, տակը մի յիւմար, անեթեթ գաղափար մոնղոլական, անգիտական, նախնական-ամասնական կոմունիզմ, որին իբրև բանալի՝ սերունդներ ու կուլտուրաներ են գոհում՝ շնախտեւելով, որ սրա վերջը յանգնելու է մի չտեսնուած ուժեղ ցարիզմի, մի ազգայնական (Ռուսիայի... եւ դեռ Լեմինին հոշակում են հանճար: Ոնրագործ անուղիւրիտներն են՝ նոյնիսկ հակառակ իրենց մարտիզմի: Թաղեցին ամէն բան, ե՛ւ սոցիալիզմ, ե՛ւ դեմոկրատիա, ե՛ւ ապագայի հաստ, ե՛ւ երազ»:

Բոլորէնիներու գործունէութեան ի լուր հետաւոր Վենետիկի մէջ այդքան դառնութիւն ապրած մարդը, երբ հետադարձին ուղղակիօրէն ու սաստկօրէն սպրեկաւ նաեւ ստալինեան թանձրամած մասլէր՝ մարդկօրէն կրնա՞ր արդեօք յանդիլ այն համոզումին, որ «Հայրենիքն ու բոլշեւիզմը մի ամբողջութիւն են կազմում»:

Այո՛, կրնան, Իտալականը կրցաւ՝ կ'ըսէ Վաղգին Մնացականեան, առանց անդրադառնալու, որ նման պնդումներով նախանձելի կացութեան մը մէջ չի դնել իր հերոսը, օրովհետեւ այդքան կարճ տեսողութեան մը ընթացքին հակասութիւնը ա՛յդ ծայրայեղութեան հասցուցած մարդերը միշտ, ու մեղմ ասած՝ եղած են կա՛մ հացկատակները, կամ ահարկու իշխանութեան մը սակ ապրած դողահար խլեակները:

Վաղգին Մնացականեանի յորուածին առիթով՝ այդ ամէնուն մասին մենք դեռ երկար կը խօսինք...

### ՎԵՑ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ...

Յիսուսին այս թիւին հետ կը վերջանայ «Լիքանանիամ անմիջակամ քանասնդոսիւնք» անուն մեր երեսասարդ աշխատակիցին երկարաշունչ դրութիւնը, որ մեր հիւրընկալներուն գրականութեան յաջորդական հանգըր-ւանները մեր յեզուով պատկերացնող առաջին լուրջ փորձն է :

Մտտե՛ք հետեւ մեր բոլոր ընկերացողները վառ հետաքրքրութեամբ մը հետեւեցան զխական մտեցումով մը պատրաստուած Կիրակոսեանի այս յօդուածաչարքին, որուն խոստացած ծանօթութիւններուն շնորհիւ արարական գրականութեան հին ու նոր դէմքերէն շատերը պարզ անուններ չմնացին մտքերուն մէջ, այլ դարձան միտ ու ոսկոր ունեցող իրական ու հետաքրքրական տիպարներ :

Արձանագրելով մեր գոհունակութիւնը, կ'ուզենք ընթերցողին յայտնել, որ «Բագին» ծրագրած է մեր գրականութեան եւ երեսասարդներուն ուժբարձ մշակոյթներուն մտաբանի մը արժէք գրականութիւններ եւ ներկայացնել հանրութեան, աղիւստութիւններու եւ փոխաղիւստութիւններու կենսական հարցը լայն քննարկման ենթարկելու հետաւոր երազ մը փայտաշէնով :

Այսօրուան հայ գրականութիւնը բերքն է զիտաւորաբար վեց տարրեր մշակոյթներու՝ առեւտրական, Փրանսական, անգլո-ամերիկեան, արարական, պարսկական եւ թրքական մշակոյթներուն հետ ուղղակի կապ ունեցող զրոյցներու : Իր զիտաւոր գիծերուն մէջ ներկայացուցաւ արարական գրականութիւնը, նոյնպէս եւ պիտի ներկայացուին միւսները, միշտ, ի հարկէ, համապատասխան պատրաստութիւն ունեցող մտաւորականներու կողմէ :

Ինչ քորերախոսութիւն, որ տեղական ժողովուրդներու զուակներուն համահասար ճանաչումներու եւ գրելու կարողութեան տէր տղաք ունինք այսօր ի սփիւռս աշխարհի, դասախօսի ամպիոններ, թերթերու սիւնակներ գրուած ու մղանակներ իրած ուժեր, որոնք լայնաշունչ տարողութեամբ մը կրնան եւ պէտք է մասնակցին իմացական մեր ընդհանուր մտահոգութիւններուն :

Յիշեցինք վեց տարրեր լեզուներով մշակուած վեց տարրեր գրականութիւններ, որոնց ծանօթացման համար ոչ ոք կրնայ ուրիշ մը պահանջել եւթը լեզուներու գիտութիւն, եթէր տարրեր երկինքներու ներքեւ ասորոզ երիտասարդները իրենք պիտի կատարեն այդ աշխատանքը, առանց որուն կարելի չէ համարժեցիկ զատել մամանակակից հայ գրականութիւնը եւ յանգիլ արդար եզրակացութիւններու :

Նոյն երկրին մէջ ապրող եւ տուեալ գրականութեան ծանօթ մարդը այս իսկ պատճառով բարոյական պարտաւորութեան տակն է այսօր իր ճամարտութեան բաժին հանելու անոնց, որոնք տարրեր կլիմաներու տակ կազմուած են եւ հնարաւորութիւն չունին ուղղակիօրէն հաղորդուելու օտար գեղեցկութիւններուն :

Մեր հասարակաց լեզուն վերոյիշեալ վեց լեզուներէն եւ ո՛չ մէկն է, մէր լեզուն է...

**«ԲԱԳԻՆ»Ի 1973-Ի ԲՈՎԱՆՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ**

Հեղինակ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻԻ
<b>Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Թ Ի Ւ Ն</b>		
Ա. ԱԼԻՔԵԱՆ	Բարաբրին կայնց	1-2
Մ. ԹԱԻՐԻԶՅԱՆ	«Եւ եղև խաւար»	1-2
» »	» »	10
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Անտառային համանուագ	1-2
» »	Անհանդարտ պրմատ	3
» »	Տիրութեան գրան վրայ	3
» »	Ստուերս բրած ինծի բնկեր	3
» »	Քսանթիկոգերորդ ժամը	3
» »	Օսմանեան կայսրութեան վերջին մունետիկին հետ	7
Է. ՍԱՐԱՅԵԱՆ	Երկու բուռ	1-2
» »	Առաջին տաղը	8
» »	Դուն մեկնեցար երէկ առտու	8
» »	Մեռնողը	8
Ա. ԳԱՐԱԼԷՔԵԱՆ	Լուսարծակ	3
» »	Մեր ծնունդը	7
» »	Նարնջագոյն մկրտութիւն	7
» »	Հաղորդուելէ առաջ	7
» »	Դուն՝ այբուբեն կենսապայման	7
» »	Յուցածհանդէս	12
Ա. ՆՈՒՐԵԱՆ	Յարպազած մարգարէն	4
» »	Յայտադրիւր	6
» »	Շիշը	9
» »	Անգրապարտ	9
Ժ. ՅԱԿՈԲԵԱՆ	Գացէ՛՛՛	4
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Անէութեան հետքերով	4
» »	Ի համբոյր արութեան	6
» »	Անտառային	7
» »	Օտարականի պէս	9
» »	Անհարսնացեալ մտքմտութիւն	9
» »	Հրաշալիք ուրբորդ	9
» »	Երգ՝ մտարումներու բողբոջածման	12
Մ. ԹԷՕԼԷՕԼԵԱՆ	Փառք իր վաստակիմ	5

Հեղինակ	ԽՈՐԱԳԻՐ	Թիվ
Գ. ՊԵՂՏԵԱՆ	• • •	6
» »	Մեհեիր	11
Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ	Արդարութեամբ աջը	6
Ա. ԵՐԿԱԹ	Վրիժառու	6
Յ. ՆԱԳՈՒԼԵԱՆ	Պատերազմը	8
» »	Հին երազ	8
» »	Անբջանք	8
» »	Մկրտություն	8
» »	Ամեն շուն մտան է մի ռասիկաթի	11
» »	Քրիստոսից	11
» »	Վերջին բաժակ	11
» »	Զարթնելու պահին	11
Պ. ՍԵՒԱԿ	Երգ երգաց	10
Ն. ՇՆՈՐՀԱԼԻ	Յիշեսցա՛ւք ի գիշերի	12
» »	Զարթի՛ք, վառ՛ք իմ	12
» »	Ի բլու հայցեմք	12
» »	Նորահաշ առաջադր	12
» »	Ղեկավարեմք	12
» »	Ի սուրբ Հոկտեմբեր	12
» »	Ի սուրբ Հոկտեմբերամս	12
Ե. ԶԱՐԵՆՑ	... Նարեկացի, Շնորհալի...	12

Ա Ր Զ Ա Կ

Ս. ՍԱՆԻՆԵԱՆ	Սև զգեստով կինը	1-2
Ա. Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ	Խոզերը, ամ եւ այդ միւսերը	1-2
» »	Քիչ մը երազ, կամ՝ դուք արեւը չուզեցիր բռնել	4
Ն. ՎԻՐԱՊԵԱՆ	Weekend	1-2
» »	Պիտի գայ, աղջիկս, պիտի գայ...	6
Ա. ՔԵՆՏԻՐՉԵԱՆ	Դառը	1-2
Ա. ԱՅՎԱԶԵԱՆ	Բոլորո	3
» »	Ձիերին յատկացուած ժամանակը	3
Ս. ՓԱՆՈՍԵԱՆ	Սրբազան անպարարություն	3
» »	» »	4
ՆԱԶ ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ	Անապատը	4
Հ. ՊԵՕԼ	Աշխատանքի հաստիքն անկումը	4

Հեղինակ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻԻ
Բ. ԿՈՒՆԵԱՆ	Տպագրութիւններ	8
» »	»	7
» »	»	9
» »	»	10
» »	»	11
» »	»	12
Ա. ՇԻՐԱԿԵԱՆ	Կտակն էր նահատակներուն	6
Պ. ՍՆԱՊԵԱՆ	Ատրճանակը	6
» »	Թատերգութիւն մէկ արարով	10
Կ. ՍԱՍՈՒՆԻ	Հորիզոնէ հորիզոն	7
» »	» »	8
» »	» »	9
» »	» »	10
» »	» »	11
» »	» »	12
Ա. ՀԱՅՊԱԶ	Որոշմանն ու Թէոդորի ազանքները	7
Յ. ԿԱՐԱՊԵՆՑ	Օրիորդ Անթառամ	8
Վ. ՕՇԱՊԱՆ	Երեք վայրկեան	9
Ա. ԱԳԱՄՈՎ	Փռոփ. Թարան - Թրգմ.՝ Վ. Դանիէլեան	9
ԵՒ. ՊՕՆԱՃԵԱՆ	Օրագիր	11
ԺԱՆ ԺԸՆԷ	Ազատիները - Թրգմ.՝ Է. Սարահան	11
» »	» » »	12

Ի Մ Ա Ց Ա Կ Ա Ն Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ

Մ. ԱՐՄԷՆ	Յարգելի բարեկամներ	1-2
Ն. ՍԱՐԱՖԵԱՆ	Մեր դարը իր հագերով, փրանսական գրականութեան մէջ	1-2
» »	Խոստովանութիւնը գրականութեան մէջ	3
Ա. ՏՕՆՈՅԵԱՆ	Կրահամ Կրիմ եւ իր «Զօրութիւնն ու փառք»	1-2
» »	Ա. Հայկազ	5
Լ. ՄԿՐՏՉԵԱՆ	Վասպուրականի միջնադարը մենագրութեան մէջ	4
» »	Ս. Կիրակոսեանի «Այս է արիւն ին՝ գիրքը	7
» »	Արժէքների վերագնահատման նամակարհիմ	8
» »	Ո՞վ է նշմարիտը	10

Հեղինակ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻԻ
Մ. ԷՍԼԻՆ	Սամուել Պէէէթ — Թրգմ. Բ. Ճինսպաշեան	1-2
> >	> > >	3
> >	> > >	4
> >	> > >	6
> >	> > >	7
> >	> > >	8
Յ. ԿԱՐԱՊԵՆՅ	Բողոք՝ Նշան Պէշիկբաշիեանի մահուան առթիւ	1-2
> >	Արամ Հայկազին, սիրով	5
Ն. ԶԱՐԻՈՒՏԵԱՆ	Նշան Պէշիկբաշիեան	1-2
> >	Ն. Սարափեանի «Միջերկրական»ը	3
> >	Արամ Հայկազ	5
> >	20րդ դարու հայ մեծագոյն վիպասանը՝ Յ. Օշական	7
> >	Յ. Կարապետեանի «Կարթագէնի դուստրը»	11
Ռ. ՄԸՔՆԱՄԱՐԱ	Ի՞նչ է տաղանդը՝ առանց արտայայտութեան միջոցի	3
Փ. ՊԵՆՇՈՒ	Զրոյց՝ Ժան-Փոլ Սարթրի հետ, Հայացուց՝ Տ. Ոսկունի	4
Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ	Ո՞վ է մտաւորակներ	4
Յ. Խ. ՄԱՐԳԱՐԵԱՆ	Հայ գրականութեան երկու կորուստները՝ Ն. Պէշիկբաշիեան եւ Ն. Սարափեան	4
Կ. ՍԱՍՈՒՆԻ	Վարձեղ կատար	5
Պ. ՍՆԱՊԵԱՆ	Ինքը, իր աշխարհը եւ արուեստը	5
> >	Մաշտոցի սկզբունքով	8
> >	Համօ Մանեանի «Սեզամ, բացուի՛ր»ը	10
Ա. ՀԱՅԿԱԶ	Իմ իօսքը	5
Զ. Լ. ՍԻՐՄԵԼԵԱՆ	Սիրելի Արամ Հայկազ	5
Ա. ՆՈՒՐԵԱՆ	Արամ Հայկազ «Քիւրտիստանի յեռներում մէջ»	5
> >	Վերջին ձեռքը	6
> >	Ուժի գիտակցութեան դիմաց	7
> >	«Էլի» հետաքրքրական բանաստեղծութիւն մը	8
Բ. ՓԱՓԱԶԵԱՆ	Հանդիպումներ Ա. Հայկազի հետ	5
> >	Գուակն էր Արշաւիրին	6
> >	Մ. Պապեանի «Անկարելի կարելին»	7
> >	Ա. Յովհաննէսեանի «Պարոյր Սեւակ» ձայնապնակը	9
> >	Վ. Խորշեանի «Արեւելեան առամնաբոյժ»ի բեմադրութիւնը	12

Հեղինակ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻԻ
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Հայրենաբազմաթեան քնարերգուն	5
ՇԱՀԱՆՆՈՒԽՅ	Գարաիսարի գինովը	5
Գ. ԱՐԷԼԵԱՆ	Եթէ...	5
Է. ՍԱՐԱՃԵԱՆ	Կեանքական գրականութեան հեղինակը	6
» »	Ժամ ժրմէի «Ազախիններ»ը	11
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Յիրաւի սիրտդ «պանդուկ մըն է»	5
» »	Նշմարներ արաք գրողներու	
	համագումարին առիթով	6
» »	Լիբանանեան անմիջական բանաստեղծու-	
	թիւնը	8
» »	» » »	9
» »	» » »	10
» »	» » »	11
» »	» » »	12
Գ. ՃԻՆՊԱՇԵԱՆ	Բախտուար է...	5
» »	Ա. Ազամովի «Փրփրեւոր Թարան»ը	9
Փ. ՏԷ	Ինչ որ գիտեմ Սպիտակիցի մասին, Հայացուց՝ Տ. Ո.	6
Վ. ՕՇԱԿԱՆ	Յ. Օշական՝ տիրական դէմք մը հայ վկային	7
» »	Հայկականութեան մասին	8
Գ. ՊԸԼՏԵԱՆ	Հեռացում-մտտեցում-երկնում	7
» »	Յ. Օշականի վկայը	7
Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Հայկականութեան հարցը գրականութեան ներս կամ դուրս	8
Ս. ՍԱՆԻՆԵԱՆ	Պատմութեան գրական միջազգային չորս հսկաները	9
» »	Երկու խօսք ամերիկեան կարն-կարն պատմութեան մասին	11
Դ. ԻՍՐԱԵԼԵԱՆ	Ինքնատիպութեան պահպանման համար	10
Յ. ՕՇԱԿԱՆ	Ներսէս Շնորհալի	12

Յ Ո Ր Ե Լ Ի Ն Ա Կ Ա Ն Թ Ի Ի Ե Ր

1.— ՅՈՐԵԼԵԱՆ ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶԻ	5
ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ՄԻՈՒԹԻՆՆԵՐ	Կաչ
ՎԱԶԳԷՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ	Շնորհաւորական գիր

Հեղինակ	Խորագիր	Թիի
ԽՈՐԷՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ	Շնորհաւորական կոնդակ	6
ՀՐԱՆՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ	Շնորհաւորական գիր	
Հ. Մ.	Զրոյց՝ Արամ Հայկազի հետ	
«ՀԱՅՐԵՆԻՔ» ՕՐԱԹԵՐԹ	Արամ Հայկազի ի պատուի	
Ս. ՄԱՀԱՌԵԱՆ	Յորեղիմական հանդիսութիւնը Նիւ Եորքի մէջ	
Ե. ԳԱՄԱՌ	Տիրոջիքը յարգեց «անգիջող հայը»	
ԱՐԹԻ ՅԱԿՈԲԵԱՆ	Յորեղիմական հանդիսութիւնը Թորոնթոյի մէջ	
Պ. Մ.	Յորեղիմական հանդիսութիւնը Մանրէալի մէջ	
ԱՆԱՅԻՍ ԳՂՃՅԵԱՆ	Պոթըն մեծարանքի իր տարբը սուտ տաղանդաւոր գրագետին	
«ԱՍՊԱՐԷՁ» ԵՌՈՐԵԱՅ	Արամ Հայկազի յոբելեանին առթիւ	
»	Համդիսութիւնը Ֆրեզմոյի եւ Սան-Ֆրանսիսքոյի մէջ	
Ս. ՍԱՐՈՒՆԻ	Որակով՝ անվիճելիօրէն գրական յորեղիմական երեկոյթ մը	
2.— ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻԻ ՄԱՀՈՒԱՆ 800ԱՄԵԱԿԸ		
ՎԱԶԳԷՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ	Կոնդակ	12
ԽՈՐԷՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ	Կոնդակ	12

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ն Ո Ւ Ե Ր

Մրցանակներ	1-2
Մ. Աքմէն	1-2
Լուս ու լրիւ քշուառութիւն	1-2
Աղասի Այվազեան	3
Հայերիս Պէօլ	4
Լրջութեան կոչ մը	4
Ա. Շիրակեան	4



	Թիի
Աննախընթաց երևույթ մը	5
Գրական հարցեր	8
Արիւնը կը քայլ	8
Թարմանայ ման՛ւ թարգմանութիւններով	8
Իրացումներու եւ ուրացումներու գառիթափին	9
Քառոյցներու վարպետին «հայերէն» կտակը	10
Կոչ՝ կօչի մը առիթով	11
Ա. Խաչատուրեանի պարագան	11
Բանաստեղծ սուրբ մը	12
Առաջնահերթ կարեւորութեամբ	12

---

**Ն Շ Մ Ա Ր Ն Ե Ր**

---

«Իսկ մնացեալ էինք հարիւր տղարը»...	7
«Ինքնաշարժի արկածով»...	9
«Իմաստուն հասկով»...	9
«Հնարաւոր է»...	9
Հազար տփռոս	9
Այս քիչ ծանօթ քերթուածը	9
Կը զօղանջեն	10
Հոգ՝ հոգատարութեան մասին	10
Մունետիկեան արձագանգներ	10
Ո՞վ է աշդպէս յափշտակում	10
Տխուր լուրեր	10
«Տխուր ըսներ ու թախիծ»	11
Եթէ թոյլ տայ...	11
Տգեղ արարք մը...	12
«Բիրոնկրատիզմի եւ քաղաքի փաստի սոսաջ»	12
«Պատենէշի այս կամ այն կողմում»	12
Վեց լեզուներով...	12

## ՅԱԶՈՐԴ ՏԱՐԻ

Մեր անմիջական շրջապատի գրողներուն ու մտադրականներուն աշխատակցութեան առիթերը՝ յաջորդ տարուան համար «Բապի»-ի խմբագրութիւնը ապահոված է՝

1.— ԱՆՏԻՊ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յ. Օշականի, Համաստեղի, Արսէն Երկաթի, Նշան Պէշիկթաշիեանի եւ Եղուարդ Պոյաճեանի ստորագրութիւններով:

2.— ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

Արամ Հայկազէն, Զարեհ Որբունիէն, Կ. Մեհեանէն, Յ. Կարապետեան, Ս. Մանթեանէն եւ Ա. Արփիմէէն:

3.— ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԱԿԱՍԱԿԱՆ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Լ. Մկրտչեանէն, Բ. Եղիայեանէն, Վ. Օշականէն, Տ. Ոսկունիէն:

4.— ՀԱՄԱՍՏԵՂԻ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐՈՒՆ ԹԱՏԵՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, գործ՝ Բ. Փափագեանի: (Այս աշխատանքին կցուած պիտի ըլլայ նաեւ Համաստեղի եւ Փափագեանի համապատասխան քղթակցութիւնը):

5.— ՖՐԱՆՍԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ (Ն. Զարխուհան)

6.— ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ (Ն. Պէրպէրեան)

7.— ԱՆԳԼԵՐԷՆ ԼԵԶՈՒՈՎ ՄՇԱԿՈՒԱԾ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ (Ք. Ճիմպաշեան)

8.— ԼԻԲԱՆԱՆՑԻ ՆՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ (Ս. Կիրակոսեան)

9.— ԶՈՐՍ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԷՆ, ընտրուած՝ գրական մեր հասկացողութեամբ:

10.— ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՆՄՈՑՇՆԵՐ

Էօժէն Իանեսոյի «Դասը» եւ Սամուէլ Պէֆէրի «Սպասելով Կոստյին»:

11.— Պիտի ներկայացուի՞ն 1972 եւ 1973 տարեշրջաններու նայելեան գրական մրցանակաւորները, գեղամանցի Համրիխ Պէօլլի եւ աւստրիացի

12.— Այս բոլորին հետ «Բապի»-ի իրաւամէջիւր համարին մէջ ամպայման պիտի շնորհակալուե՞նք մէկ կամ երկու գրախօսական, արուեստի իրանիկ մը, նշմարներ եւ մշակութային այլազան լուրեր:

## ՎԱՐՉԱԿԱՆ ԱՋԴ



Մեր ընթերցողները բնականաբար տեղեակ են ազրուստի յարաճուն սղուքեան, որմէ գերծ չմնաց նաեւ մամուլը, մա՛նաւանդ վերջին երկու տարիներուն: Տառացիորէն կրկնապատկուեցան քուղթի, տպագրութեան, առա՛ման եւ անհրաժեշտ այլ ծախսերը, աւելի եւս ծանրացնելով գրական եանգէտի մը կապուած արդէն ծանր մեր գործը:

Մեր ընթերցողները գիտեն նաեւ, որ «Քազին» մասնաւոր փոնտ, ծանուցումի բաժին եւ եկամուտի այլ ազբիւրներ չունի եւ կը հրատարակուի բացառաբար իր ընթերցողներուն եւ բարեկամներուն գիտակից գոհաբերութեամբ:

Ուստի՝ հիմ ունենալով կեանքի հարկադրական պայմանները եւ դարձեալ ապաւինելով իր ընթերցողներուն եւ բարեկամներուն գոհաբերութեան գիտակից ոգիին, վարչաւթիւնս որոշեց «Քազին»ի տարեկան բաժնեգինը բարձրացնել 40 լ. ոսկիի, արտասահման՝ 20 տոլար:

Կը հաւատանք, որ մեր քաժանորդներն ու բարեկամները յիովին կ'ըմբռնեն մեր կացութիւնն ու պայմանները եւ համապատասխան ոգիով գորավիգ կը կանգնին մեր նիգերուն, «Քազին»ի անխափան հրատարակութիւնը ապահովելու եւ միասնաբար շարունակելու համար անոր գրական եւ մշակութային առաւելութիւնը:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



digitized by

A.R.A.R.@

ՏԱՐԻԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 25 Լ. ՈՍԿԻ  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 10 ՏՈՂԱՐ  
ՀԱՏԱՎԱԶԱՌ 2.50 Լ. ՈՍԿԻ

باكين  
مجلة شهرية ، ادبية وفنية علمية  
مدير المسؤول  
السيد آردين كارتيك فزانجيان

•

**PAKINE**  
REVUE MENSUELLE  
LITTÉRAIRE & ARTISTIQUE  
Propriétaire  
Dr. A. KAZANDJIAN

•

**Բ Ա Գ Ի Ն**  
ԱՄՍԱԳԻՐ  
ՊՐԻՆԿԻՊԱԼՆԵՐԻՔԻ  
ԵՒ ԱՐԻՏԵՍՅԵՐ

ՀԱՐՈՑ ԽՍՐԱԳԻՐ  
Գ. ՍԱՍՈՆԻ  
ԽՍՐԱԳԻՐ  
Գ. ՍՆԱԳՆԱՆ

Հեռաժամային՝ 296898

Վարչապետի հասցե

G. SASSOUNI  
Rue Sélim Boustani  
Beyrouth - Liban